| 1.       | Քենդիր կղզի (Թիվը՝ 1)                                       | Քենդիր կղզի (Թիվը՝ 1)                                       | ԱԱԾ անդամական կախյան տպաքը: Գովելում է հօտքության կենսաբնական մասի դեպի պահպանային տպաքը: Խաղաղական կրթություն:                         | Ազգերն ան          |
| 2.       | Հայանեն կղզի (Հայանեն)                                      | Հայանեն կղզի (Հայանեն)                                      | ԱԱԾ անդամական կախյան տպաքը: Գովելում է հօտքության կենսաբնական մասի դեպի պահպանային տպաքը:   | Ազգերն ան          |
| 3.       | Միոնտ առող (Թիվը՝ 1)  | Միոնտ առող (Թիվը՝ 1)  | ԱԱԾ անդամական կախյան տպաքը: Գովելում է հօտքության կենսաբնական մասի դեպի պահպանային տպաքը:   | Ազգերն ան          |
| 4.       | Նավասառ կղզի (Նավասառ)                                      | Նավասառ կղզի (Նավասառ)                                      | ԱԱԾ անդամական կախյան տպաքը: Գովելում է շարժիչաց ավազանում շահանգույթի մեջուցման, Մեծ Աստվածական կասածում:                               | Ազգերն ան          |
| 5.       | Պալմիր առող (Պալմիրա)                                       | Պալմիր առող (Պալմիրա)                                       | ԱԱԾ անդամական կախյան տպաքը: Գովելում է հօտքության ինտերնացիոն մասունք, ուստանական առաջնահաջող կյանքի:                                   | Ազգերն ան          |
| 6.       | Զապալիս (Զապալիս)   | Զապալիս (Զապալիս)   | ԱԱԾ անդամական կախյան տպաքը: Գովելում է հօտքության կենսաբնական մասի դեպի պահպանային մաս, Լավ կողմինին կատառման:                          | Ազգերն ան          |
| 7.       | Զոնգոր առող (Զոնգոր)  | Զոնգոր առող (Զոնգոր)  | ԱԱԾ անդամական կախյան տպաքը: Գովելում է հօտքության կախյան տպաքը: Գովելում է հօտքության կախյան տպաքը: Գովելում է հօտքության կախյան տպաքը: | Ազգերն ան          |
| 8.       | Ռինի կղզի (Ռինի)  | Ռինի կղզի (Ռինի)  | ԱԱԾ անդամական կախյան տպաքը: Գովելում է հօտքության կախյան տպաքը: Գովելում է հօտքության կախյան տպաքը:                                     | Ազգերն ան          |
| 9.       | Քինգան կառավարք (Քինգան կառավարք)                           | Քինգան կառավարք (Քինգան կառավարք)                           | ԱԱԾ անդամական կախյան տպաքը: Գովելում է հօտքության կախյան տպաքը:   | Ազգերն ան          |
| 10.      | Աշուր և Կարստն կղզիներ (Աշուր և Կարստն կղզիներ)             | Աշուր և Կարստն կղզիներ (Աշուր և Կարստն կղզիներ)             | ԱԱԾ անդամական կախյան տպաքը: Գովելում է հօտքության կառավարքը և հնդին- վայի պիզու:  | Ազգերն ան          |
| 11.      | Հերո կղզի և Մակրոմաս կղզիներ (Հերո կղզի և Մակրոմաս կղզիներ) | Հերո կղզի և Մակրոմաս կղզիներ (Հերո կղզի և Մակրոմաս կղզիներ) | ԱԱԾ անդամական կախյան տպաքը: Գովելում է Հնդկա- կան օվկիանոսի հարավային, Աստրափերփայի միջա- կարգը:  | Ազգերն ան          |

|            |  |  |  |   |                   |
|------------|--|--|--|---|-------------------|
| <i>շ/հ</i> | <i>Թիկուրքաց<br/>առևտնաբան</i>   | <i>Տառած-<br/>պիտուղ-<br/>մազար<br/>կուլ-<br/>լիք</i><br><i>(2017թ.)</i> | <i>Բնակչու-<br/>թութեա-<br/>նակար-<br/>ութիւնը<br/>լիւն-<br/>գույք</i> | <i>Վարականական<br/>կինդուկի-<br/>թիւնիւնը-<br/>հազար<br/>տասնյա</i> | <i>Լիդու</i>      |
| 12.        | Կորպարամ Ծովի<br>կղզիների Տարածք<br>կղզիների Տարածք                                      | 780 000,<br>որից՝<br>ցանքը՝<br>10  | 0,0  | 0,0   | 0,0               |
| 13.        | Ալրասուրի և Կենելիս<br>հերթական Հմանական<br>կղզիների և<br>կղզիների Տարածք                | 254  | 15,7<br>(2012թ.)   | 61,9  | Երկար-<br>կութիւն |
| 14.        | Բիլիոնանգան<br>Ամստարի ԲԱՏՏ<br>Տարածք (ԲԱՏՏ)   | 1 709 400  | 0,25-3,0<br>(2012թ.)   | -   | Ութերս<br>130     |
| 15.        | Հարավային Ֆրանսիա<br>Սարտար (ՖՐԱՏ)   | 3 903  | 0,03   | -   | Գրաստ-<br>վիճակ   |
| 16.        | Հարավային Ֆրանսիա<br>Սարտարի կողմէն<br>(Հարավային Ֆրանս<br>և Հարավային<br>Սարտար կողմէն) | 63,17  | 4,0<br>(2013թ.)  | -   | Դիեզո<br>Գրաստան  |
| 17.        | Բուլի կղզի<br>(Բուլի կղզի)   | 49   | 0,0  | 0,0   | 4                 |
| 18.        | Մոլ Շազդի կղզի<br>(Մոլ Շազդի կղզի)   | 2 500 000  | 0,0  | 0,0   | 0,0               |
| 19.        | Յան Մայեն կղզի<br>(Յան Մայեն)  | 377  | 0,0  | 0,0   | 0,0               |

| <i>Հ/հ</i>  | <i>Թիվառքայան<br/>անվանութեն</i>   | <i>Տարածքը<br/>ինչպէս<br/>կազմութեա<br/>լիս 1 կմ<sup>2</sup><br/>վնաս նաև</i> | <i>Բնակչու-<br/>թանը,<br/>(2012թ.)</i> | <i>Աշխատանք<br/>կիւրողու-<br/>թիւնը<br/>հազար նաւու</i> | <i>Վարչական<br/>կիւրողու-<br/>թիւնը,<br/>հազար նաւու</i> | <i>Լիգում</i>   |
|---|--|---|--|---|--|---|
| 20.   | Ըստքերթան<br>(Անպրատոց)<br><b>(Ըստքերթան)</b>  | 61 022  | 2,6<br>(2012թ.)                        | 0,0   | Լոնգիդ   | Նորմեգ-<br>ին   |
| 21.   | Պետքու 1-ինի կրթի<br>(Պետքու 1-ինի կրթի)   | 156   | 0,0                                    | 0,0   | -  | 0,0   |
| 22.   | Քիմիկուուն կրթի<br>(Քիմիկուուն կրթի)   | 9   | 0,0                                    | 0,0   | -  | 0,0   |
| 23.   | Ֆրամսունս Հայու-<br>զային և Անուանութե-<br>կան Երկրի<br>(Ֆրամսունս Հայու-<br>զային և Անուանութե-<br>կան Երկրի) | 439 781   | 0,15-0,3<br>(2012թ.)                   | 0,0   | Պորտ օ<br>Ֆրամս  | Ֆրամս-<br>ին  |
| <b>Ք. Անդունամատ պարագարան, որոնք խանդիսանում են դժվար սպասաժամանակ հետո են պարագարան սպասաժամանակ համար, սպասաժամանակ համար:</b> |  |   |  |   |  |   |
| 1.  | Հավանակ Նահանգ<br>(Հավանակ)  | 28 311  | 1 374,8<br>(2012թ.)                    | 48,6  | Հնուղութ   | ԱՄՆ նահանգ: Գոնզին է Խաղաղ օվկինիան<br>այսեւընթագ. Հավանակ կրթիւնը:   |
| 2.  | Ինքնավար Քաղաք<br>Սեբիյա (Սեբիյա)  | 1 23  | 78,5<br>(2012թ.)                       | 6380,2  | -  | Ինքնավար Խաղաղ Խաղաղնախ թագավորութեան<br>Միջնակուման ծով մաս կազմող Այրեան արևորուան<br>Եղագատական է Անուպատուի տարածք: |
| 3.  | Կամարմեն Խիբնավար<br>համայնք (Կամարմեն,<br>Կամարմայան կրթիւն)  | 7 447   | 2 218,3<br>(2012թ.)                    | 297,9   | Լաս Պարմա<br>և Գրան<br>Կամարմա<br>Սանտա<br>Կրիստինե      | Իսաբ-<br>նին  |

**Ք. Անդունամատ պարագարան, որոնք խանդիսանում են դժվար սպասաժամանակ համար, սպասաժամանակ համար:**

|            |   |   |  |   |  |   |
|------------|---|---|--|---|--|---|
| <i>Հ/հ</i> | <i>Հավանակ Նահանգ<br/>(Հավանակ)</i>                           | <i>Տարածքը<br/>ինչպէս<br/>կազմութեա<br/>լիս 1 կմ<sup>2</sup><br/>վնաս նաև</i> | <i>Բնակչու-<br/>թանը,<br/>(2012թ.)</i> | <i>Աշխատանք<br/>կիւրողու-<br/>թիւնը<br/>հազար նաւու</i> | <i>Վարչական<br/>կիւրողու-<br/>թիւնը,<br/>հազար նաւու</i> | <i>Լիգում</i>   |
| 1.         | Հավանակ Նահանգ<br>(Հավանակ)                                   | 28 311  | 1 374,8<br>(2012թ.)                    | 48,6  | Հնուղութ   | ԱՄՆ նահանգ: Գոնզին է Խաղաղ օվկինիան<br>այսեւընթագ. Հավանակ կրթիւնը:   |
| 2.         | Ինքնավար Քաղաք<br>Սեբիյա (Սեբիյա)                             | 1 23  | 78,5<br>(2012թ.)                       | 6380,2  | -  | Ինքնավար Խաղաղ Խաղաղնախ թագավորութեան<br>Միջնակուման ծով մաս կազմող Այրեան արևորուան<br>Եղագատական է Անուպատուի տարածք: |
| 3.         | Կամարմեն Խիբնավար<br>համայնք (Կամարմեն,<br>Կամարմայան կրթիւն) | 7 447   | 2 218,3<br>(2012թ.)                    | 297,9   | Լաս Պարմա<br>և Գրան<br>Կամարմա<br>Սանտա<br>Կրիստինե      | Իսաբ-<br>նին  |

| <i>Հ/հ</i>                       | <i>Պետարան<br/>սպասմանը</i>   | <i>Տառածքը<br/>ինժեներ-<br/>իուրական<br/>լինչը<br/>(2017 թ.)</i> | <i>Բնակչու-<br/>թյանը<br/>հասար-<br/>կանը<br/>(2017 թ.)</i> | <i>Վարչական<br/>կենտրոնի<br/>բնակչու-<br/>թյանը<br/>հասարա-<br/>կանը</i> | <i>Եղանակական<br/>կենտրոնի<br/>բնակչու-<br/>թյանը<br/>կայութ-</i> | <i>Եղանակական<br/>բնակչությանը<br/>կայութ-</i>  |
|----------------------------------|---|--|---|--|---|---|
| 4.                               | Էնթավար բարպար<br>Սմուսու Սյունիք<br>(Ախուսու)                                | 18,5   | 82,4<br>(2015թ.)  | 4452,8   | -   | -   |
| 5.                               | Ազգային հերճավար<br>Ուելին Այուստա<br>(Ազորինսկ)                              | 2 333  | 246,8<br>(2015թ.)   | 105,8  | 64  | Կազմակերպության հաջախառնության մասին հայոց օրենքության համապատասխան դաշտում:  |
| 6.                               | Սյանեցյանի<br>հերճավար<br>Ուելին (Առայիշա)                                    | 801  | 267,9<br>(2015թ.)   | 334,5  | 35  | Կազմակերպության հաջախառնության համապատասխան դաշտում:  |
| <b>Զ. Ինքնակատարության մեջեր</b> |   |  |   |  |   |   |
| 1.                               | Բարձրակարգ և<br>Հերցոգովինայի<br>Նաշանությունն<br>(Քարենայի<br>Գաշինքություն) | 26 096   | 2 409,3<br>(2015թ.)   | 92,3   | Սպասան  | 603   |
| 2.                               | Սերբական<br>(Մարտական<br>Համբաւություն)                                       | 24 608   | 1 326,9<br>(2015թ.)   | 53,9   | Բանյա Լուկա   | 196   |
| 3.                               | Էնումիս և Հերցոգովին-<br>նայի Բրեկոյի 21ցան<br>(Քարենայի<br>Բրեկոյի 21ցան)    | 493  | 93,0<br>(2015թ.)  | 188,7  | Բերկ  | 41  |
| <b>Բարձրակարգ դաշտում:</b>       |   |  |   |  |   |   |
|                                  |   |  |   |  |   | Բարձրակարգ դաշտում հայոց օրենքության համապատասխան կազմության մասին հայոց օրենքության համապատասխան կազմության մասին: |
|                                  |   |  |   |  |   | Անդամական բնակչության հայոց օրենքության համապատասխան կազմության մասին:  |
|                                  |   |  |   |  |   | Անդամական բնակչության հայոց օրենքության համապատասխան կազմության մասին:  |

## 65. Աշխարհի վիճելի տարածքները

### Ա. ԵՎՐՈՊԱ

1) **Արևմտյան Սլավոնիա -** սերբերով բնակեցված տարածքը 1998 թ. ՄԱԿ-ի որոշմամբ անցել է Խորվարիային, որը վիճարկվում է Սերբիայի կողմից:

2) **Բարենցի ծովի մայրցամաքային շելֆ -** ըստ Նորվեգիան շելֆի բաժանարար գիծը պետք է անցնի գոյություն ունեցող սահմանից դեպի արևելք ընկած գծով, ինչը 155 հազար կմ<sup>2</sup>-ով կավելացնի Նորվեգիայի ծովային տարածքները Բարենցի ծովում: Ուստատանք չի ընդունում այդ գաղափարը:

3) **Բոդենի լիճ -** գտնվում է Կենտրոնական Եվրոպայում, նախաալպերում: Միակ մարզն է Եվրոպայում, որտեղ չկան թեկուզ ձևական սահմաններ, քանի որ չկա որևէ իրավական համաձայնագիր, որով որոշված է սահմանը լճում՝ Գերմանիայի, Ավստրիայի և Շվեյցարիայի միջև: Նրանցից յուրաքանչյուրն իր տեսակետն ունի:

4) **Բունիա և Հերցոգովինայի արևելյան հատված -** սերբերով բնակեցված արևելյան տարածքը մինչև Դրինա գետը վիճարկում է Սերբիայի կողմից:

5) **Գարչիկովո ջրամբար -** Դանուք գետի վրա գտնվող այս ջրամբարի պատկանելիությունը վիճարկում են Հունգարիան և Սլովակիան:

6) **Էգեյան վեճ -** Հունաստանի և Թուրքիայի միջև ազգային օդային տարածության, տարածքային ջրերի և տնտեսական գոտու վիճելի բազում հարցերի շարք է: 1987 և 1996 թվականներին Էգեյան վեճը ճգնաժամային իրավիճակ է ստեղծել, որը հղի է եղել պատերազմական գործողությունների սկսումով:

7) **Էմսի գետաբերան և Գոլլարտ ծոցի արևմտյան մաս -** վեճ Նիդերլանդների և Գերմանիայի միջև: Երկու երկրները չեն պայմանավորվել Ղոլլարտ ծոցի ջրերով և Էմս գետի գետաբերանով ողողվող տարածքի ճշգրիտ սահմանների շուրջ: Վեճը ձեռք է բերել արդիականություն հատկապես այն բանից հետո, երբ առաջ եկավ մի նախագիծ, ըստ որի պետք է հողմաղաց կառուցվեր Գերմանիային պատկանող Արևելյաֆրիզյան կղզիների մեջ մտնող Բորկում կղզում:

8) **Իմիա կամ Կարդակ -** 2 անմարդաբնակ կղզիները կազմում են Էգեյան վեճի մի մասը: Կղզիները 1946թ.-ին անցել են Հունաստանին, սակայն Թուրքիան հավակնություններ ունի կղզիների նկատմամբ:

9) **Իվանգորոդ և Պեչորիի շրջան -** քաղաքը գտնվում է Նարվա գետի աջ ափին, Էստոնական Նարվա քաղաքի դիմաց, ունի 10,4 հազար բնակիչ: Շրջանը վարչականորեն մտնում է Ո-Դ Պուկովի մարզի կազմի մեջ և գտնվում է նրա արևմուտքում: Այս տարածքները 1920 թ. Տարտուի համաձայնագրով անցել են Էստոնիային, սակայն հետագայում անցել են Ուստաստանին և

ԽՍՀՄ փլուզումից հետո տարածքները մնացել են ՈՒ կազմում: Էստոնիան հավակնություններ ունի դրանց նկատմամբ:

**10) Լոխ Ֆոյլ - 1922 թ. ի վեր, ինչ տեղի է ունեցել Իոլանդիայի և Հյուսիսային Իոլանդիայի (որպես Միացյալ Թագավորության մաս) բաժանումը, այս ժողով վեճի առարկա է դարձել: Ծովածոցը գտնվում է Իոլանդիա կղզու հյուսիսում, Ֆոյլ գետի գետաբերանում: Ատլանտյան օվկիանոսի հետ միանում է նեղ նեղուցով: Մինչ օրս այն սահմանային վեճ է Իոլանդիայի և Միացյալ Թագավորության միջև:**

**11) Ծովային սահման -** Լատվիան և Լիտվան վիճում են ծովային սահմանի որոշման համար, քանի որ մայրցամաքային շելֆում կա հեռանկարային նավթի հանքավայր: Եվրոմիության անդամ դառնալուց հետո վեճը սառեցվել է, քանի որ ԵՄ անդամ չեն կարող դառնալ այն երկրները, որոնք միմյանց նկատմամբ տարածքային պահանջներ ունեն:

**12) Ծովային սահման -** Մինչ օրս Սլովենիան և Խորվաթիան չեն կարողանում որոշել ծովային սահմանը և ծովային գոտու աշխարհագրական տեղադիրքը:

**13) Կարելիա և Մուրմանսկի մարզի արևմտյան հատված -** Ֆինլանդիայի ռադիկալ ուժերը պահանջում են վերանայել գոյություն ունեցող սահմանը Ռուսաստանի հետ և վերականգնել 1920 թ. Տարտուի համաձայնագրով հաստատված սահմանները, ինչպես նաև պահանջում են վերադարձնել Կարելիան և Մուրմանսկի մարզի որոշ հատվածներ:

**14) Կարինգֆորդ Լոխ -** Երեք սառցադաշտային ֆյորդներից մեկն է, որը հանդիսանում է Իոլանդիայի և Հյուսիսային Իոլանդիայի (Միացյալ Թագավորության) միջև բնական սահման: Սահմանային վեճ է Իոլանդիայի և Միացյալ Թագավորության միջև:

**15) Կոստվո -** Մասսմբ ճանաչված պետություն Եվրոպայում, Բալկաններում: Տարածքի մեծ մասը կառավարվում է Կոստվոյի իշխանությունների կողմից, Հյուսիսային Կոստվոն ինքնակառավարվող տարածք է: Վիճարկվում է Սերբիայի և Կոստվոյի կողմից:

**16) Հյուսիսային Իոլանդիա -** Միացյալ Թագավորությունը և Իոլանդիան վիճարկում են Հս. Իոլանդիայի կարգավիճակը:

**17) Պրիմ -** Աև ծովի հյուսիսային մասում գտնվող թերակղզու մեծ մասը, բացի Արաբատի լվաքի հյուսիսային հատվածի, վերամիավորվել է Ռուսաստանին, սակայն այն վիճարկվում է Ռուսաստանի կողմից, որպես իր վարչատարածքային մի միավոր:

**18) Մակեդոնիա -** Հունաստանի անդմամբ երկիրը ՍՍԿ-ի կազմում է որպես «Նախկին Հարավալավական Հանրապետություն Մակեդոնիա» անվամբ, որպեսզի այն չկապվի իին հունական մարզ Մակեդոնիա անվանման հետ:

**19) Մեծ Շկոլ և Փոքր Շկոլ կղզիներ -** կղզիները պատկանում են Բոսնիա և Հերցոգովինային, որը վիճարկում է Խորվաթիան:

**20) Մերձնեստրյան Մոլդովական Հանրապետություն -** չճանաչված պետություն Մոլդովայի արևելքում: **Վասիլևկա, Դորոցկոյե, Կոշնիցա, Նովայա Մոլտավա, Պոգրեբյա, Պիրիտա, Կոպանկա բնակավայրերը և Բենդերի քաղաքի** մի մասը (Վարնիցա ավան) կառավարվում են Մոլդովայի կողմից, սակայն համաձայն ՄՄՀ-ի վարչատարածքային բաժանման մտնում են նրա կազմի մեջ:

**21) Մոնթեն գագար -** Արևմտյան Եվրոպայի ամենաբարձր լեռան պատկանելիությունն են վիճարկում Ֆրանսիան և Իտալիան:

**22) Մոնտմալյուս պիկի շրջան -** սահմանային վեճ Իսպանիայի և Անդորրայի միջև:

**23) Շերենգրադ կղզի -** Հարավսլավիայի գոյության ժամանակ Դանուբ գետում գտնվող այս կղզին պատկանում էր Խորվաթիային: 1990-ականների պատերազմի ժամանակ վերահսկվում էր սերբական Կրախնայի կողմից: Պատերազմից հետո անցել է Սերբիայի վերահսկողության տակ, որը վիճարկում է Խորվաթիայի կողմից:

**24) Պիրան ծոց -** Ալբիատիկ ծովի հյուսիսում գտնվող ծոցը վեճի առարկա է Խորվաթիայի և Սլովենիայի միջև:

**25) Պևովի մարզի Պիտալովյոիի և Պալկինյի շրջաններ -** Լատվիան հավակնում է ընդիհանուր առմամբ 1,6 հազար կմ<sup>2</sup> մակերեսով ՈՒ տարածքին, որը 1920-1944 թթ. եղել է Լատվիայի կազմում:

**26) Պրևլակա -** այլ անվանմամբ **Ծաղիկների թերակղզին** (Երեմն-Երբեմն՝ նաև կղզի) վիճահարույց է Խորվաթիայի (նրան է պատկանում) և Չեռնոգորիայի (վիճարկում է) միջև: Այն միարձակում է Ալբիատիկ ծովի մեջ:

**27) Ջիբրալտար -** Իսպանիան պնդում է, որ տարածքը Ուտրեխտի պայմանագրի համաձայն պատկանում է իրեն, սակայն այն կառավարվում է Միացյալ Թագավորության կողմից:

**28) Ո-ազմական համային Սվետի Գերայի մոտ, Ժումբերակ մարզում -** 1181 մ բարձրության վրա գտնվող զանգվածը գտնվում է Խորվաթիայի և Սլովենիայի սահմանում: **Ժումբերակը Դինարյան լեռնազանգվածի** մի մասն է՝ Միջինդանության ցածրավայրին մոտ: Այն այժմ կառավարվում է Սլովենիայի կողմից, վիճարկվում՝ Խորվաթիայի կողմից:

**29) Ո-ոկոլլ ժայռ -** ընդամենը 570 մ<sup>2</sup> տարածք ունեցող այս անմարդաբնակ ժայռը գտնվում է Աստլանտյան օվկիանոսի հյուսիսում: Այն կառավարվում է Միացյալ Թագավորության կողմից, վիճարկվում է Իսլանդիայի, Իռլանդիայի և Դանիայի (Ֆարերյան կղզիների) կողմից:

**30) Սահմանային վեճ -** Բոսնիա և Հերցոգովինայի և Խորվաթիայի միջև չկարգավորված հարցեր կան սահմանի որոշ տեղամասերում, ինչպես նաև Բոսնիա և Հերցոգովինայի դեպքի ծով ելքի հատվածում:

**31) Սաստավսի -** այս գյուղը աշխարհագրորեն գտնվում է Բոսնիա և Հերցոգովինայի կազմում, Սերբական Հանրապետությունում: Անկալավը կառավարվում է Սերբիայի կողմից, վիճարկվում Բոսնիա և Հերցոգովինայի կողմից:

**32) Սելվաժենց կղզու շրջակայք -** Պորտուգալիային պատկանող Մադեյրա կղզախմբում գտնվող կղզու շրջակա տնտեսական գոտու սահմանը վիճարկվում է Իսպանիայի կողմից:

**33) Սեռտա, Սելիյա քաղաքներ, Պենյոն դե Վլուսեմաս և Զաֆարինաս կղզիներ, Պենյոն դե Վելես դե լա Գոմերա թերակղզի -** Մարոկկոն իր տարածքում գտնվող իսպանական այս տիրույթները համարում է իր տարածքը:

**34) Վուկովար կղզի -** Վուկովար քաղաքի մոտ Դանութ գետում գտնվող կղզին ներկայումս կառավարվում է Խորվաթիայի կողմից, վիճարկվում՝ Սերբիայի կողմից:

**35) Տուլլա կղզի -** մինչև Ղրիմի Ռուսաստանին միանալը Կերչի նեղուցում գտնվող 3 կմ<sup>2</sup> մակերեսով ավազային կղզին պատկանում էր Ռուսականային, վիճարկվում էր Ռուսաստանի կողմից: Ներկայումս դերերը փոխվել են:

**36) Օձի կղզի և Սև ծովի մայրցամաքային շելֆ -** կղզու պատկանելիությունը և մայրցամաքային շելֆի բաժանման համար վիճում են Ռուսականան և Ռումինիան:

**37) Օլիվենսա -** Բաղախոս մարզի մեջ մտնող և 1806 թվականից Իսպանիայի կողմից կառավարվող այս շրջանը Պորտուգալիան երբեք չի ճանաչել որպես Իսպանիայի մաս:

**38) Օսիեկ և Սոնբոր քաղաքների մասը կազմող Դանութի շրջան -** Օսիեկը գտնվում է Խորվաթիայում, մայրաքաղաք Զագրեբից արևելք, Դանավագետի աջ ափին: Սոնբորը քաղաք է Սերբիայում, Վուկովինայում: Այս վիճելի տարածքների մի մասը պատկանում է Խորվաթիային, մի մասը՝ Սերբիային, նրանք էլ վիճարկում են պատկանելիությունը:

## Բ. ԱՍԻՎ

**1) Վասալ, Վլ Կաա, Վլ Կաար, Դեր Վլ Վաշայեր, Կֆար Կոուկ և Տուֆաիլ -** վիճելի տարածքներ Սիրիայի և Լիբանանի միջև:

**2) Աբխազիա -** կառավարվում է մասամբ ճանաչված Աբխազիայի Հանրապետության կողմից, վիճարկվում է Վրաստանի կողմից:

**3) Վրու Մուսա, Սեծ Տոմբ, Փոքր Տոմբ -** կղզիներ Օրմուզի նեղուցում, կառավարվում են Իրանի կողմից, վիճարկվում են ԱՍԷ-ի կողմից:

**4) Աղրեջանական էրսկալավներ՝ Քյարքի, Յուխարի, Ասկիպարա, Բարխուդարլի, Յարադուլլո -** վերահսկվում է Հայաստանի կողմից, վիճարկվում է Աղրեջանի կողմից:

**5) Ազադ Քաշմիք -** Կառավարվում է Պակիստանի կողմից, վիճարկվում է Հնդկաստանի կողմից:

**6) Արգելություն -** Ֆոռու գետով երկու մասի բաժանված գյուղը վիճահարույց է Արխազիայի և Ռուսաստանի միջև: Կառավարվում է Արխազիայի կողմից:

**7) Ակսայչին և Կարակորումի մայրուղի -** Ակսայչինը գտնվում է Հնդկաստանի, Չինաստանի և Պակիստանի սահմանագլխում, ունի 42 685 կմ<sup>2</sup> մակերես (Զամնու և Քաշմիքի տարածքի 30 %-ը): 1300 կմ երկարություն ունեցող և 4693 մ բարձրության վրա գտնվող Խունչերաբի լեռնանցքով անցնող աշխարհի ամենաբարձր միջավետական մայրուղին Ակսայչինի հետ միասին կառավարվում է Չինաստանի, վիճարկվում՝ Հնդկաստանի կողմից:

**8) Ակրոտիրի ինքնավար բազայի մաս -** կառավարվում է Կիպրոսի կողմից, վիճարկվում Միացյալ Թագավորության կողմից:

**9) Ամուր գետից արևելք գտնվող 64 գյուղ -** Ռուսաստանի կազմում գտնվող 3600 կմ<sup>2</sup> մակերեսով տարածքի պատկանելիությունը վիճարկվում է Չինաստանի Հանրապետության կողմից (Տայվան):

**10) Արաբական թերակղզու առափնյա հատված -** Քարայի և Արու Դարիի միջև ընկած հատվածը վիճելի է Սաուդյան Արաբիայի (կառավարում է) և ԱՍԷ-ի միջև (վիճարկում է):

**11) Արծվաշեն -** գյուղ Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի շրջանում: Խորհրդային տարիներին այն անկանոն էր Աղբբեջանական ԽՍՀ-ի տարածքում: Այժմ վերահսկվում է Աղբբեջանի կողմից, վիճարկվում՝ Հայաստանի կողմից:

**12) Արտարին Մոնղոլիա -** պատմական տարածքի պատկանելիությունը վիճարկում են Մոնղոլիան և Չինաստանի Հանրապետությունը (Տայվան):

**13) Արցախի Հանրապետություն -** չճանաչված պետությունը կառավարվում է ԱՀ կողմից, վիճարկվում՝ Աղբբեջանի կողմից:

**14) Վրունաչալ Պրադեշ -** Հնդկաստանի հյուսիսի արևելքում գտնվող 83 743 կմ<sup>2</sup> մակերես և 1,4 մլն բնակչություն ունեցող այս տարածաշրջանը կառավարվում է Հնդկաստանի կողմից և վիճարկվում է Չինաստանի կողմից:

**15) Բակիրու Լեռներ -** վիճելի տարածք Հյուսիսային Կորեայի և Չինաստանի միջև, որին նաև հավակնում են Տայվանը և Հարավային Կորեան:

**16) Բհուտանի արևելյան հատված -** փաստացի Բհուտանի կողմից կառավարվող տարածքի պատկանելիությունը վիճարկվում է Չինաստանի Հանրապետության կողմից (Տայվան):

**17) Բորյայքարի -** Կառավարվում է Բանգլադեշի, վիճարկվում է Հնդկաստանի կողմից:

**18) Գազայի հատված -** Մերձավոր Արևելքում, Միջերկրական ծովի ափին գտնվող այս գոտին կառավարվում է Իսլամական ընդիմադիր շարժ-

ման (ՀԱՍՍՍ) կողմից, վիճարկվում Պաղեստինի Ազգային վարչակազմի կողմից:

**19) Գիգիտ-Բալտիստան** - Գտնվում է Պակիստանի հյուսիսում: Այն կազմում է նախկինում գոյություն ունեցած Զամնու և Քաշմիր իշխանապետության մի մասը, իսկ ներկայումս Քաշմիրի մի հատվածն է: Զբաղեցնում է 72 520 կմ<sup>2</sup> մակերես և ունի շուրջ 1 մլն բնակչություն: Կառավարվում է Պակիստանի, վիճարկվում՝ Հնդկաստանի կողմից:

**20) Գոտո կղզի** - ճապոնիային պատկանող Հյուսիսային և Հարավային Գոտո կղզիների պատկանելիությունը վիճարկում են ԿԺԾՀ-ն, Չինաստանը և ՀՎ. Կորեան:

**21) Գոլանի բարձունքներ** - Սիրիայի հարավ-արևմուտքում գտնվող բարձունքները 1967 թ. օկուպացվել են Իսրայելի կողմից, վեցօրյա պատերազմի ընթացքում, իսկ 1981 թ. անեքսիայի է ենթարկվել Իսրայելի կողմից: 1150 կմ<sup>2</sup> մակերես և մինչև 2236 մ բարձրություն (Հերմոն լեռ, արաբերեն՝ Ջեբել Էլ Շեյխ) ունեցող լեռնային այս զանգվածը կառավարվում է Իսրայելի, վիճարկվում՝ Սիրիայի կողմից:

**22) Գայհատա Դումարարի** - կառավարվում է Հնդկաստանի կողմից, վիճարկվում է Բանգլադեշի կողմից:

**23) Գավիդ Գերեզիի վանական համալիր** - սահմանային վեճ Աղբեցանի և Վրաստանի միջև:

**24) Գեկելիա ինքնավար բազայի մաս** - կառավարվում է Կիպրոսի կողմից, վիճարկվում Միացյալ Թագավորության կողմից:

**25) Գեմշիոկ, Չումար, Կառտիկ, Շիպկի Պասս, Զալիս և Լապֆալ** - վիճելի շրջանները, որոնք գտնվում են Ակսայշինի և Նեպալի միջև, որոնք կառավարվում են Հնդկաստանի կողմից, բայց վիճարկվում են Չինաստանի և Տայվանի կողմից: Դեմշիոկը կառավարվում է Չինաստանի կողմից:

**26) Ղյուրանդի բնագիծ** - մասամբ Պակիստանի և Աֆղանստանի կողմից կառավարվող տարածք: Աֆղանստանը հավակնում է ամբողջ տարածքն, որը բնակեցված է փուշտուններով:

**27) Ղոփ Լանգ** - կառավարվում է Մյանմայի, վիճարկվում՝ Թայլանդի կողմից:

**28) Երեք եղանակների լեռնանցք** - վիճելի տարածք է Մյանմայի և Թայլանդի միջև:

**29) Իսֆարա հովիտ** - կառավարվում է Ղրղզստանի կողմից, վիճարկվում՝ Տաջիկստանի կողմից:

**30) Լիանկուր կղզիներ (Տոկեսիմա Տոկոյ)** - 0,185 կմ<sup>2</sup> մակերես ունեցող կղզիների խմբի պատկանելիությունը վիճարկում են ճապոնիան և Հարավային Կորեան: Ներկայումս այն կառավարվում է վերջինիս կողմից:

**31) Լիգիտան և Սիպադան կղզիներ** - Սուլավեսի ծովի արևմուտքում գտնվող և համապատասխանաբար 0,079 և 0,13 կմ<sup>2</sup> տարածք ունեցող կղզի-

ները կառավարվում են Մալայզիայի կողմից, վիճարկվում են Ինդոնեզիայի կողմից:

**32) Լիֆտիլա -** կառավարվում է Հնդկաստանի կողմից, վիճարկվում՝ Բանգլադեշի կողմից:

**33) Խորիս Միրույա կղզիներ -** կառավարվում է Օմանի կողմից, վիճարկվում է Եմենի կողմից:

**34) Կալապանի մարզ, վեծ Սաստա, Վնտուդանդա, Նավալպարասի գետերի շուրջ -** կառավարվում են Հնդկաստանի, վիճարկվում՝ Նեպալի կողմից:

**35) Կաչին -** Մյանմայի ամենահյուսիսային մարզի (չճանաչված պետության) պատկանելիությունը վիճարկվում է Չինաստանի Հանրապետության կողմից (Տայվան):

**36) Կասպից ծով -** այստեղ վիճահարույց է ծովային սահմանը՝ Ռուսաստանի, Ղազախստանի, Թուրքմենստանի, Իրանի և Ադրբեյջանի միջև: Ռոշակի համաձայնություն կա Ռուսաստանի, Ադրբեյջանի և Ղազախստանի միջև. շելֆում գտնվող նավթի հանքերի սահմանները բաժանելով ափագծի երկարությամբ: Այսպիսի բաժանման դեպքում Իրանին բաժին կհասնի այդ տարածքի 13 %-ը, սակայն նրանք պահանջում են 20 %:

**37) Կարանգ Ունարանգ -** վիճելի տարածք Ինդոնեզիայի և Մալայզիայի միջև:

**38) Կոկինա գյուղ -** Կիարոսի տարածքում գտնվող, փաստացի Հյուսիսային Կիարոսի Թուրքական Հանրապետության կողմից կառավարվող էրսկինավի պատկանելիությունը վիճարկվում է Կիարոսի կողմից:

**39) Կհառ Պրա Վիհան ազգային պարկ -** Թայլանդի կազմում գտնվող 130 կմ<sup>2</sup> մակերեսով ազգային պարկի պատկանելիությունը վիճարկվում է Կամբոջայի կողմից:

**40) Կորեական թերակղզի -** Հյուսիսային և Հարավային հատվածներից յուրաքանչյուրը թերակղզին համարում է իրենը:

**41) Կուկա Կնօքի և այս պիկից արևմուտք գտնվող լեռնային շրջաններ, Հաայի արևմտյան շրջան -** կառավարվում են Չինաստանի, վիճարկվում՝ Բհուտանի կողմից:

**42) Կուտուզով կղզի -** Ռուսուրի գետի ամենամեծ կղզին կառավարվում է Ռուսաստանի կողմից, վիճարկվում է Չինաստանի Հանրապետության կողմից (Տայվան):

**43) Հավար կղզի -** 14 կղզիներից բաղկացած կղզախումբը գտնվում է Պարսից ծոցում, Քարարի առափնյա մասում, սակայն կառավարվում է Բահրեյնի կողմից, իսկ վիճարկվում է Քարարի կողմից:

**44) Հարավային Կուրիլյան կղզիներ -** Օխտտի ծովը Խաղաղ օվկիանոսից բաժանող և Կամչատկա թերակղզու ու Հոկայդո կղզու միջև գտնվող Կուրիլյան կղզիների մի մասն են կազմում: Կառավարում է Ռուսաստանի կող-

մից, վիճարկվում է ճապոնիայի կողմից: Վերջինս հավակնություններ ունի հտուրուակ, Կունաշիր, Շիկոտան և Խարոմախ կղզիների նկատմամբ, որոնց անվանում են «հյուսիսային տարածքներ»: Ընդհանուր մակերեսը 5175 կմ<sup>2</sup> է:

**45) Հարավային Օսիա -** մասամբ ճանաչված պետությունը կառավարվում է ՀՎ. Օսիայի, վիճարկվում է Վրաստանի կողմից:

**46) Հարավային Տալպատի կամ Նոր Մուր կղզիներ -** այս կղզիները հայտնվել, իսկ հետո անհետացել են և 1970-ականներից մինչև 2000-ականները վիճելի է եղել Հնդկաստանի և Բանգլադեշի միջև: Ներկայում դրա հետևանքով չեն կարողանում որոշել ծովային սահմանը:

**47) Հարավային Տիբեթ -** Տիբեթի հարավային մասում է գտնվում, կառավարվում է Հնդկաստանի կողմից, վիճարկվում՝ Չինաստանի և Չինաստանի Հանրապետության կողմից, որոնք չեն ճանաչում Մակմագոնի բնագծի օրինականությունը:

**48) Հյուսիսային Կիարոսի Թուրքական Հանրապետություն -** ինքնահշակ, մասամբ ճանաչված պետությունը կառավարվում է ՀԿԹՀ-ի կողմից, վիճարկվում է Կիարոսի կողմից:

**49) Հնդքանգլադեշյան անկյալներ -** Բանգլադեշի տարածքի հիմնական տարածքում կա 103 հնդկական անկյալ, իր հերթին 71 բանգլադեշյան անկյալ կա Հնդկաստանի տարածքում: Բանգլադեշը համաձայն է փոխանակել բոլոր անկյալները, սակայն Հնդկաստանը չի ընդունում դա:

**50) Հորդանան գետի ձախ ափ, որն ընդգրկում է նաև Արևելյան Երուսաղեմը -** 5 640 կմ<sup>2</sup> տարածք և 2,5 մլն (որից՝ 2,1 մլն Պաղեստինի արար, 0,4 մլն-ը՝ հրեա) բնակչություն ունեցող տարածքը կառավարվում է Իսրայելի կողմից, վիճարկվում Պաղեստինի կողմից:

**51) Մազարիա Շաբյա -** 22 կմ<sup>2</sup> մակերեսով տարածքը կառավարվում է Իսրայելի կողմից, վիճարկվում է Սիրիայի, ինչպես նաև Լիբանանի կողմից:

**52) Մակ Կլեսֆիլյան կղզիներ -** Հարավչինական ծովում գտնվող կղզիները կառավարվում են Չինաստանի, վիճարկվում՝ Չինաստանի Հանրապետության, Ֆիլիպինների և Վիետնամի կողմից:

**53) Մայրցամարային Չինաստան -** պատկանելիությունը վիճարկվում է Չինաստանի Հանրապետության կողմից (Տայվան):

**54) Մեկնագ գետի կղզիներ -** կղզիների պատկանելիությունը վիճարկում են Թայլանդը և Լաոսը:

**55) Մեծ Ռւսուրական կղզի -** Ամուր և Ուստուրի գետերի միախառնման տեղում գտնվող կղզին բաժանված է Ռուսաստանի և Չինաստանի միջև, սակայն Չինաստանը ցանկանում է ավելին:

**56) Մոնղոլիա -** Մոնղոլիան պայքարում է «Մոնղոլիայի միասնական պատմական հողերում» վերամիավորել Չինաստանի Ներքին Մոնղոլիա ինքնավար շրջանը, Ռուսաստանի Տիվայի Հանրապետության մի մասը և 121 կմ<sup>2</sup> տարածք Բուրյաթիայից:

**57) Մուհարաջա գետային կղզի -** կառավարվում է Հնդկաստանի կողմից, վիճարկվում՝ Բանգլադեշի կողմից:

**58) Նաֆ գետի մի քանի կղզիներ -** կառավարվում է Բանգլադեশի կողմից, վիճարկվում՝ Մյանմայի կողմից:

**59) Շակագամ հովիտ -** կառավարվում է Չինաստանի կողմից, վիճարկվում՝ Հնդկաստանի կողմից:

**60) Շահումյանի շրջան -** վերահսկվում է Աղրբեջանի կողմից, վիճարկվում է ԼՂՀ-ի կողմից:

**61) Շատ էլ Արար -** Տիգրիս և Եփրատ գետերի միախառնումով առաջացող այս գետի գետաբերանային հատվածը վիճելի է Իրանի և Իրաքի միջև:

**62) Չինաստանի Հանրապետություն (Տայվան) -** հարակից Պենհու, Ցզինմեն, Մացզու, Պրատաս կղզիների հետ կառավարվում է Չինաստանի Հանրապետության կողմից, վիճարկվում է ՉժՀ-ի կողմից:

**63) Չինաստան, Հոնգ Կոնգ, Մակաու -** կառավարվում է ՉժՀ-ի կողմից, վիճարկվում է Չինաստանի Հանրապետության կողմից:

**64) Պաեկսու Սան Լեռնային շրջան -** 33 կմ-ոց հատվածի համար վիճում են Չինաստանը և Հա. Կորեան:

**65) Պալաու Քատեկ կղզի -** Սավու ծովի արևելքում գտնվող կղզին կառավարվում է Ինդոնեզիայի կողմից, վիճարկվում է Թիմոր Լեշտիի կողմից:

**66) Պարասելյան կղզիներ (Հռանգշա) -** 7,8 կմ<sup>2</sup>: Կղզիներ Չինաստանի կազմում, որի պատկանելիությունը վիճարկում են Վիետնամը և Թայվանը: Գտնվում է Հարավչինական ծովում: Այն 1974 թ. զավթվել է ՉժՀ-ի կողմից:

**67) Պերսի -** ԽՍՀՄ գոյության ընթացքում այս զյուղը մտնում էր Հարավ-Օսեբական ԽՄ-ի մեջ, որի հիման վրա այս զյուղի մի մասը (Փոքր Պերս) Հարավային Օսիայի ներկայիս իշխանությունները համարում են իրենց տարածքը: Ներկայումս այն վերահսկում է Վրաստանը, վիճարկում է ՀՎ. Օսիան:

**68) Պիրդիվահ -** կառավարվում է Հնդկաստանի կողմից, վիճարկվում՝ Բանգլադեশի կողմից:

**69) Պոխատ կոմունայի մաս -** կառավարվում է Թայլանդի կողմից, վիճարկվում է Կամբոջայի կողմից:

**70) Պրաչինբուրի մարզ -** վիճելի է Կամբոջայի և Թայլանդի միջև:

**71) Պրեակիխեա -** Շիվա Աստծուն նվիրված Կիսմերների կայսրության տաճարային համալիրը կառավարվում է Կամբոջայի կողմից, վիճարկվում՝ Թայլանդի կողմից:

**72) Ջամմու և Քաշմիր -** Հնդկաստանի հյուսիսում գտնվող տարածքը բաժանված է Հնդկաստանի, Պակիստանի և Չինաստանի միջև: Վիճարկվում է Հնդկաստանի և Չինաստանի, Հնդկաստանի և Պակիստանի միջև:

**73) Ուստի շրջան - ԿԺԾՀ-ի ծայր հյուսիս-արևելքում գտնվող վարչական շրջանի մի մասի պատկանելիությունը վիճարկվում է Զինաստանի Հանրապետության կողմից (Տայվան):**

**74) Սարահ (Հյուսիսային Բոռնեն) - կառավարվում է Մալայզիայի կողմից: Ֆիլիպինների հավակնությունները նրա նկատմամբ բացատրվում է նրանով, որ այն հանդիսանում է Սուլու Սուլթանության պատմական մարզ, որի իրավահաջորդը հանդիսանում են Ֆիլիպինները: Գտնվում է Արևելյան Մալայզիայի հյուսիսում: Ունի 73 619 կմ<sup>2</sup> տարածք:**

**75) Սահմանային վեճ Սառույան Արաբիայի և ԱՄԷ-ի միջև:**

**76) Սենկակու կղզիներ (Դայյույդան) - Արևելաչինական ծովում գտնվող 7 կմ<sup>2</sup> տարածքով կղզախումբը կառավարվում է ճապոնիայի կողմից, վիճարկվում է Զինաստանի և Զինաստանի Հանրապետության կողմից:**

**77) Սեր Կրիկ - ճահճային ոչ մեծ հողակտորներ, որոնք վիճելի են Հնդկաստանի և Պակիստանի միջև:**

**78) Միամի ծոցում գտնվող կղզիներ - ծոցի արևելքում գտնվող կղզիների և ծովային տարածքի համար վիճում են Կամբոջան և Վիետնամը:**

**79) Միաշին սարցաղաշտ և Սալտոր մարզ - 1984 թ. Հնդկաստանի կողմից գրավված տարածքի նկատմամբ հավակնություններ ունի Պակիստանը:**

**80) Մինգապության նեղուցում ծովային սահման - նեղուցում ծովային սահմանը և մի շարք կղզիների պատկանելիությունը վիճարկվում են Մինգապուրի և Մալայզիայի կողմից:**

**81) Միպաղան և Լիգիտան կղզիներ, նավթով հարուստ շելֆային գոտի, Սարահ նահանգ - Մալայզիայի կազմի մեջ մտնող կղզիների և շելֆային գոտու պատկանելիությունը վիճարկում են Ինդոնեզիան և Ֆիլիպինները: Ֆիլիպինները հավակնում են նաև Կալիմանտան կղզու հյուսիսում գտնվող Մալայզիայի Սարահ նահանգին:**

**82) Սոկոտրա կղզախումբ - չորս կղզուց և երկու ժայռից բաղկացած 3 796 կմ<sup>2</sup> տարածքով կղզախմբի պատկանելիությունը վիճարկում են Եմենը և Սոմալին:**

**83) Սպրատլի կղզիներ - 5 կմ<sup>2</sup> տարածքով անմարդաբնակ կղզիները Վիետնամը հայտարարել է իր տարածքը, սակայն դրանց պատկանելիությունը վիճարկում են ևս 5 երկիր՝ Զինաստանը, Ֆիլիպինները, Մալայզիան, Բրունեյը, Տայվանը: Գտնվում է Հարավշինական ծովի հարավ-արևմուտքում:**

**84) Սկարբորո կղզիներ - կառավարվում է Զինաստանի կողմից, վիճարկվում է ճապոնիայի և Զինաստանի Հանրապետության կողմից:**

**85) Ստրովիլիի գյուղ - Կիպրոսյան գյուղի պատկանելիությունը վիճարկում են Հյուսիսային Կիպրոսի Թուրքական Հանրապետությունը և Միացյալ Թագավորությունը: Գյուղը գտնվում է ՀԿԹՀ և ՄԹ-Դեկելիա ռազմաբազայի սահմանային մասում:**

**86) Վերածննդի կղզի (ներկայում՝ թերակղզի)** - վիճելի տարածք Արայան ծովում՝ Ղազախստանի և Ուզբեկստանի միջև:

**87) Տարբեր տարածքներ՝ Դակ Զերման, Դակ Դանգ, Լա Դրանկ գոտի, թե կղզի, Միլիյու, Էյու, Պիկ, Հյուսիսային Պիրատիս** - վիճելի են Վիետնամի և Կամբոջայի միջև:

**88) Տիբերում Բհուտանի անկավներ (Չերկիա Գոմպա, Գհունգմար, Գեսուր, Գեզոն, Խոսե Գոմպա, Կհոչար, Մյանրի, Ռինգանգ, Սանմար, Տարչեն, Ջուֆիլֆուլ)** - կառավարվում են Չինաստանի, վիճարկվում են Բհուտանի կողմից:

**89) Տիգրիս և Եփրատ գետերի հոսք, Հատայ իլ - Սիրիան անհանգըտացած է Տիգրիս և Եփրատ գետերի հոսքերի կարգավորմանն ուղղված Թուրքիայի ծրագրերից, ինչպես նաև վիճարկում է Թուրքիայի կազմի մեջ մտնող Հատայ իլի պատկանելությունը:**

**90) Տիվա - Սիրիիի դաշնային օկրուգում գտնվող 168,6 հազար կմ<sup>2</sup> տարածքով Ռուսաստանի Դաշնության սուբյեկտի պատկանելիությունը վիճարկում են Չինաստանի Հանրապետությունը և Մոնղոլիան:**

**91) Տումանգան կամ Տումինցյան գետի կղզիներ - ճապոնական ծովի ավազանին պատկանող սահմանային գետում գտնվող կղզիների պատկանելիությունը վիճարկում են Չինաստանը և ԿժՃՀ-ն:**

**92) Ցյանդառ - կառավարվում է Չինաստանի կողմից, վիճարկվում է Չինաստանի Հանրապետության, ԿժՃՀ-ի և Հարավային Կորեայի կողմից:**

**93) Յուսիմա կղզախումբ - ճապոնական ծովում, Կորեական նեղուցում գտնվող 696,3 կմ<sup>2</sup> մակերեսով տարածքը կառավարվում է ճապոնիայի կողմից, վիճարկվում է ՀՎ. Կորեայի կողմից:**

**94) Ուկատնի, Ժյոստկի, Մալոմեմչուժնի կղզիներ - կառավարվում են Ռուսաստանի, վիճարկվում են Ղազախստանի կողմից:**

**95) Քուվեյթի տարածք - թեև 1994 թ. Իրաքը ճանաչեց ՍՍԿ-ի կողմից որոշված Քուվեյթի սահմանը և դադարեց պահանջներ ներկայացնել նավթով հարուստ մայրցամաքային Քուվեյթի և նրա մասը կազմող Բուրջիան և Վարքա կղզիների նկատմամբ, սակայն այն հակամարտությունը ցանկացած պահի կարող է վերսկսվել, մասնավորապես ԻԼԻՊ-ի վերջնական հաղթանակի դեպքում:**

**96) Օազիս Բայրամի - Սաուդյան Արաբիան 1952 թ. օկուպացրել է նավթով հարուստ այս շրջանը: Թեև 1971 և 1974 թվականներին 3 և 6 քնակավայր փոխանցվել են համապատասխանարար Օմանին և ԱՍԷ-ին, սակայն վեճն ամբողջ օազիսի համար երեք երկրների միջև շարունակվում է:**

**97) Օարուս և Ում Ալ Մարադիմ - կառավարվում են Քուվեյթի, վիճարկվում՝ Սաուդյան Արաբիայի կողմից:**

**98) Օկինոտորի -** Ֆիլխայնյան ծովում գտնվող կղզին խորերի հետ միասին զբաղեցնում է 7,8 կմ<sup>2</sup> տարածք: Կառավարվում է Շապոնիայի կողմից, վիճարկվում է Չինաստանի կողմից:

**99) Օկուսի Ամբենո -** Թիմոր Լեշտիին պատկանող 817 կմ<sup>2</sup> մակերեսով շրջանը անկլավ է Ինդոնեզիայում, որն էլ վիճարկվում է պատկանելիությունը:

**100) Ֆաշտ Աղ Դիբալ և Քիթատ Զարադեյ -** խորերը վիճելի են Բահրեյնի և Քարարի միջև:

**101) Ֆերգանայի հովտի առանձին շրջաններ -** վիճելի տարածքներ են Ուզբեկստանի, Տաջիկստանի և Ղրղզստանի միջև:

#### **Գ. ԱՖՐԻԿԱ**

**1) Արյեյ -** 10,5 հազ. կմ<sup>2</sup> տարածքով այս շրջանին հավակնում են ինչպես Սուդանը, այնպես էլ Հարավային Սուդանը: Հարավային Սուդանի անկախացումից հետո շրջանը կառավարվում է Սուդանի կողմից: Վարչականութեն մտնում է Սուդանի Հարավային Կորդոֆան նահանգի մեջ: Ներկայումս գտնվում է Երովայի խաղաղարար կորպուսի վերահսկողության տակ:

**2) Անժուան և Մոխելի կղզիներ -** Ֆրանսիայի ենթակայության տակ գտնվող (Մայորի միջոցով) կղզիների պատկանելիությունը վիճարկվում է Կոմորների կողմից:

**3) Առողու գոտի -** Չաղի ծայր հյուսիսում, Լիբիայի հետ սահմանի ամբողջ երկարությամբ ձգվող 100 կմ լայնությամբ գոտու պատկանելիությունը վիճարկում են Չաղը և Լիբիան:

**4) Բաղմե -** ներկայումս կառավարվում է Երովայի կողմից: Այն 1998 թ. երովակարիքրեական պատերազմի առիթն էր:

**5) Բանկ դյու Հեյզեր -** Ֆրանսիան պնդում է, որ կղզին հանդիսանում է Հնդկական օվկիանոսում գտնվող Ֆրանսիական Հարավային և Անտարկտիկական Երկրի Տարածքի կազմի մեջ մտնող կղզիների խմբի մի մասը: Վիճարկվում է Մադագասկարի կողմից:

**6) Բակասի -** համաձայն Միջազգային դատարանի որոշման 665 կմ<sup>2</sup> տարածքով շրջանը Նիգերիայից փոխանցվել է Կամերունին, սակայն այն վիճելի հարց է Կամերունի և Նիգերիայի միջև:

**7) Բասաս դա Ինդիա, Եվրոպա կղզի, Ժուան դի Նովա կղզի -** փաստացի հանդիսանում է Ֆրանսիական Հարավային և Անտարկտիկական Երկրի Տարածքի մասը, սակայն վիճարկվում է Մադագասկարի կողմից:

**8) Բուրե -** քաղաքը կառավարվում է Երովայի, վիճարկվում է Երիքրեայի կողմից:

**9) Գիկումբի շրջանի մաս, Հյուսիսային արովինցիա -** կառավարվում է Ուզբեկայի, վիճարկվում՝ Ուզբեկայի կողմից:

**10) Գլորյոգ կղզիներ** - փաստացի հանդիսանում է ֆրանսիական Հարավային և Ամտարկտիկական Երկրի Տարածքի մասը, սակայն վիճարկվում է Մադագասկարի, Սեյշելների և Կոմորների կողմից:

**11) Դիեզո Գարսիա կղզի** - Հնդկական Օվկիանոսի Բրիտանական Տարածքի մեջ մտնող Չագոս կղզախմբի կղզու պատկանելիությունը վիճարկում է Մավրիկիոսը:

**12) Ենգի առափնյա հատված, Մակոն և Մոա գետերի ձախ ափ** - կառավարվում է Սիեռա Լեոնեյի կողմից, վիճարկվում՝ Գվինեայի կողմից:

**13) Էլ Վրաբ գետի հարավային ափ** - կառավարվում է Սուրանի կողմից, վիճարկվում է Հարավային Սուրանի կողմից:

**14) Էվե ազգության բնակության արեալ** - այս ազգությունն ապրում է Տոգոյում (700 հազար) և Գանայում (200 հազար): Նրանց բնակության արեալի համար վիճում են Տոգոն և Գանան:

**15) Իելո կղզի** - ստորջրյա խորի և դրա հետ կապված ծովային սահմանի համար վիճում են Չինաստանը և Հվ. Կորեան:

**16) Իեմի եռանկյունի** - եռանկյունու տեսք ունեցող մոտ 14 հազար կմ<sup>2</sup> մակերես ունեցող տարածքը ներկայում վերահսկվում է Քենիայի կողմից, սակայն այն վիճարկում են Սուրանը և Երովաչիան:

**17) Իսլաս Չաֆարինաս** - կառավարվում է Իսպանիայի կողմից, վիճարկվում՝ Մարոկոյի կողմից:

**18) Լանչինդա Պվետո պրովինցիա** - կառավարվում է Չամբիայի կողմից, վիճարկվում՝ Կոնգոյի ԺՀ կողմից:

**19) Կարալե շրջանի մաս** - կառավարվում է Ուգանդայի կողմից:

**20) Կախեմբա մարզի մաս** - վիճելի տարածք Անգոլայի և Կոնգոյի ԺՀ միջև:

**21) Կակա** - կառավարվում է Հարավային Սուրանի կողմից, վիճարկվում է Սուրանի կողմից:

**22) Կա Նգվանե** - կառավարվում է ՀԱՀ-ի կողմից, վիճարկվում է Սվազիլենդի կողմից:

**23) Կապրիվի գոտի** - Նամիբիայի հյուսիս-արևելյան երկար ելուստի համար պայքար են մղում Բոտսվանան, Չամբիան և Զիմբաբվեն:

**24) Կասիկիլի կղզի** - 1999 թ. Բոտսվանային տրված կղզու (գտնվում է Չորե գետում) պատկանելիությունը վիճարկում է Նամիբիան:

**25) Կաֆիա Կինզի** - 25 հազար կմ<sup>2</sup> մակերես ունեցող տարածքը կառավարվում է Հարավային Սուրանի կողմից, վիճարկվում է Սուրանի կողմից:

**26) Կալեարա գյուղ** - 2013թ. հունվարից այս գյուղը գրադարձնում են գվինեական զորքերը, բայց իրավաբանորեն այն պատկանում է Կոտ դ'Իվուարին:

**27) Կոուալոու գյուղ** - վիճելի է Բենինի և Բուրկինա Ֆասոյի միջև:

**28) Հալաիր եռանկյունի** - գրեթե ամբողջ 20-րդ դարի ընթացքում Սույնանին պատկանած 20 580 կմ<sup>2</sup> մակերես ունեցող տարածքը ներկայում վերահսկվում է Եզիփտոսի կողմից: Երկուսն էլ հավակնում են տարածքին:

**29) Հարավ-արևելյան Ալժիր** - 32 հազար կմ<sup>2</sup> մակերեսով տարածքի պատկանելիությունը վիճարկվում է Լիբիայի կողմից:

**30) Հեղիգեցի** - այս ոչ մեծ քաղաքը վերահսկվում է Հարավային Սույնանի կողմից, վիճարկվում է Սույնանի կողմից:

**31) Մայոր** - 2009 թ. բնակչությունը հանրաքվեով որոշել է դառնալ Ֆրանսիայի անդրծովյան դեպարտամենտ, սակայն Կոմորները հավակնում են տարածքին:

**32) Մբամբա ծոցի կղզիներ և Նյասա լիճ** - կառավարվում են Տանզանիայի կողմից, վիճարկվում է Մալավիի կողմից՝ համաձայն 1890թ. անգլոգերմանական համաձայնագրի:

**33) Մբանե կղզի** - Կորիսկո ծոցում գտնվող կղզու համար վիճարկում են Հասարակածային Գվինեան և Գարոնը:

**34) Մբանջե, Կոկոտիրես, Կոնգո կղզիներ** - վիճելի են Կոնգոյի և Հասարակածային Գվինեայի միջև:

**35) Մեգելիս լեռներ** - կառավարվում է Սույնանի կողմից, վիճարկվում է Հարավային Սույնանի կողմից:

**36) Մելիլյա** - Մարոկկոյի հյուսիսում գտնվող քաղաքը Իսպանիայի մասն է հանդիսանում, որը վիճարկում է Մարոկկոն:

**37) Միգինգո կղզի** - Վիկտորիա լճում գտնվող 2000 մ<sup>2</sup> տարածք ունեցող կղզու պատկանելիությունը վիճարկում են Քենիան և Ուգանդան:

**38) Մոյո շրջան** - վիճելի է Հարավային Սույնանի և Ուգանդայի միջև:

**39) Նյասա լիճ** - Մալավին և Տանզանիան չեն կարողանում որոշել լճով անցնող սահմանը:

**40) Նտեմ գետի կղզիներ** - վիճելի են Կամերունի և Հասարակածային Գվինեայի միջև:

**41) Չագոս կղզախումբ** - այն կառավարվում է Միացյալ Թագավորության կողմից, որպես Հնդկական Օվկիանոսի Բրիտանական Տարածք: Վիճարկվում է Մավրիկիոսի և Սեյշելների կողմից:

**42) Չառ լիճ** - լճի տարածքում սահմանը վիճարկում են Նիգերիան, Չառը և Կամերուն:

**43) Պենգուին** - կղզիները կառավարվում են Նամիբիայի կողմից, վիճարկվում են՝ ՀԱՀ-ի կողմից:

**44) Պենյոն ղեւ Ալուսեմաս** - կառավարվում է Իսպանիայի կողմից, վիճարկվում՝ Մարոկկոյի կողմից:

**45) Պենյոն ղեւ Վելես ղեւ լա Գոմերա** - կառավարվում է Իսպանիայի կողմից, վիճարկվում՝ Մարոկկոյի կողմից:

**46) Պերեիի կղզի -** 0,15 կմ<sup>2</sup> մակերես ունեցող կղզին կառավարվում է Իսպանիայի կողմից, վիճարկվում՝ Մարոկկոյի կողմից:

**47) Զառու -** կառավարվում է Սուլդանի կողմից, վիճարկվում է Հարավային Սուլդանի կողմից:

**48) Ջիկումբի շրջան -** Ուուանդայի հյուսիսային պրովինցիայում գտնվող 829 կմ<sup>2</sup> մակերեսով շրջանի պատկանելիությունը վիճարկվում է Ուգանդայի կողմից:

**49) Զորիս -** կառավարվում է Սուլդանի կողմից, վիճարկվում է Հարավային Սուլդանի կողմից:

**50) Ուա Գումեյրա և Գումեյրա կղզի -** կառավարվում է Էրիթրեայի կողմից, վիճարկվում՝ Ջիբութիի կողմից:

**51) Ուուկվանգի կղզի և Սեմլիկի գետի հովիտ -** վիճելի տարածքներ Կոնգոյի և Ուգանդայի միջև:

**52) Ուուփունզո հովիտ և Սարաներվա -** վիճելի տարածքներ Ուուանդայի և Բուրունդիի միջև:

**53) Սահարական Արաբական Ժողովրդավարական Հանրապետության արևմտյան մաս -** կառավարվում է Մարոկկոյի կողմից, վիճարկվում՝ ԱԱԺՀ-ի կողմից:

**54) Սահարական Արաբական Ժողովրդավարական Հանրապետության արևելյան մաս -** ազատ գոտին կառավարվում է ԱԱԺՀ-ի կողմից, վիճարկվում՝ Մարոկկոյի կողմից:

**55) Սահմանն Օրանժ գետով -** Նամիբիան պնդում է, որ սահմանն անցնում է գետի մեջտեղով, միաժամանակ ՀԱՀ-ը փաստում է, որ սահմանը ձգվում է հյուսիսային ափի երկայնքով:

**56) Սեռոտա -** Մարոկկոյի հյուսիսում գտնվող քաղաքը Իսպանիայի մասն է հանդիսանում, որը վիճարկում է Մարոկկոն:

**57) Սինդարեզի կղզի -** կառավարվում է Զամբիայի կողմից, վիճարկվում՝ Ջիմբաբվեի կողմից:

**58) Վաղի Խալֆա -** կառավարվում է Եգիպտոսի կողմից, վիճարկվում՝ Սուլդանի կողմից:

**59) Վիկտորիա լճի Միգինգո կղզու շրջակայք և շարունակությունը դեպի հյուսիս՝ Լոլվե, Օուասի, Ուեմբա, Ուինդիտի և Սուլդուլո կղզիների մոտակայք -** վիճահարույց տարածքներ Քենիայի և Ուգանդայի միջև:

**60) Տիրան և Սանաֆիր կղզիներ -** կառավարվում են Եգիպտոսի կողմից, վիճարկվում են Սաուդյան Արաբիայի կողմից:

**61) Տոմմոն ռեգիոն -** Նիգերի հյուսիսում գտնվող 25 հազար կմ<sup>2</sup> մակերեսով ռեգիոնի պատկանելիությունը վիճարկվում է Լիբիայի կողմից:

**62) Տորոնա Զալամբեսսա -** վիճելի են Երովայի և Էրիթրեայի միջև:

**63) Տրոմլեն կղզի** - փաստացի հանդիսանում է Ֆրանսիական Հարավային և Անտարկտիկական Երկրի Տարածքի մասը, վիճարկվում է Մավրիկիոսի և Սեյշելների կողմից:

**64) Ուոլֆիշ թեյ ծովախորչ** - փաստացի Նամիբիայում գտնվող ծովախորչի պատկանելիությունը վիճարկվում է ՀԱՀ-ի կողմից:

**65) Օգադեն** - պատկանում է Եթովպիային, բայց բնակեցված է էթնիկ սոմալեցիներով, ինչը պատճառ է հանդիսացել Սոմալիի կողմից պահանջներկայացնելու համար:

**66) Օկպարա գետի մոտակայքի գյուղեր** - վիճահարույց տարածքներ Բենինի և Նիգերիայի միջև:

#### **Դ. ՀՅՈՒՍԽԱՎՅԻՆ ԱՄԵՐԻԿԱ**

**1) Բոֆորտի ծով** - ԱՄՆ-ն և Կանադան չեն կարողանում որոշել սեփականության իրավունքը:

**2) Գունատանամո** - Կուրիան հավակնում է իր տարածքում գտնվող ԱՄՆ ռազմա-ծովային բազային, որն անժամկետ վարձակալել է այն 1903 թ.:

**3) Դիբսն Էնտրանս** - ԱՄՆ-ն և Կանադան չեն կարողանում որոշել սեփականության իրավունքը:

**4) Խոռան դե Ֆուկի նեղուց** - ԱՄՆ-ն և Կանադան չեն կարողանում որոշել սեփականության իրավունքը:

**5) Ծովային սահման** - վիճահարույց սահման ԱՄՆ-ի և Բահամների միջև:

**6) Հանս Այլենդ** - 1,3 կմ<sup>2</sup> մակերես ունեցող կղզին Կանադան և Դանիան (Գրենլանդիայի անունից) հայտարարում են կղզու նկատմամբ սեփականության իրավունքը:

**7) Հյուսիս-արևեմտյան անցում և արկտիկական այլ ջրեր** - գտնվում են կանադական տարածքային ջրերում, սակայն ԱՄՆ-ն իր իրավունքներն է հայտնում:

**8) Մարիա Սիլ կղզի** - ԱՄՆ-ն և Կանադան չեն կարողանում որոշել սեփականության իրավունքը:

**9) Մերսիկական ծոցի մայրցամաքային շելֆ 200 մղոն հեռավորության վրա** - պատկանելիության համար վիճում են ԱՄՆ-ն, Կուրիան և Սերսիկան:

**10) Նորդ Ռոր** - ԱՄՆ-ն և Կանադան չեն կարողանում որոշել սեփականության իրավունքը:

**11) Պորտլենդ ջրանցք** - ԱՄՆ-ն և Կանադան չեն կարողանում որոշել սեփականության իրավունքը:

**12) Քենեդու նեղուցում գտնվող կղզիներ** - վիճարկվում են Կանադայի և Դանիայի կողմից (Գրենլանդիայի անունից):

## **Ե. ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԱՄԵՐԻԿԱ**

**1) Ավես կղզի** - Կարիբյան ծովում գտնվող վենեսուելական կղզու պատկանելիությունը վիճարկվում է Դոմինիկայի կողմից:

**2) Բահո Նուվել** - կառավարվում է Կոլումբիայի կողմից: Հոնդուրասը ճանաչել է Կոլումբիայի ինքնավարությունը, բայց այն չեն ճանաչում ԱՄՆ-ն, Նիկարագուան, Զամայկան:

**3) Բելիզի հարավային կես** - վիճարկվում է Գվատեմալայի կողմից, որն առաջ հավակնում էր ամբողջ Բելիզին:

**4) Խոլա Ավես** - կառավարվում է Վենեսուելայի կողմից, Դոմինիկան թեև հրաժարվել է նրա նկատմամբ հավակնություններից, սակայն շարունակում է պայքարել սահմանակից ծովի համար:

**5) Կալերո կղզու հյուսիս** - կառավարվում է Կոստա Ռիկայի, վիճարկվում՝ Նիկարագուայի կողմից:

**6) Կամեխտ կղզի** - կառավարվում է Հոնդուրասի կողմից, վիճարկվում՝ Էլ Սալվադորի կողմից:

**7) Նավասա, Հերդ, Մարդոնալդ կղզիներ** - կառավարվում են ԱՄՆ-ի կողմից, վիճարկվում են Հայիթի կողմից:

**8) Սապոդիլլա Քեյ** - կառավարվում է Բելիզի կողմից, վիճարկվում է Գվատեմալայի և Հոնդուրասի կողմից:

**9) Սերանիյա** - Զամայկան ճանաչել է Կոլումբիայի ինքնավարությունը, բայց այն չեն ճանաչում ԱՄՆ-ն, Նիկարագուան, Հոնդուրասը:

**10) Ֆոնսեկա ծոցի կղզիներ, ծովային սահման և սահմանամերձ հատվածներ** - պատկանելիությունը վիճարկում են Էլ Սալվադոր և Հոնդուրասը:

## **Զ. ՀԱՐԱՎԱՅԻՆ ԱՄԵՐԻԿԱ**

**1) Անկոլա կղզի** - Վենեսուելայի և Գայանայի սահմանով հոսող Կույու գետում գտնվող 28 կմ<sup>2</sup> տարածք ունեցող կղզին կառավարվում է Վենեսուելայի կողմից, բայց վիճարկվում է Գայանայի կողմից: Այնտեղ տեղակայված է Վենեսուելական ռազմական բազա:

**2) Արոյո դե լա Ինվերնադա (Ռինկոն դե Արտիգաս) և Վիլա Ալբորնոս** - Ուրուգվայը Բրազիլիայի հետ վիճարկում է Ինվերնադա գետի 237 կմ<sup>2</sup> մակերես ունեցող հատվածը Մաստեր մարզի մոտակայքում:

**3) Բիզլ Անդուց և 3 կղզի** - Հորն հրվանդանից հյուսիս գտնվող Անդուցի և կղզիների համար վիճում են Արգենտինան և Չիլին:

**4) Գայանա Էսսեկիրո** - Գայանայի արևմտյան մասում, Էսսեկիրո գետից արևմուտք գտնվող շուրջ 159,5 հազար կմ<sup>2</sup> տարածքը կառավարվում է Գայանայի կողմից, բայց վիճարկվում է Վենեսուելայի կողմից:

**5) Իպա Բրագիլերա** - կղզին կառավարվում է Բրագիլիայի կողմից, բայց Ուրուգվայը պնդում է, որ այն մտնում է իրենց Արտիգաս դեպարտամենտի կազմի մեջ:

**6) Իպա Սուարես** - կառավարվում է Բոլիվիայի կողմից, վիճարկվում է Բրագիլիայի կողմից:

**7) Կարանտին գետի վերին հոսանքից արևելք Գայանայի տարածքը** - կառավարվում է Գայանայի կողմից, վիճարկվում է Սուրինամի կողմից:

**8) Գուայրա Ֆոլգ (Սեր Կվիդաս)** - վիճելի կղզիներ, որոնք մասամբ կառավարվում են Բրագիլիայի և Պարագվայի կողմից, որոնք մնացել են են Իտայպու ջրամբարի ջրերի տակ:

**9) Գրան Չակոյի շրջան** - Պիլկոնայո և Վերդե գետերի միջև ընկած նոր բնակեցված տարածքի պատկանելիությունը վիճարկում են Բոլիվիան և Պարագվայը:

**10) Կուարախ գետի կղզիներ** - պատկանելիությունը վիճարկում են Արգենտինան, Բրագիլիան և Որուգվայը:

**11) Հարավային Չորջիա և Հարավային Սանդվիչյան կղզիներ** - կառավարվում են Միացյալ Թագավորության կողմից, վիճարկվում է Արգենտինայի կողմից:

**12) Մարոուինի գետից արևմուտք Ֆրանսիական Գվիանա** - կառավարվում է Ֆրանսիայի կողմից, վիճարկվում՝ Սուրինամի կողմից:

**13) Մոնտե Ֆիուց Ռոյի և Սիեռա Մուրայոնի միջև գտնվող սառցային դաշտը Պատագոնիայում** - սահմանը մինչ օրս պաշտոնապես որոշված չէ, սակայն և՛ Արգենտինան, և՛ Չիլին ունեն իրենց հավակնությունները:

**14) Սան Անդրես և Պրովինցիախա կղզիներ** - պատկանում են Կոլումբիային, վիճարկվում են Նիկարագուայի կողմից:

**15) Վենեսուելա ծոցի ծովային սահման** - Կոլումբիան հաստատում է, որ նա իրավունք ունի այս ծոցի ջրերի նկատմամբ:

**16) Ֆոլկլենդյան (Մալվինյան) կղզիներ** - կառավարվում է Միացյալ Թագավորության կողմից, վիճարկվում՝ Արգենտինայի կողմից:

## **Ե. ԱՎՍՏՐԱԼԻԱ ԵՎ ՕՎԿԻԱՆԻԱ**

**1) Ալեքսա Մայեր** - խոր Խաղաղ օվկիանոսի հարավ-արևմուտքում: Կառավարվում է Տոնիայի, վիճարկվում է Նոր Զելանդիայի կողմից:

**2) Քեներիջ** - խոր Խաղաղ օվկիանոսի հարավ-արևմուտքում, Նիուեից 225 կմ հարավ-արևելք: Ունի 56 կմ<sup>2</sup> մակերես: Ծովային ուղիներից հեռու գտնվող այս խորը կառավարվում է Տոնիայի, վիճարկվում է Նոր Զելանդիայի հետ ասոցացված Նիուեի կողմից:

**3) Հիբերնիա խոր** - Ավստրալիային պատկանող խորը վիճարկվում է Ինդոնեզիայի կողմից:

**4) Մատյու և Հանտեր կղզիներ** - վիճահարույց կղզիներ Վանուատուի և Ֆրանսիայի միջև:

**5) Միներվա խութ** - կառավարվում է Տոնգայի կողմից, վիճարկվում է Ֆիջի կողմից:

**6) Նիլոսն (Լանկաստեր) խութ** - վիճարկվում է Ֆրանսիայի կողմից (Ֆրանսիական Պոլիխնեզիա):

**7) Սուեյնս** - կառավարվում է ԱՄՆ կողմից, վիճարկվում է Տոկելաուի կողմից, որը գտնվում է Նոր Զելանդիայի հետ ազատ ատցացման մեջ, որը նույնական չի ճանաչում ԱՄՆ իշխանությունը այս կղզու նկատմամբ:

**8) Տորթեսի նեղուցում գտնվող կղզիներ (Ավստրալիայի Քեյփ Յորք քերակղզու և Նոր Գվինեա կղզու միջև)** - կառավարվում է Ավստրալիայի կողմից, վիճարկվում՝ Պապուա Նոր Գվինեայի կողմից:

**9) Տես ի Ռա (նախկին՝ Կոնուեյ)** - կառավարվում է Ֆիջիի կողմից, վիճարկվում՝ Ֆրանսիայի կողմից (Նոր Կալեղոնիա):

**10) Ուեկ կղզի** - ԱՄՆ-ի կողմից կառավարվող կղզու պատկանելիությունը վիճարկվում է Մարշալյան կղզիների կողմից:

## 66. Անջատողական շարժումներն աշխարհում

### 1. Աղրբեջան

**1.1. Աղարստան** - Աղրբեջանի հյուսիսում ապրող ժողովուրդը ցանկանում է միավորվել Դաղստանում ապրող իրենց ազգակիցներին և ստեղծել ինքնավարություն:

**1.2. Արցախի Հանրապետություն** - փաստացի գոյություն ունի ԱՀ-ն (տե՛ս 64.2. Բ, կետ1):

**1.3. Թալիշտան** - 1993թ. հունիսին թալիշները Աղրբեջանի հարավային 7 շրջաններում հռչակել են Թալիշ-Մուղանի ինքնավար հանրապետություն՝ 4 658 կմ<sup>2</sup> տարածքով: Սակայն նոյն թվականի օգոստոսին աղրբեջանական իշխանություններին հաջողվեց բռնի ուժով ոչնչացնել Լենքրանի իշխանությունը: Անկախանալու և սեփական պետություն ունենալու գաղափարը թալիշների մոտ հիմա էլ առկա է:

**1.4. Լեզգիստան** - լեզգիները Աղրբեջանի հյուսիսում ձգտում են անկախության կամ վերամիավորման Դաղստանի հարավում ապրող իրենց ազգակիցների հետ:

**1.5. Շիրվան**- հյուսիսում ապրող ժողովուրդները ստեղծել է «Շիրվանի ազատազրության ճակատ»-ը, որի նպատակն է ստեղծել Շիրվանի Հանրապետությունը:

### 2. Ալժիր

**2.1. Կաբիլիա** - կաբիլները Ալժիրի հյուսիսում ապրող բերբերական ժողովուրդ են, որոնց ընդհանուր թվաքանակը աշխարհում մոտ 5 մլն է: Հայտնի

կարիներից են ֆուտբոլստներ Զինեղին Զիդանը և Քարիմ Բենզեման: Կարիները պայքարում են անկախության կամ լայն ինքնավարության համար:

### **3. Ամերիկայի Միացյալ Նահանգներ**

**3.1. Այսակա -** Տարածքի մեծությամբ ԱՄՆ-ի ամենամեծ նահանգն է՝ 1 717 854 կմ<sup>2</sup> մակերեսով: Ունի 750 հազար քնակիչ: Գտնվում է Հյուսիսային Ամերիկայի հյուսիս-արևմուտքում, իր մեջ ներառում է համանուն քերակղզին, Ալեռության և հարակից կղզիները: Այսակայի անկախության կուսակցությունը նապատակ ունի նահանգը դարձնել անկախ պետություն:

**3.2. ԱՄՆ-ի հարավ -** ինքնավարության պահանջով հարավային նահանգների միավորումով ձգտում են վերականգնել նախկինում 1 995 392 կմ<sup>2</sup> մակերես զբաղեցնող տարածքով Ամերիկայի Համադաշնային Նահանգներ անվանումով պետությունը: ԱՄՆ-ի հարավը ոչ պաշտոնական անվանում են Դիբիլենդ: Այս տարածաշրջանը ԱՄՆ ամենազարգացած տնտեսաաշխարհագրական շրջանն է:

**3.3. ԱՄՆ-ի հարավ-արևմուտք + Հյուսիսային Մեքսիկա -** ԱՄՆ-ի Արիզոնա, Նյու Մեքսիկո, Օկլահոմա, Տեխաս, Կալիֆորնիա (հատկապես հարավային մասը) և Մեքսիկայի հյուսիսային նահանգների միավորումով ցանկանում են ստեղծել ինքնավարություն:

**3.4. Գուամ -** կղզին ունի 541,3 կմ<sup>2</sup> մակերես և 160 հազար քնակիչ, որնք իմնականում չամորրո ազգից են: Նրանք պայքարում են անկախության համար:

**3.5. Լակոտա -** 2007թ. հնդկացիական լակոտա ցեղի ակտիվիստները հայտարարել է իրենց անկախ պետության՝ Լակոտայի Հանրապետության ստեղծման մասին: Շուրջ 200 հազար կմ<sup>2</sup> տարածքով պետությունն ընդգրկում է ԱՄՆ-ի Հ.և Հ.վ. Նակոտաներ, Ներրասկա, Վայոմինգ, Մոնտանա նահանգների առանձին հատվածները, որտեղ ապրում է ընդհանուր հաշվով մոտ 100 հազար հնդկացի:

**3.6. Խաղաղօվկիանոսյան հյուսիս-արևմուտք + Բրիտանական Կոլումբիա -** 1970 թ. առաջարկվել է Կանադայի Բրիտանական Կոլումբիա պրովինցիայի, ԱՄՆ-ի Վաշինգտոն և Օրեգոն նահանգների միավորմամբ ստեղծել Կասկադիա Հանրապետությունը, որի ջատագովներն են այս երկու երկրների անջատականները: Ընդհանուր տարածքը կազմում է 1 384 000 կմ<sup>2</sup>, քնակչությունն ավելի քան 15 մլն:

**3.7. Հավայի Հանրապետություն -** կղզու անկախության կողմնակիցները պայքարում են երբեմնի անկախ պետության վերականգնման համար: Պետության տարածքը 28 337 կմ<sup>2</sup> է:

**3.8. Հյուսիսային Մարիանյան կղզիներ -** ունեն 63,63 կմ<sup>2</sup> մակերես և 54 հազար քնակիչ, որոնք պայքարում են անկախության համար:

**3.9. Նյու - Ցորք** - անջատականներն առաջարկում են ստեղծել անկախ Լոնգ Ալենդ՝ թվով 51-րդ նահանգը ԱՄՆ-ում: Տարածքի մեծությունը՝ 3 629 կմ<sup>2</sup> է, բնակչությունը՝ 8,5 մլն մարդ:

**3.10. Նոր Աֆրիկայի Հանրապետություն** - ԱՄՆ հարավային նահանգներում, որտեղ բնակչության կազմում գերակշռում են աֆրոամերիկացիները, աֆրոամերիկյան կազմակերպությունը ճգոտում է ստեղծել անկախ պետություն: Այդ պետության կազմի մեջ են մտնելու Լուիզիանա, Սիսախիայի, Ալաբամա, Ջորջիա, Հարավային Կարոլինա նահանգներն ամբողջությամբ, ինչպես նաև Թենեսի, Արկանզաս, Ֆլորիդա նահանգների մի մասը:

**3.11. Պուերտօ Ռիկո** - տվյալները տես 64.3. Բ.5 կետում: Պուերտօ Ռիկոյի անկախության կուսակցությունը պայքարում է ԱՄՆ չներառված կազմակերպված տարածքի անկախության համար:

**3.12. Վերմոնտ** - ԱՄՆ-ի հյուսիս-արևելքում գտնվող ամենափոքր նահանգներից մեկն ունի 24 900 կմ<sup>2</sup> մակերես և 630 հազար բնակիչ: Անջատականները պայքարում են ինքնավարության համար:

**3.13. Տեխաս** - նահանգի անջատականները կարծում են, որ 1845 թ. Տեխասն անօրինական աներսխայի է ենթարկվել և ներկայումս այն օկուպացված տարածք է ԱՄՆ-ի կողմից: Տեխասի անջատողական շարժում կազմակերպությունը ցանկանում է ստեղծել Տեխասի Հանրապետություն անկախ պետություն՝ 696 241 կմ<sup>2</sup> տարածքով և 26 մլն բնակչությամբ՝ նահանգի սահմաններում:

#### **4. Անգոլա**

**4.1. Լուսնիա Չոկվե** - հիմնականում Կոնգոյում և Անգոլայում ապրող բանտու խմբի քրիստոնյա ժողովուրդ են՝ ընդհանուր 2 մլն բվաքանակով, որոնք ցանկանում են ստեղծել Լուսնիա Չոկվե միացյալ թագավորությունը:

**4.2. Կարինդա** - տես 64.2. Գ, կետ 20:

#### **5. Անգրիգուս և Բարբուդա**

**5.1. Բարբուդա** - Բարբուդա կղզու ժողովուրդը պայքարում է անկախության համար:

#### **6. Ավստրալիա**

**6.1. Արևմտյան Ավստրալիա** - երկրի արևմտյան և, միաժամանակ, ամենամեծ նահանգն է՝ 2 529 875 կմ<sup>2</sup> տարածքով: Բնակությունը՝ 2,3 մլն է: Ժամանակին նույնիսկ հանրաքվե է անցկացվել Ավստրալական Միության կազմից դրւու գալու և Միացյալ Թագավորությանը միանալու համար: Ներկայումս ցանկանում են լինել առանձին ռեգիոն Աուրալիա անվանք:

**6.2. Նորֆոլկ** - կղզին պատրաստ է զրկվել իր ինքնավարությունից ֆինանսական աջակցության դիմաց: Տես 64.3. Բ, կետ 7:

## **7. Ավարիա**

**7.1. Տիրոլ** - պատմական մարզը, որը գտնվում է Կենտրոնական Եվրոպայում՝ Ալպերի արևելյան մասում իր մեջ ընդգրկում է Ավստրիայի դաշնային տիրույթ հանդիսացող Տիրոլը և Իտալիայի կազմի մեջ մտնող ինքնավար պրովինցիաներ Հարավային Տիրոլը և Տրենտոն։ Տարածաշրջանում երբեմն երեմն քննարկվում է գերմանալեզու այս մարզի ընդհանրության և իտալական հատվածում լեզվական և մշակութային արժեքների պահպանման մասին։

## **8. Արգենտինա**

**8.1. Այմարա** - Արգենտինայում, Բոլիվիայում, Չիլիում և Պերուում ապրող այմարաները փորձում են վերականգնել երրեմնի ինկերի թագավորությունը՝ Կոլասույու անվամբ, որն Ինկերի Կայսրության 4 պրովինցիաներից մեկն էր։ Այմարաների ընդհանուր թվաքանակը 3,8 մլն է։

**8.2. Արաուկանի** - մապուչե ինքնանվանումով ժողովուրդն ապրում է Արգենտինայի արևմուտքում և Չիլիի որոշ մարզերում։ Նրանց ընդհանուր թվաքանակը 1,5 մլն է, որոնք ցանկանում են ստեղծել Արաուկանների Ազգային Պետությունը։

## **9. Աֆղանսկան**

**9.1. Խալիբներ** - խալամական շարժումը, որը ստեղծվել է 1994 թ.-ին փուշունների միջավայրում, Աֆղանստանը կառավարել է 1996-2001 թթ.-ին, որը կոչվել է Աֆղանստանի Խալամական Էմիրություն։ 2004 թ.-ից ղեկավարել է նաև Վազգիրիստանի տարածաշրջանը, որը գտնվում է Պակիստանի հյուսիսում և կոչվել է Վազգիրիստանի Խալամական Հանրապետություն։ 2003 թ. թալիբական շարժումը ՄԱԿ-ի կողմից ճանաչվել է որպես ահարեկչական կազմակերպություն։

**9.2. Հազարատան** - շիա մահմետական հազարերը ցանկանում են ստեղծել անկախ պետություն ժամանակակից Աֆղանստանի տարածքի կենտրոնական հատվածում։ Իրենց ապագա երկրի մայրաքաղաքը հազարերը համարում են Բամիյանը։

**9.3. Հյուսիսային (ուզբեկական) Աֆղանստան (նախկին՝ «Գուստումիստան»)** - 1992-96 թթ. գեներալ Աբդուլ Ռաշիդ Գուստումը ղեկավարել է փաստացի անկախ տարածաշրջանը, որը միավորել է էրնիկ ուղբեկներով բնակեցված հյուսիսային Բաղի, Ջաուզչան, Ֆարյար և Կունդուզ պրովինցիաները։ Մայրաքաղաքը եղել է Մազարի Շարիֆը։ Այն ներկայում էլ հանդիսանում է անհանգիստ օջախներից մեկը։

**9.4. Հյուսիս-արևելյան (տաջիկական) Աֆղանստան (նախկին՝ «Մասուլիստան»)** - 1989-96 թթ. դաշտային հրամանատար, հետազայում Աֆղանստանի պաշտպանության նախարար Ախմադ Շահ Մասուդը ղեկավարել է փաստացի անկախ տարածաշրջանը, որը միավորել է էրնիկ տաջիկներով բնակեցված հյուսիս-արևելյան Փարվան, Տահար, Բագլան և Բադախշան

պրովինցիաները: Մայրաքաղաքը եղել է Տալուկանը: Այն ներկայումս էլ հանդիսանում է անհանգիստ օջախներից մեկը:

## **10. Քանգլադեղ**

**10.1. Չիտագոնիգ -** 8 149 կմ<sup>2</sup> տարածք ունեցող լեռնային շրջանում ապրող ջումմա արորիգեն ցեղի ներկայացուցիչները ձգտում են անկախության կամ ինքնավարության Բանգլադեշի կազմում:

## **11. Քելգիս**

**11.1. Ֆլամանդական տարածաշրջան -** նպատակն է ստեղծել ֆլանդրիա պետությունը: Միավորում է Բելգիայի հյուսիսային 5 պրովինցիաները, որոնք միասին ունեն 13 522 կմ<sup>2</sup> տարածք և 6 353 հազար բնակիչ: Պաշտոնական լեզուն նիդերլանդերենն է:

**11.2. Վալլոնական տարածաշրջան -** նպատակն է ստեղծել Վալլոնիա պետությունը կամ միավորվել Ֆրանսիային: Միավորում է Բելգիայի հարավային 5 պրովինցիաները, որոնք միասին ունեն 16 844 կմ<sup>2</sup> տարածք և 3 498 հազար բնակիչ: Առավել տարածված լեզուն ֆրանսերենն է:

## **12. Բունիա և Հերցոգովինա**

**12.1. Արևմտյան Բունիա Հանրապետություն -** այս անունով ինքնավար պետություն է գոյություն ունեցել Հարավսլավիայի կործանումից հետո: Ինքնավարությունը ոչնչացվել է Բունիա և Հերցոգովինայի կողմից 1995 թ.:

**12.2. Բունիական տարածքներ -** նպատակն է ստեղծել Բունիա և Հերցոգովինայի խլամական հանրապետություն:

**12.3. Գերցոգ Բունիա -** նպատակն է ստեղծել խորվաթական հանրապետություն Գերցոգ Բունա: Որպես շճանաչված պետություն գոյություն է ունեցել 1991-94 թվականներին:

**12.4. Սերբական Հանրապետություն -** պետական կազմավորում Բունիա և Հերցոգովինայի կազմում (տե՛ս 64.3. Զ, կետ 2):

## **13. Քրազիլիս**

**13.1. Հարավային ռեգիոն -** «Հարավը՝ դա իմ երկիրն է» շարժումը նախաձեռնել է ստեղծել Պամպայի Պաշնային Հանրապետությունը: Այն նախատեսում է միավորել հարավային Պարանա, Սանտա Կատարինա և Ուիու Գրանդի դու Սուլ նահանգները, որոնք միասին ունեն 576 301 կմ<sup>2</sup> մակերես և մոտ 30 մլն բնակչություն:

**13.2. Ոլու Գրանդի դու Սուլ -** 19-րդ դարում Բրազիլիայի ծայր հարավում գոյություն ունեցած Ոլու Գրանդի ինքնահոչակ անկախ պետության վերականգնման համար են պայքարում ներկայիս նահանգի ծայրահեղական-ներ՝ Գաուչու Պամպայի Հանրապետություն անունով: Նահանգն ունի 281 748,5 կմ<sup>2</sup> մակերես և ավելի քան 11 մլն բնակիչ:

**13.3. Սան Պաուլո -** Սան Պաուլոյի Հանրապետության և Սան Պաուլոյի անկախության համար շարժումները ձգտում են անկախացնել այս նա-

հանգը, որն ունի 248 197 կմ<sup>2</sup> մակերես և 45 մլն բնակչություն: Այն Բրազիլիայի տնտեսապես ամենազգացած և ամենաշատ բնակեցված նահանգն է:

## **14. Քուղարիս**

**14.1. Արևելյան Թրակիա -** Բուլղարիայի արևելքում և հարավ-արևելքում ապրող թուրքերը և իսլամ ընդունած բուլղարները, որոնք կազմում են երկրի ամբողջ բնակչության մոտ 10 %-ը, պայքարում են ինքնավարության համար:

## **15. Գերմանիա**

**15.1. Բավարիա -** հատկապես Շոտլանդիայի անկախության հանրապետի դրական արդյունքն էլ ավելի կուժեղացներ Բավարիայի անկախության կողմնակիցների պայքարը: Երկիրն ունի 70 550,1 կմ<sup>2</sup> մակերես և 12,5 մլն բնակչություն: Հիմնական ազգություններն են բավարացիները, ֆրանկները, շվարցները և սուդետյան գերմանացիները:

**15.2. Լուժիցան սորբեր -** Լուժիցան պատմական մարզ է, որն այսօր բաժանված է 2 մասի՝ Ստորին Լուժիցա, որը մտնում է Բրանդենբուրգի մեջ և Վերին Լուժիցա, որը մտնում է Սաքսոնիայի մեջ: Ժամանակակից սորբերը համարվում են պոլարյան սլավոնների մաս կազմող՝ սորբեր կոչվող ցեղային միության մնացորդ: Պայքարում են շակութային և լեզվական անկախության համար:

**15.3. Հելգոլանդ -** Գերմանիայի Շելզվիդ-Հոլշտայն երկրին պատկանող կղզախումբը մտնում է Ֆրիզյան կղզիների կազմի մեջ: Ունի 1,7 կմ<sup>2</sup> մակերեսով տարածք և 1300 բնակիչ: Անջատականները պայքարում են Նիդերլանդների ֆրիզների հետ միասին ստեղծել միասնական Ֆրիզլանդիա պետությունը:

**15.4. Շլեզվիգ -** Գերմանիայի հյուսիսում գտնվող Շլեզվիգ-Հոլշտայն երկրի անջատողականները պայքարում են մշակութային ինքնավարության համար:

## **16. Գամիս**

**16.1. Գրենլանդիա -** գրենլանդական «Ժողովրդական ընդհանրություն» կուսակցությունը պայքարում է անկախության համար (տես 64.3. Բ, կետ 9):

**16.2. Ֆարերներ -** Ֆարերյան մի քանի կուսակցություններ և ուժեր պաշտպանում են անկախ պետություն դառնալու գաղափարը (տես 64.3. Բ, կետ 10):

## **17. Եզիսպոս**

**17.1. Ղատիներ -** հին եզիստացիների ուղղակի հետնորդներն ու ժառանգները, որոնք ըստ իրենց աղբյուրների մոտ 20 մլն են, ցանկանում են ստեղծել Ղատիական Փարավոնական Հանրապետություն: Ամենահայտնի ղատիներից է ՍՍԿ-ի նախկին զիսավոր քարտուղար Բուտրոս-Ղալին:

**17.2. Նորիացիներ** - Եզիպտոսի հարավում և Սուդանի հյուսիսում բնակվող ժողովուրդը ցանկանում է ստեղծել Նորիա անկախ պետությունը: Նրանց քվաքանակը մոտ 2 մլն է:

### **18. Երովայիա**

**18.1. Գամբելա** - Գամբելայի ժողովրդապատագրական ճակատը պայքարում է Երովայիայի արևմուտքում գտնվող այս շրջանի անկախացման համար, որն ունի 29 783 կմ<sup>2</sup> տարածք և 350 հազար բնակչություն:

**18.2. Օգադեն** - Երկրի արևելյում գտնվող 200 հազար կմ<sup>2</sup> մակերես ունեցող այս տարածաշրջանը բնակեցված է հիմնականում սոմալեցիներով, որոնք ել պայքարում են Երովայիայից անջատելու և Սոմալիին միանալու համար: Բնակչության թիվը մոտ 5 մլն է:

**18.3. Օրոմիա** - Երովայիայի կենտրոնում գտնվող մարզի տարածքը 298 164 կմ<sup>2</sup> է, բնակչությունը՝ ավելի քան 27 մլն: Անկախության համար Օրոմիան շարժում ուղղական կազմակերպությունը և այլ քաղաքական ուժեր պայքարում են Օրոմիայի անկախության համար:

### **19. Եմեն**

**19.1. Հարավային Եմեն** - չնայած 1990 թ. երկու Եմենների միավորմանը, այնուամենայնիվ մինչ օրս հարավային հատվածում պահպանվում են անջատական տրամադրությունները:

### **20. Զամբիա**

**20.1. Բարոտսելենդ** - 1 մլն քվաքանակով լոգի ժողովուրդը, որն ապրում է Նամիբիայում, Զիմբաբվեյում և հիմնականում Զամբիայում, ցանկանում են ստեղծել Բարոտսելենդ անկախ պետությունը:

### **21. Էկվադոր**

**21.1. Գուայաս** - Երկրի արևմուտքում գտնվող պրովինցիայի Զրիստոնյա-սոցիալական կուսակցությունը պայքարում է 16 740 կմ<sup>2</sup> մակերես և 3,7 մլն բնակչություն ունեցող տարածաշրջանը դարձնել Գուայաս ինքնավար պրովինցիա:

**21.2. Մանարի** - Երկրի արևմուտքում գտնվող պրովինցիայի Ինքնավար սահմանադրական կառուցվածք կուսակցությունը պայքարում է 18 879 կմ<sup>2</sup> մակերես և 1,4 մլն բնակչություն ունեցող տարածաշրջանը դարձնել Մանարի ինքնավար ռեզիոն:

### **22. Թայլանդ**

**22.1. Մահմեդականներ** - նրանք ուզում են ազգային անկախ պետություն ստեղծել Նարատհիվատ և Սունգափ Կոլոր պրովինցիաներում, որտեղ հաճախակի են զինված ընդհարումները: Ներկայումս իրենց ազդեցության ոլորտում են պահում Նարատհիվատ, Պատտանի և Յալա պրովինցիաները:

### **23. Թուրքիա**

**23.1. Քրդստան** - նպատակն է Թուրքիայի Իրանի, Իրաքի, Սիրիայի տարածքում ապրող 35-40 մլն. քրդերին մոտ 500 հազար կմ<sup>2</sup> տարածքով պետությունում միավորելը:

**23.2. Լազիստան** - լազերով բնակեցված Թուրքիայի հյուսիս-արևելքը ձգտում է ինքնավարության:

**23.3. Արևելյան Թուրքիա** - Պատմական Հայաստանի մի մասն է (Արևմտյան Հայաստան), որի պահանջատերն է հայ ժողովորդը:

### **24. Ինդոնեզիա**

**24.1. Աչեհ** - մինչև 1904 թ. գոյություն է ունեցել Աչեհի սուլթանությունը, որն ինտո մտել է Ինդոնեզիայի կազմի մեջ: Այդ պահից սկսած Աչեհի ժողովուրդը պայքարել է անկախության համար և 1976 թ. նրանց հաջողվել է հոչակել Աչեհի Հանրապետությունը, որը դադարել է գոյություն ունենալ 2005 թ. և ներկայում միայն հասարակական շարժում է անկախության համար: Սումատրա կղզու հյուսիսային մասում գտնվող պրովինցիան զբաղեցնում է 57 956 կմ<sup>2</sup> մակերեսով տարածք և ունի 5 մլն բնակչություն:

**24.2. Արևմտյան Պապուա Հանրապետություն** - տես 64.2.Գ., կետ 7:

**24.3. Մոլուքյան կղզիներ** - 1950 թ. Ամբոն կղզում հոչակվել է Հարավային Մոլուքյան կղզիների հանրապետություն կամ Մալուկո Սելատան Հանրապետություն: Հիմնականում քրիստոնյաներով բնակեցված տարածքն անմիջապես ենթարկվել է ճնշման և կառավարությունը դիմել է փախուստի, որն մինչ այժմ գտնվում են Նիդերլանդներում:

**24.4. Ռիաու** - Սումատրա կղզու հյուսիս-արևելքում գտնվող պրովինցիայում որոշ ուժեր պայքարում են անկախություն ձեռք բերելու համար: Տարածքը 87 023 կմ<sup>2</sup> է, բնակչությունը՝ 5,5 մլն մարդ:

### **25. Իսպանիա**

**25.1. Անդալուզիա** - որոշ քաղաքական կուսակցությունների և կազմակերպությունների նպատակն է ստեղծել անկախ պետություն: Գտնվում է Իսպանիայի հարավում, զբաղեցնում է 87 268 կմ<sup>2</sup> տարածք և ունի 8,5 մլն բնակչություն: Մայրաքաղաքն է Սևիլյան: Բաղկացած է 8 պրովինցիայից: Ներկայում համարվում է ինքնավար համայնք Իսպանիայի կազմում:

**25.2. Աստուրիա** - քաղաքական մի քանի կուսակցությունների ու արհեստակցական միությունների նպատակն է ստեղծել Աստուրիա սոցիալիստական հանրապետությունը: Զբաղեցնում է 10 604 կմ<sup>2</sup> տարածք և ունի 1,1 մլն բնակչություն: Մարաքաղաքն է Օվիետոն:

**25.3. Արագոն** - Իսպանիայի հյուսիս-արևելքում, կատալոնիայից արևմուտք գտնվող ինքնավար համայնքի քաղաքական կազմակերպությունների մի մասը ձգտում է անկախության և Արագոն պետության ստեղծմանը՝ Սարագոսա մայրաքաղաքով: Տարածքը 47 719 կմ<sup>2</sup> է, բնակչությունը՝ 1,4 մլն:

**25.4. Բասկերի Երկիր -** Իսպանիայի մարզ հանդիսացող Բասկերի Երկիր մեջ մտնող Բիսկայա, Գիպուսկոա և Ալավա պրովինցիաները և Նավարքան ցանկանում են ստեղծել Բասկերի Երկիր անկախ պետությունը, որը ներառելու է նշված մարզերը և Ֆրանսիայի ծայր հարավ-արևմտյան բասկերով բնակեցված Լարուրդան, Չուրերու և Ներքին Նավարքա շրջանները: Ընդհանուր մակերեսը կազմում է 20 494 կմ<sup>2</sup>, 3,3 մլն բնակչությամբ: Խոսակցական լեզուն բասկերենն է: Գլխավոր նախաձեռնող և շարժիչ ուժը Բասկերի Երկիր և ազատություն ուազմական կազմակերպությունն է (ETA):

**25.5. Գալիսիա -** Գալիսիական դիմադրություն ուազմական խմբավորման և մի շարք կուսակցությունների նպատակն է ստեղծել Գալիսիական Հանրապետությունը: Իսպանիայի ինքնավար համայնք հանդիսացող այս տարածքը գտնվում է Պիրենեյան թերակղու հյուսիս-արևմուտքում և ունի 29 574 կմ<sup>2</sup> տարածք և 2,8 մլն բնակչություն: Վարչական կենտրոնն է Սանտյագո դե Կոմպոստելա քաղաքը՝ 95 հազար բնակչությամբ, իսկ ամենախոշոր քաղաք Վիգոն ունի 300 հազար բնակչություն:

**25.6. Լեոն -** Իսպանիայի հյուսիս-արևմուտքում գտնվող այս տարածաշրջանը ներկայում կազմում է Կաստիլիա և Լեոն ինքնավար համայնքի մի մասը: Ազգայնական ուժերը ցանկանում են ստեղծել Լեոն Պետությունը՝ համանուն մայրաքաղաքով: Տարածքի մեծությունը 15 570 կմ<sup>2</sup> է, բնակչությունը՝ 500 հազար մարդ:

**25.7. Կանարյան կղզիներ -** որոշ քաղաքական ուժեր Ասլանտյան օվկիանոսում գտնվող ինքնավար համայնքը ձգտում են դարձնել անկախ պետություն (տես 64.3. Ե, կետ 3):

**25.8. Կանտաբրիա -** Իսպանիայի հյուսիսում գտնվող ինքնավար համայնքը ձգտում է ստեղծել առանձին պետություն: Զբաղեցնում է 5 321 կմ<sup>2</sup> մակերեսով տարածք, ունի 600 հազար բնակիչ: Մայրաքաղաքն է Սանտանդերը:

**25.9. Կաստիլիա -** ազգայնական և ձախ այլ կազմակերպություններ ձգուում են ստեղծել անկախ պետություն, որը կգրադարձնի ներկայիս Իսպանիայի հյուսիս-արևմուտքից հարավ-արևելք ձգվող կենտրոնական ընդարձակ հատվածը:

**25.10. Կատալոնիա, Վալենսիա, Բալեարյան կղզիներ -** Իսպանիայի արևելքում, հյուսիս-արևելքում և Միջերկրական ծովի արևմուտքում գտնվող ինքնավար համայնքները ցանկանում են միավորել կատալոնական բոլոր հողերը և ստեղծել միասնական անկախ պետություն՝ Կատալոնիա: Ընդհանուր տարածքը 60 361 կմ<sup>2</sup> է՝ 13,9 մլն բնակչությամբ: Գլխավոր քաղաքներն են Բարսելոնը, Վալենսիան, Ալիկանտեն, Էլչեն, Պալման: Պաշտոնական լեզուներն են կատալոներենը, իսպաներենը, օքսիտաներենը:

## **26. Իգալիա**

**26.1. Պաղանիա -** Իտալիայի հյուսիսային բոլոր շրջանները ձգտում են Հյուսիսի Լիգա քաղաքական ուժի միջոցով անկախանություն և ստեղծել առանձին պետություն: Այդ գաղափարի կողմնակիցներն են **Վալե դ'Առատա, Պիեմոնտ, Լոմբարդիա, Ինուլիա, Հարավային Տիրոլ, Վենետիկ, Ֆրիուլի, Վենետիկ, Ջուլիա, Լիգուրիա, Էմիլիա, Ռոմանիա, Տուկանա, Մարկե, Ումբրիա** մարզերը: Ընդհանուր տարածքը 161 068 կմ<sup>2</sup> է, բնակչությունը՝ 33,8 մլն մարդ:

**26.2. Սարդինիա -** ձախ քաղաքական կուսակցությունները ձգտում են ստեղծել անկախ պետություն: 24 090 կմ<sup>2</sup> տարածք և 1,7 մլն բնակչություն ունեցող կղզին գտնվում է Միջերկրական ծովում:

**26.3. Սիցիլիա -** Իտալիայի ցամաքային մասից հարավ-արևմուտք գտնվող կղզու քաղաքական որոշ ուժեր պայքարում են Սիցիլիայի անկախության համար: Սիցիլիան հարակից ևս 5 կղզիների հետ ունի 25 711 կմ<sup>2</sup> տարածք և 5 մլն բնակչություն:

**26.4. Հարավային Իտալիա -** Իտալիայի հարավը ձգտում է ինքնավարության, որն ընդգրկում է մայրցամաքային Իտալիայի հարավը, ինչպես նաև Սիցիլիան և Սարդինիան:

## **27. Իրան**

**27.1. Աղբեջան -** ինչպես 1990-ականներին Աղբեջանի այն ժամանակվա նախագահ Արուֆազ Էլիքեյը, այնպես էլ ներկայումս աղբեջանցի ազգայնականները ամեն ինչ անում են, որ Իրանի հյուսիս-արևմուտքում անջատողական տրամադրություններ ստեղծել հիմնականում աղբեջանցիներով բնակեցված շրջանները Աղբեջանին միացնելու և Մեծ Աղբեջան ստեղծելու համար:

**27.2. Արաբստան -** երկրի հարավ-արևմուտքում ապրող արաբները, որոնք հիմնականում կենտրոնացած են Խուզիստանում, ցանկանում են ստեղծել Խուզիստան պետությունը, որի հիմնական ջատագովն է Ալ-Ահվազի ազատագրության կազմակերպությունը: Խուզիստանի տարածքը 64 055 կմ<sup>2</sup> է, բնակչությունը՝ 4,3 մլն մարդ:

**27.3. Քախստիարներ -** հարավ-արևմուտքում ապրող ազգությունը ձգտում է ինքնավարության:

**27.4. Բելուջներ -** Իրանի հարավ-արևելքում, Աֆղանստանում և Պակիստանում ապրող բելուջները ցանկանում են ստեղծել միասնական պետություն՝ Բելուջիստան:

**27.5. Գիյան -** իրանալեզու 2-3 միլիոնանոց ժողովուրդը, որն ապրում է երկրի հյուսիս-արևմուտքում, պայքարում է ինքնորոշման համար:

**27.6. Թալիշներ -** երկրի հյուսիսում, Կասպից ծովի հարավ-արևմտյան ափամերձ հատվածում ապրող 430 հազարանոց ժողովուրդը ձգտում է Աղբեջանում ապրող իրենց ազգակիցների հետ ինքնորոշվել:

**27.7. Թուրքմեններ** - մոտ 1 մլն թվաքանակով ազգը ապրում է Թուրքմենստանին հարակից տարածքներում և մտածում են նրա հետ միանալու մասին:

**27.8. Լակեր** - 1,5 մլն թվաքանակով ազգությունը ապրում է Կենտրոնական Չաղրոսում և չունի ինքնավարություն:

**27.9. Մազենդերան** - մոտ 4 մլն մազենդերանցիները ապրում են Կասպից ծովի հարավային ափամերձ մարզերում: Պայքարում են ինքնավարության համար:

**27.10.Քրդեր** - Իրանի քրդերը պայքարում են ինքնավարություն ունենալու կամ համայն քրդերի հետ միասնական մեկ Քրդստանում ապրելու համար:

## **28. Իրար**

**28.1. Իրարի և Լևանտի իսլամական պետություն** - տե՛ս 64.2. Գ. կետ 16:

**28.2. Քրդստան** - տե՛ս 64.2. Գ. կետ 15:

## **29. Լառու, Չինասպան, Թայլանդ, Վիետնամ**

**29.1. Հմոնիզ** - Լառուի հյուսիսում ապրող ժողովուրդը հաճախակի է պայքարի դրվագ գալիս երկրի իշխանությունների դեմ՝ տարրեր պահանջներով, որոնցից կարևորագույնը Չինաստանում, Թայլանդում, Լառուում, Վիետնամում ապրող իրենց հայրենակիցների հետ մեկ միասնական ինքնավարություն ունենալու է:

## **30. Լատվիա**

**30.1. Լատվալիա** - Լատվիայի արևելքում գտնվող այս երկրամասն ունի շուրջ 300 հազար բնակիչ և զբաղեցնում է Լատվիայի տարածքի 1/4-ը: Բնակչության մեծ մասը լատվալեր են: Զգտում են ինքնորոշման:

## **31. Լեհասպան**

**31.1. Վերին Սելեզիա** - «Սելեզիայի ինքնորոշման համար շարժումը» ձգտում է ինքնավարության Լեհաստանի հարավ-արևելյան մասում գտնվող պատմական տարածքում:

## **32. Լիբիա**

**32.1. Ժենմայտիա** - էթնիկ շրջան Լիտվայի հյուսիս-արևելյան հատվածում, որն զբաղեցնում է մոտ 21 հազար կմ<sup>2</sup> տարածք և ունի շուրջ 500 հազար բնակիչ: Զգտում են ինքնորոշման:

## **33. Խորվարիս**

**33.1. Խստարսկա ժուպանիա** - Խստրիայի ժողովրդական ասամբլեան պայքարում է Խորվարիայի արևմտատքում գտնվող ժուպանիան դարձնել ինքնավարություն: 2 813 կմ<sup>2</sup> տարածք և 210 հազար բնակիչ ունեցող շրջանը գրեթե ամբողջությամբ ընդգրկում է Խստրիա թերակղզին:

**33.2. Սերբական Կրահնա** - նախկին չճանաչված պետություն Խորվարիայի տարածքում, որը գոյություն է ունեցել 1991-95 թթ.: Զբաղեցրել է 17 040

կմ<sup>2</sup> տարածք և ունեցել 435 հազար քնակիչ: Ներկայումս Խորվաթիայի սերբական շի բավարարվում իրենց ունեցած ինքնավարությունը և ձգտում են ավելիին:

### **34. Կամերուն**

**34.1. Բակասի -** թերակղղի Կամերունում (տե՛ս 64.2. Գ. կետ 8):

**34.2. Հարավային Կամերուն -** Հարավային Կամերունի ազատագրական շարժման նպատակն է ստեղծել Հարավային Կամերունի Միութենական Հանրապետություն՝ Ամբազանիա՝ 42 383 կմ<sup>2</sup> մակերեսով տարածքում:

### **35. Կանադա**

**35.1. Ալբերտա -** Կանադայի արևմուտքում գտնվող պրովինցիայի անջատականները պայքարում են անկախ պետություն ստեղծելու համար: Տարածքի մեծությունը 661 848 կմ<sup>2</sup> է, քնակչությունը՝ 3,9 մլն մարդ:

**35.2. Բրիտանական Կոլումբիա + ԱՄՆ խաղաղօվկիանոսյան հյուսիսարևմուտք -** տե՛ս 66, 3.6. կետը:

**35.3. Նյուֆառնդլենդ և Լաբրադոր -** երկրի արևելքում գտնվող պրովինցիան պայքարում է ինքնավարության համար: Այն ունի 405 212 կմ<sup>2</sup> մակերեսով տարածք և 515 հազար քնակիչ:

**35.4. Նովարկ -** այս ժողովուրդն ապրում է Բրիտանական Կոլումբիա պրովինցիայում՝ մոտ 16 000 կմ<sup>2</sup> մակերեսով տարածքում: Նրանց քաքանակը 3 հազար է: Բաժանման մասին գեղերի, որոնք համախմբված պայքարում են ինքնավարության համար:

**35.5. Սասկաչեան -** Սասկաչեանի արևմտյան անկախ կուսակցությունը պայքարում է Կանադայի կենտրոնական մասի հարավում գտնվող պրովինցիայի անկախության համար: Այն ունի 651 036 կմ<sup>2</sup> մակերես և 1,1 մլն քնակչություն:

**35.6. Քվերեկ -** անկախ պետության ստեղծման համար պայքարում են բազմաթիվ հասարակական և քաղաքական կազմակերպություններ: Կանադայի արևելքում գտնվող ֆրանսախոս պրովինցիան ունի 1 667 441 կմ<sup>2</sup> տարածք և 8 մլն քնակչություն: Պաշտոնական լեզուն ֆրանսերենն է:

### **36. Կիպրոս**

**36.1. Հյուսիսային Կիպրոսի Թուրքական Հանրապետություն** (տե՛ս 64.2. Ա, կետ 4):

### **37. Կիրիստոնություն**

**37.1. Բանաբա -** Խաղաղ օվկիանոսի գրեթե կենտրոնական մասում գտնվող կղզին ունի ընդամենը 6,39 կմ<sup>2</sup> մակերես և 300 քնակիչ, որոնք ձգտում են անկախության:

### **38. Կոլումբիա**

**38.1. Անտիոքիա -** երկրի հյուսիս-արևմուտքում գտնվող դեպարտամենտի որոշ ուժեր պայքարում են նավթով, ոսկով և արծաթի հարուստ այս

դեպարտամենտի տարածքում ստեղծել Անտիռիայի Հանրապետություն ակախ պետությունը: Տարածքը կազմում է 63 612 կմ<sup>2</sup>, բնակչությունը 6 մլն է:

**38.2. Կոլումբիայի Կարիբյան ռեգիոն** - այս տարածաշրջանը ցանկանում են դարձնել նույն անունով ինքնավար տարածք:

**38.3. Մարկետարիայի Հանրապետություն** - մարքսիզմ-լենինիզմ և բոլիվարիանիզմ քարոզող «Կոլումբիայի հեղափոխական ռազմական ուժեր-ժողովրդի բանակ» ռազմական կազմակերպությունը պայքարում է անկախ պետություն ստեղծելու համար:

**38.4. Սան Անդրես և Պրովինցիանի** - Կարիբյան ծովի հարավ-արևմուտքում գտնվող կղզիներից բաղկացած դեպարտամենտի կազմում գտնվող Սան Անդրես կղզին ցանկանում է ինքնորոշվել: Այն գրադեցնում է 26 կմ<sup>2</sup> տարածք և ունի 55 հազար բնակիչ:

### **39. Կոմորաներ**

**39.1. Անժուան** - Կոմորյան կղզիների կազմի մեջ մտնող 424 կմ<sup>2</sup> տարածքով կղզին ինքնավար ռեգիոն է, որը 2007-08 թթ. եղել է չճանաչված անկախ պետություն: Մոտ 280 հազար բնակչություն ունեցող կղզին հիմա էլ պայքարում է անկախության համար:

**39.2. Մվալի** - Հնդկական օվկիանոսում Կոմորաների կազմի մեջ մտնող մեկ այլ կղզի, որն ունի 290 կմ<sup>2</sup> մակերեսով տարածք և 40 հազար բնակչություն, ցանկանում է ստեղծել Մվալի Ժողովրդավարական Հանրապետությունը:

### **40. Կոնգոյի Ժողովրդական Հանրապետություն**

**40.1. Կատանգա** - Անդրկայում 496,9 հազար կմ<sup>2</sup> մակերեսով և 4,3 մլն բնակչությամբ պրովինցիան, որը գտնվում է Երկրի հարավ-արևելքում, դեռևս 1960 թ. իրեն հռչակել է անկախ պետություն, ինչը հանդիսացել է մարտական գործողությունների պատճառ: 1963 թ. ՄԱԿ-ի «խաղաղարար» ուժերի շնորհիվ պրովինցիան վերադարձվել է Կոնգոյի ԺՀ-ին: 1971-95 թթ. կոչվել է Շաք: Անկախության ձգությունը պահպանվում է մինչ օրս:

**40.2. Կոնգոյի Թագավորություն** - մինչգաղութատիրական ժամանակաշրջան՝ 1395-1914 թթ., Կենտրոնական Աֆրիկայում գոյություն է ունեցել Կոնգոյի Թագավորությունը, որը գրադեցրել է 129,4 հազար կմ<sup>2</sup> տարածք, ընդորկելով Անդրկայի Անգոլայի հյուսիսը, Կոնգոն, Կոնգոյի ԺՀ-ի արևմտյան մասը: Նպատակն է վերականգնել թագավորությունը:

**40.3. Հարավային Կասախ** - 1960-ականներին Անդրկայիս Կոնգոյի ԺՀ - տարածքում գոյություն է ունեցել Հարավային Կասախ լեռնահանքային հանրապետությունը, որի մայրաքաղաքը եղել է Բակվանգան: Հետագայում այն կործանվել է և, որպեսզի անջատականների ուժերը թուլացնեն, պետության տարածքը բաժանվել է տարբեր պրովինցիաների միջև:

## **41. Կող դԻվուար**

**41.1. Հյուսիսային ռեգիոն -** հայրենասիրական և մի շարք այլ կազմակերպություններ ցանկանում են ստեղծել Հյուսիսային Ռեգիոնի Հանրապետություն անունով անկախ պետություն:

## **42. Հասարակածային Գվինեա**

**42.1. Բիոկո -** Ատլանտյան օվկիանոսի Գվինեական ծոցի մասը կազմող Բիաֆրա ծոցում գտնվող կղզին Հասարակածային Գվինեայի ամենամեծ կղզին է 2 017 կմ<sup>2</sup> մակերեսով և 260 հազար բնակչութամբ: Այստեղ է գտնվում Երկրի մայրաքաղաք Մալարոն: Կղզու բնակչութերը պայքարում են ինքնորոշման համար:

## **43. Հարավաֆրիկյան Հանրապետություն**

**43.1. Բուրեր -** սպիտակները, ինչպես հաճախ անվանում են այս ժողովրդին, ձգուում են ստեղծել իրենց ազգային պետությունը՝ Ֆոլկստատատը:

**43.2. Կվագուլու -** 1800-ականներին Աֆրիկայի հարավում գրյություն է ունեցել Չուլու կայսրությունը կամ զուլուների երկիրը: Այն վերականգնելու բազմաթիվ փորձերից հետո զուլուները 1977-1994 թթ. ստեղծել են Կվագուլու պետությունը, որը գրեթե համընկնում է ներկայիս Կվագուլու-նատալ պրովինցիայի տարածքին: Ներկայում էլ զուլուների պայքարը ինքնուրույնության համար շարունակվում է:

**43.3. Վենդա -** ՀԱՀ-ի ծայր հյուսիս-արևելքում 1970-ականներից մինչև 1994թ. Տրանսվաալ պրովինցիայի (ներկայում՝ Լիմպոպո) տարածքում գրյություն է ունեցել Վանդայի Հանրապետություն անկախ պետությունը (Բանտուստան): Այն նախատեսված է եղել վենդա ցեղատեսակի բոլոր ներկայացուցիչների համար: Մայրաքաղաքը եղել է Shhηηηանջոու քաղաքը: Պետության տարածքի մեծությունը կազմել է 7410 կմ<sup>2</sup>, բնակչությունը՝ մոտավորապես 560 հազար մարդ: 1990 թ. հեղաշրջման արդյունքում 1994 թ. կրկին ՀԱՀ-ի կազմի մեջ մտած այս տարածաշրջանում անկախության համար պայքարի կրքերը չեն հանդարտվել:

**43.4. Շենքու -** այս ցեղախումբը ցանկանում է ստեղծել Շենքուլանդիա պետությունը:

**43.5. Օրանիա -** ՀԱՀ-ի կենտրոնական հատվածում գտնվող այս քաղաքը միակն է երկրում, որտեղ ապրում են բացառապես սպիտականաշկ աֆրիկաներները՝ նիդերլանդացի, գերմանացի և ֆրանսիացի նախկին գաղութարարների սերունդները: Բնակչությունը մոտ 1600 մարդ է, որոնք ցանկանում են ստեղծել Օրանիա անկախ քաղաք-պետությունը:

## **44. Հնդկաստան**

**44.1. Ասսամ -** ազգայնական շարժում Ասսամ նահանգում: Տարբեր խմբավորումներ պահանջում են Կարբի շրջանին շնորհել ինքնավարություն:

**44.2. Բոդոլանդ -** Ասսամի ներքին շրջանում ապրող բոդ ժողովուրդը պայքարում է ինքնուրույնության համար:

**44.3. Գորկիալանդ** - Դարջիլինգ քաղաքի մոտակայքում գտնվող շրջաններն են Արևմտյան Բենզայիա նահանգում, որը բնակեցված է հիմնականում գորկիերով: Նրանք խոսում են նեպալերեն և պայքարում են ինքնավարության համար:

**44.4. Թամինադ** - Հնդկաստանի հարավային հիմնականում թամիներով բնակեցված նահանգում պարբերական բնույթ են կրում ռազմական և ահարեկչական գործողությունները, որոնց նպատակն է ապակայունացնել իրավիճակը տարածքում և նահանգը դարձնել անկախ պետություն:

**44.5. Միզորամ** - երկրի արևելքում գտնվող և գերազանցապես քրիստոնյաներով բնակեցված փոքր նահանգում կան անկախական տրամադրություններ: Նահանգը ժամանակին անջատվել է Ասսամ նահանգից:

**44.6. Նագա, Նագավենդ, Նագալիմ** - տե՛ս 64.2.Գ, կետ 25:

**44.7. Միկեր, Փենջար, Խալիստան** - տե՛ս 64.2.Ա, կետ 8:

**44.8. Տրիպուրա** - ոչ մեծ տարածքով նահանգ է Հնդկաստանի արևելքում: Ունի 10 492 կմ<sup>2</sup> մակերես և 3,7 մլն բնակչություն: Բենզալերով բնակեցված տարածքը պայքարում է ինքնորոշման համար:

**44.9. Քաշմիր, Ազադ Քաշմիր** - տե՛ս 64.2.Ա. կետ 7:

#### **45. Հունաստան**

**45.1. Իկարիա** - հունական կղզին, որը գտնվում է Էգեյան ծովում, Արևելյան Սապրադաներ կղզախմբում, ցանկանում է միանալ Ավստրիային: Կղզին ունի 255,3 կմ<sup>2</sup> մակերես և 8,5 հազար բնակչություն:

**45.2. Էպիր** - ալբանական Չամերիայի ազատագրական քանակ ուազմական կազմակերպությունը առաջարկում է ստեղծել Չամերիա ինքնավար ռեզիոնը: Էպիրը գտնվում է Հունաստանի հյուսիս-արևմուտքում, ունի 9 203 կմ<sup>2</sup> մակերես և 337 հազար բնակչություն: Հանդիսանում է պատմական Հելլադայի մի մասը:

#### **46. Հունաստան, Մակեդոնիա, Մերքիս**

**46.1. Մեծ Ալբանիա** - էթնիկ ալբանացիները, որոնք ապրում են նշված երկրներում ցանկանում են ինքնորոշվել, իսկ ծայրահեղական ուժերը ճգտում են միավորվել մեկ տարածքում և ստեղծել Մեծ Ալբանիա պետությունը:

#### **47. Ղազախստան**

**47.1. Հյուսիսային և հյուսիս - արևելյան Ղազախստան** - մեծամասք ոուսներով բնակեցված մարզերը լուրջ վտանգ են Ղազախստանի անբողջականության համար, մանավանդ, որ երբեմն բարձրածայնվում է ոուսների այս մարզերում ինքնավարության մասին:

**47.2. Ույղուրներ** - հարավ-արևելքում ապրող բյուրբալեզու ժողովուրդը ցանկանում է միավորվել Չինաստանի հյուսիս-արևմուտքում ապրող ույղուրների հետ և ստեղծել միասնական պետություն:

## **48. Ղրղզստան**

**48.1. Ույղուրներ, տաջիկներ և ուզբեկներ** - այս ազգերի ներկայացուցիչները վտանգ են ներկայացնում իրենց անջատողական տրամադրվածությամբ և գործողություններով:

## **49. Ճապոնիա**

**49.1. Օկինավա** - Ոյուկյո կղզախմբի մեջ մտնող ամենամեծ կղզին պայքարում է անկախության համար: Տարածքը 1207 կմ<sup>2</sup> է, բնակչությունը՝ 1,4 մլն:

## **50. Մալայզիա**

**50.1. Սարահ** - Մալայզիայի արևելքում գտնվող այս մարզում հաճախակի են բախումները Սուլու սուլթանության կողմնակիցների և Մալայզիայի իշխանությունների միջև:

**50.2. Սարավակ** - Մալայզիայի արևելքում գտնվող երկրի ամենամեծ մարզում երբեմն բախումներ են լինում անկախության կողմնակիցների և Մալայզիայի իշխանությունների միջև:

## **51. Մալի**

**51.1. Ազավադ** - տես 64.2. Գ, կետ 3:

## **52. Մակենդոնիա**

**52.1. Իլիրիա** - բալկաններում գտնվող հին պատմական տարածքն են ուզում վերականգնել մակեդոնական քաղաքական որոշ ուժեր: Այն ընդգրկում է Բոսնիայի, Խորվաթիայի, Սերբիայի, Մակեդոնիայի մեծ մասը:

## **53. Մավրիկիոս**

**53.1. Ռոդրիգես** - Հնդկական օվկիանոսի հարավ-արևմուտքում գտնվող կղզին հանդիսանում է Մավրիկիոսի ինքնավար տարածք, մտնում է Մասկերանյան կղզիների կազմի մեջ: Ունի 104 կմ<sup>2</sup> մակերես և 40 հազար բնակչություն: Նպատակն է դառնալ անկախ պետություն:

## **54. Մարոկկօն**

**54.1. Սահարական Արաբական Ժողովրդավարական Հանրապետություն** - տես 62.2. Ա, կետ 6:

## **55. Մեքսիկա**

**55.1. Չյապաս** - Մեքսիկայի հարավ-արևելքում գտնվող նահանգը զբաղեցնում է 73 887 կմ<sup>2</sup> մակերեսով տարածք, բնակչության թիվը 5 մլն է: Ամբողջական անունն է Ազատ և Անկախ Նահանգ Չյապաս: Չախ ռադիկալ և այլ կուսակցություններ և ռազմական խմբավորումներ պայքարում են անկախության համար:

## **56. Միացյալ Թագավորություն**

**56.1. Անգլիա** - ձգում է դառնալ անկախ պետություն կամ ունենալ լայն ինքնավարություն (տես 64.3. Բ, կետ 14):

**56.2. Անգիա -** Անգիայի ժողովրդա-ազատագրական ասոցիացիան առաջարկում է ստեղծել առանձին պետություն:

**56.3. Քերմուդաներ -** որոշ քաղաքական ուժեր պայքարում են անկախության համար (տես 64.3. Բ, կետ 15):

**56.4. Գեղնսի -** ճգումում է դառնալ անկախ պետություն (տես 64.3. Բ, կետ 11):

**56.5. Կոռնոուլ -** Կոռնոուլի ազգայնական կուսակցության նպատակն է ստեղծել կամ անկախ պետություն՝ Կոռնոուլ կամ ինքնավար ռեզիոն նոյն անունով: Զբաղեցնում է 3 563 կմ<sup>2</sup> տարածք և ունի 517 հազար բնակիչ:

**56.6. Հյուսիսային Իոլանդիա -** ազգայնական և մի շարք այլ կուսակցություններ և միավորումներ ճգումում են վերամիավորման Իոլանդիայի հետ և ստեղծել միասնական Մեծ Իոլանդիան կամ ստեղծել անկախ պետություն: Հս. Իոլանդիան գտնվում է Իոլանդիա կղզու հյուսիսային մասում, ունի 13 843 կմ<sup>2</sup> մակերես, 1,8 մլն բնակչություն: Մայրաքաղաքն է Բելֆաստը՝ 580 հազար բնակչությամբ: Պաշտոնական լեզուներն են անգլերենը, իոլանդերեն և օլոքերական շոտլանդերենը:

**56.7. Մեն կղզի -** ճգումում է դառնալ անկախ պետություն (տես 64.3. Բ, կետ 12):

**56.8. Մոնսեռատ -** կղզու անջատականները պայքարում են անկախ պետություն ստեղծելու համար: Տես 64.3. Բ, կետ 18:

**56.9. Յորքշիր -** առաջարկում է ստեղծել Յորքշիրի ինքնավար ռեզիոն: Պատմական մարզ է Անգիայի հյուսիսում, ունի 15 712 կմ<sup>2</sup> մակերես:

**56.10. Շետլանդյան կղզիներ -** Օրկնեյս և Շետլանդական շարժում կուսակցության նպատակն է ստեղծել Ֆորվիկ անկախ պետությունը կամ վատագույն դեպքում Շետլանդական կղզիների ինքնավար ռեզիոնը՝ Մթկազմում: Կղզախումբը հանդիսանում է Շոտլանդիայի 32 մարզերից մեկը և գտնվում է Բրիտանական կղզիների հյուսիսային մասում՝ Հյուսիսային ծովի և Ատլանտյան օվկիանոսի սահմանագծում: Բաղկացած է 100-ից ավելի կղզիներից, որոնցից բնակեցված է 16-ը: Ունի 1 471 կմ<sup>2</sup> մակերես, 24 հազար բնակչություն: Վարչական կենտրոնն է Լերուիկը՝ 10 հազար բնակչությամբ: Պաշտոնական լեզուներն են անգլերենը և գելերենը:

**56.11. Շոտլանդիա -** նպատակն է ստեղծել անկախ պետություն: Չնայած անցկացված հանրաքեի արդյունքում այդ գաղափարը կյանքի չկոչվեց, սակայն անկախական տրամադրությունը և ճգումունը մնում են: Շոտլանդիան ունի 78 772 կմ<sup>2</sup> մակերեսով տարածք և 5,3 մլն բնակչություն: Մայրաքաղաքն է Էդինբուրգը՝ 470 հազար բնակչությամբ: Պաշտոնական լեզուներն են անգլերենը, շոտլանդերենը և գելերենը: Վերջինիս լեզվով շոտլանդիան անվանում են Ալբա: Շոտլանդիան մինչև 1707 թվականը եղել է անկախ թագավորություն: Ներկայումս Միացյալ Թագավորության կազմի մեջ մտնող մյուս վարչական միավորներից ամենաշատն ունի ինքնու-

րույնություն՝ իր սեփական խորհրդարանով, իրավական համակարգով և պետական եկաղեցիով:

**56.12. Ձերսի** - ձգտում է դառնալ անկախ պետություն (տես 64.3. Բ, կետ 13):

**56.13. Զիբրալթար** - ձգտում է դառնալ անկախ պետություն (տես 64.3. Բ, կետ 19):

**56.14. Տյորքս և Կայկոս** - կղզիների անջատականները պայքարում են անկախ պետություն ստեղծելու համար: Տես 64.3. Բ, կետ 21:

**56.15. Ուայտ կղզի** - ձգտում է դառնալ ինքնավար ռեզիոն ՄԹ կազմում: Գտնվում է Լա Մանշ նեղուցում և հանդիսանում է Անգլիայի ամենամեծ կղզին՝ 380 կմ<sup>2</sup> մակերեսով: Ունի 380 հազար բնակչի:

**56.16. Ուելս** - քաղաքական որոշ կուսակցություններ և ռազմական խմբավորումներ պայքարում են անկախ պետության ստեղծման համար: 20 779 կմ<sup>2</sup> մակերես և 3,1 մլն բնակչություն ունեցող Ուելսը գտնվում է ՄԹ-ի հարավ-արևմուտքում: Մայրաքաղաքն է Կարդիֆֆը՝ 350 հազար բնակչությամբ: Պաշտոնական լեզուներն են անգլերենը և վալլերենը: Վերջինիս լեզվով երկիրը կոչվում է Կեմրի:

**56.17. Ուեսսելս** - Ուեսսելսի ռեզիոնալ կուսակցությունը առաջարկում է ստեղծել ինքնավար ռեզիոն, որին պաշտպանում է նաև Ուեսսելսի Սահմանադրական Կոնվենցիան: Սաքսերի կողմից 6-րդ դարում ստեղծված անգլոսաքսոնական հետարիխիայի (բառացի՝ 7 թագավորության) 7 թագավորություններից մեկն է, որն հետագայում դարձել է Անգլիայի մաս: Գտնվում է Անգլիայի հարավ-արևմուտքում Կոռնուուլից արևելքը:

## 57. Մյանմա

**57.1. Արական** - արականներն ապրում են Ռակհայն նահանգում, որն ունի 36 778 կմ<sup>2</sup> մակերես և 3,2 մլն բնակչություն: Պայքարում են պատմական մարզի ինքնորոշման համար:

**57.2. Կաշին** - Կաշինները պայքարում են ինքնորոշման համար: Նահանգն ունի 89 041 կմ<sup>2</sup> մակերես և 1,5 մլն բնակչի:

**57.3. Կարեն** - կարեններով բնակեցված նահանգն ունի 30 383 կմ<sup>2</sup> մակերես և 1,7 մլն բնակչի: Նրանք իրենց երազած ապագա անկախ երկիրը և ներկայիս նահանգը անվանում են Կոտիհոլեյ:

**57.4. Մոներ** - ապրում են Մոն նահանգում, որն ունի 12 257 կմ<sup>2</sup> մակերես և 3,1 մլն բնակչի: Այն պատմական մարզ է երկրի հարավում, որը ժամանակին եղել է անկախ պետություն:

**57.5. Շան** - տես 64.2. Գ, կետ 27:

**57.6. Չին** - նահանգ հյուսիս - արևմուտքում, ունի 36 019 կմ<sup>2</sup> մակերես և 520 հազար բնակչի: Պայքարում են ինքնորոշման համար:

**57.7. Վա** - տես 64.2. Գ, կետ 37:

## **58. Մոլդովա**

**58.1. Մերձնեստրի Մոլդովական Հանրապետություն - տես 64.2., Բ, կետ 4:**

**58.2. Գագառության մասին հարաբերությունը** - Մոլդովայի հարաբերությունը ստեղծված Գագառության մեջ ինքնավար տարածքային կազմավորումը ձգտում է ավելի մեծ ինքնավարության՝ ընդհուպ մինչև անկախության: Մեծամասամբ գագառությունը բնակեցված տարածաշրջանն ունի 1 846,46 կմ<sup>2</sup> տարածք և մոտ 163 հազար բնակիչ: Վարչական կենտրոնն է Կոմրատը:

## **59. Նամիրիա**

**59.1. Կապրիվի գոտի - տես 65. Գ, կետ 23:**

**59.2. Ուեհորոք (Բանտուստան, Բաստերլենդ)** - ուեհորոքյան բաստերլերի հայրենիքը հանդիսացող այս տարածաշրջանը ներկայումս զբաղեցնում է 13 860 կմ<sup>2</sup> մակերես և ունի 60 հազար բնակիչ: 1976թ. ներկայիս Ուեհորոքը «Օդենդալի» պլանով ստացել է Բաստերլենդ անունը: Բաստերլերը հոլանդացի առաջին գաղութարարների և օրլամ-նամա սևամորթ ցեղատեսակի ժառանգներն են: 1990-ականներից սկսած բաստերլերը պայքարում են անկախ պետություն ստեղծելու համար: Ժամանակին այստեղ գոյություն է ունեցել Ուեհորոքի Ազատ Հարապետությունը:

## **60. Նիգեր**

**60.1. Ազատիս -** ուեգին Նիգերի հյուսիսում, զբաղեցնում է 667,8 հազար կմ<sup>2</sup> տարածք, բնակչությունը՝ 512 հազար մարդ: Հիմնականում բնակեցված է տուարեգներով: Որոշ քաղաքական և ռազմական խմբավորումներ ցանկանում են ստեղծել Տեսերյան Հանրապետությունը:

## **61. Նիգերիա**

**61.1. Բակասի -** տես 64.2. Գ, կետ 8:

**61.2. Բիաֆրա -** 1967-70 թթ. Նիգերիայի հարավ-արևելքում գոյություն է ունեցել Բիաֆրայի Հանրապետություն ինքնահօչակ պետությունը: Այն ունեցել է 76 400 կմ<sup>2</sup> տարածք, բնակչությունը՝ մոտավորապես 14 մլն մարդ: Մայրաքաղաքը եղել է Էնուգուն, որին հետագայում փոխարինել են Ումուխիան և Օվերին: 1970 թ. պետության բոնի ուժով լուծարումից հետո ել կրքերը մինչ օրս չեն հանդարտվել այս տարածաշրջանում:

**61.3. Իգբո -** Նիգերիայի հարավում բնակվող իգբո ժողովուրդը 1967թ. հոչակել է Բիաֆրա շճանաչված պետությունը, որը 1970 թ. ճնշվել և ոչնչացվել է: Իգբո ժողովուրդը ներկայումս էլ տրամադրված է պայքար մղելու իր անկախության համար: Պետության տարածքը կազմել է 77 306 կմ<sup>2</sup> տարածք և 13,5 մլն բնակչություն:

**61.4. Իջուն -** Նիգերիի դելտայի ազատազրության համար շարժումը ցանկանում է Նիգերիայի հարավում բնակվող էքնիկ իջուն ժողովուրդի բնակեցման արեալում ստեղծել Նիգերի Դելտա հանրապետությունը՝ ներկայիս համայնքի տեղում, որը զբաղեցնում է 70 հազար կմ<sup>2</sup> տարածք:

**61.5. Յորութա -** հիմնականում Նիգերիայում ապրող 30 միլիոնանոց ժողովուրդը ցանկանում է ստեղծել Յորութացիների Օդուդուվյան Հանրապետություն անկախ պետությունը:

**61.6. Օգոնի -** Գվինեական ծովածոցի առափնյա շրջաններում ապրող 650 հազար օգոնիները պայքարում են իրենց գոյատևման համար և ձգում են ինքնավարության:

## **62. Նիգերլանդներ**

**62.1. Արութա -** Նիգերլանդների անդրծովյան տարածքը ձգում է անկախության կամ լայն ինքնավարության (տե՛ս 64.3. Բ, կետ 24):

**62.2. Ֆրիսլանդիա -** Նիգերլանդների հյուսիսային մասում գտնվող արովինցիայի Ժողովրդական շարժումը պահանջում է առավել լայն ինքնավարություն տարածաշրջանի համար, որտեղ բնակչության մեծամասնությունը ֆրիզներն են: Ֆրիսլանդիան ունի 5 748,74 կմ<sup>2</sup> տարածք և մոտ 650 հազար բնակչություն:

## **63. Նոր Զելանդիա**

**63.1. Հարավային կղզի -** տարածքի մեծությունը 150 437 կմ<sup>2</sup> է, բնակչությունը՝ 1,1 մլն մարդ: Առաջարկվում է ստեղծել Նոր Մանստեր անկախ պետություն կամ Նոր Մանստեր արովինցիա ինքնավար ռեզիոն:

**63.2. Կուկի կղզիներ -** Նոր Զելանդիայի հետ ազատ ասոցացված ինքնակառավարվող պետական միավորումը ձգում է ավելի մեծ ինքնավարության կամ անկախության: Տե՛ս 64.3. Բ, կետ 27:

**63.3. Նիուե -** Նոր Զելանդիայի հետ ազատ ասոցացված ինքնակառավարվող պետական միավորումը ձգում է ավելի մեծ ինքնավարության կամ անկախության: Տե՛ս 64.3. Բ, կետ 28:

**63.4. Տոկելաու -** Նոր Զելանդիայի ինքնավար կախյալ տարածքը ձգում է ավելի մեծ ինքնավարության կամ անկախության: Տե՛ս 64.3. Բ, կետ 29:

## **64. Նորվեգիա**

**64.1. Լապլանդիա -** սաամները, որոնք բնակվում են հիմնականում Եվրոպայի հյուսիսում՝ Նորվեգիայի, Շվեդիայի, Ֆինլանդիայի և ՌԴ Մուրմանսկի մարզի հյուսիսում, ձգում են ինքնավարության կամ սեփական պետության ստեղծմանը:

## **65. Շվեդիա**

**65.1. Լապլանդիա -** տե՛ս 66, կետ 66.1:

**65.2. Սկանդիա -** Շվեդիայի ծայր հարավային ծովափնյա շրջանը Բորնհոլմ կղզու հետ միասին ժամանակին եղել է Դանիական թագավորության կազմում: Ներկայումս Բորնհոլմը պատկանում է Դանիային, իսկ մայրաքանչյան Սկանդիան Շվեդիայի կազմում է, որտեղ խոսակցական լեզուն ավելի մոտ է դանիերենին, քան շվեդերենին:

## **66. Ծվեյցարիս**

**66.1. Յուրա -** ամենաերիտասարդ կանոննն է Ծվեյցարիայի կազմում, որը գտնվում է հյուսիս-արևմուտքում: Ունի 838,8 կմ<sup>2</sup> մակերես և 71 հազար բնակիչ: Անկախության համար Յուրայական շարժում քաղաքական ուժը պայքարում է ինքնավարության կամ անկախության համար: Վարչական կենտրոնը Դելեմոն քաղաքն է:

## **67. Շրի Լամկա**

**67.1. Թամիներ -** Թամիլ Իլամ, տես 64.2.Գ, կետ 14:

## **68. Չեխիս**

**68.1. Մորավիա -** պատմական մարզ Չեխիայի արևելքում, Բոհեմ-Արևից արևելք: Մորավիանը պավոնական ժողովուրդ են, որոնք ապրում են Չեխիայում և Սլովակիայում: 525 հազար թվաքանակով մորավիանը ձգտում են ինքնավարության:

## **69. Չեռնոգորիս**

**69.1. Նովո-Պազարի Սանջակ -** առաջարկվում է ստեղծել Սանջակ պետությունը, որի տարածքները ներկայում բաժանված են երկու պետությունների՝ Սերբիայի և Չեռնոգորիայի միջև: Չեռնիանուր մակերեսը կազմում է 8 403 կմ<sup>2</sup>, որտեղ ապրում է շուրջ 430 հազար բնակիչ, որոնք հիմնականում մահմեդական սլավոններ են:

**69.2. Կոտորի ծոց -** Ալբիատիկ ծովի խոշորագույն ծովախորշը մի ժամանակ եղել է Խտախայի կազմում, որը ներկայում հավակնություններ ունի 87 կմ<sup>2</sup> մակերեսով տարածքի նկատմամբ:

**69.3. Ռուգին -** 11 հազար բնակիչ ունեցող քաղաքը գտնվում է Չեռնոգորիայի հարավում, Ալբիատիկ ծովի ափին: Բնակեցված է հիմնականում էրնիկ ալբանացիներով: Սեծ Ալբանիայի թիրախներից մեկն է:

## **70. Չիլի**

**70.1. Խոլա դե Պասկուա -** Վալպարախտ մարզի մեջ մտնող պրովինցիան գտնվում է Խաղաղ օվկիանոսում, որն իր մեջ ընդգրկում է Զատկի կղզին և հարակից մի քանի կղզիները: Ունի 163,6 կմ<sup>2</sup> մակերես և 5 806 բնակիչ: Պայքարում են ինքնորոշման համար:

**70.2. Մագալյանես -** Երկրի ամենահարավային վարչական մարզն է, որը բաղկացած է ինչպես մայրցամաքային, այնպես էլ կղզային հատվածներից: Տարածքի մեծությունը 132 291 կմ<sup>2</sup> է, բնակչությունը՝ 150 000 մարդ: Քաղաքական մի շարք կուսակցություններ պայքարում են Մագալյանեսի Անկախ Հանրապետության ստեղծման համար:

**70.3. Չիլին -** այս կղզախումբը մտնում է Չիլիական կղզախմբի կազմի մեջ: Ցանկանում է ձեռք բերել ինքնավարություն: Տարածքի մեծությունը՝ 9 181 կմ<sup>2</sup> է, բնակչությունը՝ 168 000 մարդ:

## 71. Չինասպան

**71.1. Ներքին Մոնղոլիա -** Չինաստանի հյուսիսում և հյուսիս-արևելյան գտնվող ինքնավար շրջանը, որն ունի 1 181 104 կմ<sup>2</sup> մակերես և 25 մլն բնակիչ, պայքարում է Չինաստանի կազմից դուրս գալու և Մոնղոլիայի հետ միավորվելու համար:

**71.2. Սինցյան, Արևելյան Թուրքեստան -** հիմնականում ույղուրներով բնակեցված Սինցյան-Ույղուրական ինքնավար շրջանը գտնվում է Երկրի հյուսիս-արևմուտքում: Նպատակը ույղուրներով բնակեցված բոլոր տարածքները մեկ պետության՝ Արևելյան Թուրքեստանի կազմում միավորելն է: Ինքնավար շրջանն ունի 1 743 441 կմ<sup>2</sup> է, բնակչությունը՝ 22 մլն:

**71.3. Տայվան -** տես 64.2. Ա, կետ 5:

**71.4. Տիբեթ -** Տիբեթի ինքնավար շրջանը գտնվում է Չինաստանի արևմուտքում և զբաղեցնում է 1 178 441 կմ<sup>2</sup> տարածք, բնակչությունը՝ 3 մլն է: Դալայ Լամայի գլխավորությամբ տիբեթցիները պայքարում են անկախության համար:

## 72. Պակիստան

**72.1. Բելուջիստան -** հակամարտությունը բելուջների և կառավարական ուժերի միջև սկսվել է դեռևս 1948թ.-ին և շարունակվում է մինչ օրս: Իրանի և Պակիստանի կառավարությունները ընդդիմանում են բելուջներին, որոնք պայքարում են անկախության համար:

**72.2. Բալտիստան -** Պակիստանի հյուսիսում գտնվող Գիլգիտ-Բալտիստանը կամ պարզապես Բալտիստանը հանդիսանում է նախկին Զամնու և Քաշմիր իշխանապետության մի մասը: Պայքարում են ինքնավարության համար:

**72.3. Սինդհեր -** Պակիստանում և Հնդկաստանում ապրող 60 մլն-ոց ժողովորդը պայքարում է ինքնորոշման և անկախ պետականություն ունենալու համար:

**72.4. Վազիրիստան -** տես 64.2. Գ., կետ 38:

**72.5. Փուչունիստան -** Պակիստանի հյուսիս-արևմուտքում և Աֆղանստանի հարավ-արևելյան ապրող փուչունների նպատակն է միասնական պետություն ստեղծելը: Նրանց ընդհանուր թվաքանակը 40 մլն է:

## 73. Պապուա Նոր Գվինեա

**73.1. Բուգենվիլ -** դեռևս 1975 թ. միակողմանի հոչակվել է անկախ պետություն, որը գոյատևել է 1 տարի: Նույնը եղել է 1990-98 թթ.: Պայքարը ներկայում էլ շարունակվում է Սողոմոնի Կողմիների կազմի մեջ մտնող Բուգենվիլ կղզում, որն ունի 9 375 կմ<sup>2</sup> մակերեսով տարածք և 235 հազար բնակիչ: Նպատակն է ստեղծել Հյուսիսային Սողոմոնի Կողմիների Հանրապետություն անկախ պետությունը:

## 74. Պերու

**74.1. Արեկիպա -** հարավում գտնվող այս պրովինցիան հին քաղաքակրական կենտրոններից մեկն է, որի անկախ պետականության վերականգնման համար պայքարում են տեղաբնակ հնդկացիական ազգությունները: Այն ունի 63 345 կմ<sup>2</sup> տարածք և 1,3 մլն բնակչություն:

## 75. Ուռամաղս

**75.1. Տվա -** Տվա կամ Բատվա պիզմեյան ժողովուրդը պայքարում է ինքնավարության համար: Ուռանդայում ապրում է 185 հազար, ամբողջ Կենտրոնական Աֆրիկայում շուրջ 325 հազար տվա ժողովրդի ներկայացուցիչ:

## 76. Ուռմինիա

**76.1. Տրանսիլվանիա -** Հունգարական Տրանսիլվանիայի վերածննդի միությունը ձգուում է Ուռմինիայի հյուսիս-արևելուտքը, որտեղ ապրում է շուրջ 1,5 մլն հունգար, վերամիավորել Հունգարիայի հետ կամ ստանալ ինքնավարություն:

**76.2. Սեկուի երկրամաս -** Տրանսիլվանիայի արևելքում, Ուռմինիայի գրեթե կենտրոնում 2009 թ. սեկենները հոչակել են ազգային տարածքային ինքնավարություն, որը չի ճանաչվում մինչ օրս: Հունգարական ծագում ունեցող այս ժողովուրդը պայքարում է ինքնավարության համար: Երկրամասն ունի 13,5 հազար կմ<sup>2</sup> տարածք և մոտ 700 հազար բնակիչ:

## 77. Ուռասապան

**77.1. Աղրգեյա -** Կրասնոդարի երկրամասի տարածքով շրջապատված Աղրգեյայի Հանրապետությունը զբաղեցնում է 7 792 կմ<sup>2</sup> տարածք և ունի 446 հազար բնակչություն: Աղրգեյները կամ արևմտյան չերքեզները սուննի մահմեդական են և ազգայնական ուժերը ցանկանում են դուրս գալ Ուռասատանի կազմից և լինել անկախ պետություն կամ կազմել մահմեդական մեծ ընտանիքի՝ Կովկասյան էմիրության մի մասը:

**77.2. Քաշկորտոստան -** իսլամիստ անջատողականները պայքարում են ՈՒ կազմից դուրս գալու և անկախ պետություն դառնալու համար: Տարածքը 142 947 կմ<sup>2</sup> է, բնակչությունը՝ 4,1 մլն մարդ:

**77.3. Քուրյարիա -** Սիրիայի հարավում գտնվող սուրյեկտի անջատողականները պայքարում են հանրապետությունը ՈՒ կազմից դուրս քերելու համար: Տարածքը մեծությունը 351 334 կմ<sup>2</sup> է, բնակչությունը՝ 1 մլն:

**77.4. Թարաքստան -** 1990 թ. ընդունվել է դեկլարացիա Թարաքստանի ինքնավարության մասին: Ներկայումս ՈՒ սուրյեկտ է, բայց ծայրահեղական իսլամիստները պայքարում են ՈՒ կազմից դուրս գալու և անկախ պետություն ստեղծելու համար: Տարածքի մեծությունը 67 847 կմ<sup>2</sup> է, բնակչությունը՝ 3,9 մլն:

**77.5. Չեչնիա -** սուննի մահմեդականներով բնակեցված տարածաշրջանը դեռևս 1991թ. հոչակվել է անկախ պետություն՝ Իչերիա չեչենական

հանրապետություն: Սակայն Ո-ուսաստանի իշխանություններին հաջողվեց 2000 թ. ուժով վերադարձնել Չեչնիան և ներկայումս որպես Չեչնական Հանրապետություն հանդիսանում է Ո-Դ սուբյեկտ: Չեչնի անջատականներն իրենց երկիրը ներկայումս համարում են որպես 2007 թ. հռչակված Կովկաս էմիրության մի վիլայեթ: Իչկերիան գրադեցրել է 15,9 հազար կմ<sup>2</sup> տարածք, Չեչնական Հանրապետությունն ունի 15,6 հազ. կմ<sup>2</sup> տարածք և 1,4 մլն բնակչություն:

**77.6. Գաղտան - Ո-Դ ամենահարավային սուբյեկտն այսօր ամենապայյունավտանգ տարածաշրջաններից է: Զբաղեցնում է 50 270 կմ<sup>2</sup> տարածք և ունի շուրջ 3 մլն բնակչություն: Այստեղ ապրող տարբեր ազգերը պայքարում են անկախության կամ միասնական իշլամական պետության ստեղծման համար:**

**77.7. Ինգերմանլանդիա - ներկայումս Ո-Դ-ի և Էստոնիայի տարածքներում գտնվող այս մարզը, որը ոուսերեն անվանվում է Ինգրիայի երկիր կամ Ինգրիա, ժամանակին պատկանել է մերք Շվեդիային, մերք Յարական Ո-ուսաստանին: Ներկայումս ձգտում են նախնառաջ վերամիավորել իրենց պատմական հողերը:**

**77.8. Ինգուշեթիա - Ո-Դ ամենափոքր սուբյեկտն է հանդիսանում՝ 3 685 կմ<sup>2</sup> տարածքով, որտեղ ապրում է շուրջ 453 հազար բնակիչ: Մայրաքաղաքն է Մագասը: Նախկինում մտել է Չեչեն-Ինգուշական ինքնավար հանրապետության կազմի մեջ: Կովկասի անհանգիստ տարածաշրջաններից մեկն է:**

**77.9. Կաբարդին - Բալկարիա - Ո-Դ կովկասյան մեկ այլ անհանգիստ սուբյեկտներից է: Այստեղ ապրող ժողովուրդների՝ կաբարդինների ու բալկարների անջատականները ձգտում են ինքնավարության: Հանրապետությունն ունի 12 470 կմ<sup>2</sup> մակերեսով տարածք և 860 հազար բնակիչ: Մայրաքաղաքն է Նալչիկը:**

**77.10. Կալինգրադի մարզ - Բալթյան Հանրապետության ստեղծման գաղափարի կողմնակիցն է այս մարզի յուրաքանչյուր երրորդ բնակիչը:**

**77.11. Կալմիկիա - գտնվում է Ո-Դ հյուսիսկովկասյան տարածաշրջանում, անհանգիստ գոտիներից մեկն է, չնայած արտաքին հանգստությանը: Զբաղեցնում է 74 731 կմ<sup>2</sup> տարածք, բնակչությունը 282 հազար է: Սահմանակից է Դաղստանին, Վոլգոգրադի և Աստրախանի մարզերին, Ստավրոպոլի երկրամասին: Մայրաքաղաքն է Էլիստան:**

**77.12. Կարելիա - Ո-ուսաստանի և Ֆինլանդիայի միջև բաժանված պատմական երկրամասը կարել ազգայնականները ցանկանում են միավորել մեկ պետության կազմում՝ միասնական Կարելիայի:**

**77.13. Հյուսիսային Օսերիա - ցանկություն ունեն վերամիավորվել Հարավային Օսիայի հետ և կազմել մեկ միասնական պետություն՝ Ո-Դ կազմում կամ անկախ: Հս.Օսերիան գրադեցնում է 7 987 կմ<sup>2</sup> տարածք և ունի 705 հազար բնակիչ:**

**77.14. Մորդովիա - Ո-Դ սուբյեկտը զբաղեցնում է 26 128 կմ<sup>2</sup> տարածք և ունի 812 հազար բնակիչ, որից 40 %-ն են էթնիկ մորդվաները: Վերջիններս իրենց հերթին բաժանվում են 2 ազգությունների՝ մոկշաներ, որոնք ապրում են հանրապետության արևմտյան հատվածում և էրզյաներ, որոնք ապրում են արևելյան հատվածում: Ազգայինական ուժերը պայքարում են անկախության համար:**

**77.15. Չեչնիա, Դաղստան, Ինգուշեթիա -** առաջարկվող պետությունը՝ Կովկասյան Էմիրաթ - այս հանրապետությունների անջատականների երազանքն է միավորել Հյուսիսային Կովկասի մահմեդականներին մեկ պետության կազմում՝ Կովկասյան Էմիրաթում: 2007 թ. հոչակված ինքնահոչակ այս պետության կազմի մեջ են մտնում Դաղստանը, Չեչնիան, Ինգուշեթիան, Կարարդինո-Բալկարիան, Կարաչաև-Չերքեզիան, Աղրգեյան, Հս. Օսիան, Ստավրոպոլի և Կրասնոդարի երկրամասերը: Նշված սուբյեկտները Էմիրության կազմում կոչվում են վիլայաթներ:

**77.16. Չերքեզիա -** Կրասնոդարի, Ստավրոպոլի երկրամասերի, Կարարդինո-Բալկարիայի, Կարաչաև-Չերքեզիայի մեծ մասը և Աղրգեյան միավորող մեկ այլ գաղափար է, որի նպատակն է միավորել չերքեզներով բնակեցված բոլոր տարածքները:

**77.17. Սախա-Յակուտիա -** Ո-Դ ամենամեծ սուբյեկտի անջատողականները պայքարում են բնական պաշարներով հարուստ հանրապետությունը դարձնել ինքնուրույն պետություն: Տարածքի մեծությունը 3 083 523 կմ<sup>2</sup> է, բնակչությունը 1 մլն:

**77.18. Սիբիր -** ծայրահեղականները և անջատողականները հայտարարում են, որ Սիբիրը Ուսւաստան չէ և բավական է իրենք աշխատեն, իրենց հարստությունները վաճառեն, իսկ ֆինանսները հոսեն դեպի Մոսկվա: Յանկանում են վերականգնել 1918 թ. գոյություն ունեցած Սիբիրի Հանրապետությունը:

**77.19. Տիվա -** Ո-Դ հարավում գտնվող սուբյեկտի անջատողականները պայքարում են անկախության համար: Տարածքը 168 604 կմ<sup>2</sup> է, բնակչությունը՝ 312 հազար:

**77.20. Ուղմուրդիա -** Պովոլժիեյում գտնվող Ո-Դ սուբյեկտն ունի 42 061 կմ<sup>2</sup> տարածք և 1,5 մլն բնակչություն: Անջատականների նպատակն է ստեղծել անկախ պետություն: Մայրաքաղաքն է Իժևսկը:

**77.21. Ուրալ -** 1990-ականների սկզբներին գոյատևած Ուրալյան Հանրապետությունը Ո-Դ Սահմանադրությամբ չնախատեսված սուբյեկտ է եղել: Անջատականները պայքարում են առավել մեծ ինքնավարության համար:

## **78. Մենեզալ**

**78.1. Կազամանս -** Սենեգալի հարավ-արևմտյան հատվածում մոտ 28 հազար կմ<sup>2</sup> տարածք զբաղեցնող մարզում, որտեղ ապրում են էթնիկ դիոլ-

ները, դեռևս 1982 թ. պայքար է սկսվել անջատողականների և կառավարական ուժերի միջև՝ ինքնավարության համար:

## **79. Մենք Քիրս և Նեիս**

**79.1. Նեիս** - կազմում է Մենք Քիրս և Նեիս պետության մի մասը, նրանից դուրս գալու իրավունքով: Ունի 93 կմ<sup>2</sup> մակերես և 12 000 բնակիչ:

## **80. Մերրիս**

**80.1. Կոստվոն և Մետոխիա** - փաստացի գոյություն ունի Կոստվոն պետությունը (տես 64.2. Ա, կետ 2): Վերջնական նպատակն է ստեղծել Մեծ Ալբանիան: Սա համալրանական ազգայնական զաղափարախոսություն է: Մեծ Ալբանիայի կազմի մեջ են մտնելու ներկայիս Ալբանիան, Կոստվոն, Սերբիայի Պրեշևի շրջանը, Մակեդոնիայի հյուսիս-արևմտյան շրջանները, Չեռնոգորիայի հարավային շրջանները, Հունաստանի հյուսիսային շրջանները:

**80.2. Վուսողիան** - ինքնավար երկրամասը ձգտում է ավելի մեծ ինքնավարության: Երկրամասն ունի 21 532 կմ<sup>2</sup> մակերեսով տարածք և մոտ 2 մլն բնակչություն:

**80.3. Հյուսիսային Վուսողիան** - հիմնականում հունգարներով բնակեցված այս հատվածը պահանջում է ստեղծել Հունգարական Ռեգիոնալ Ինքնավարություն:

## **80.4. Նովո-Պազարի Սանջակ** - տես 66, 69.1. կետը:

**80.5. Հյուսիսային Կոստվոն** - Կոստվոյի հյուսիսային մասի ոչ պաշտոնական անվանումն է, որը հիմնականում բնակեցված է սերբերով: Տարածքի մեծությունը 1 200 կմ<sup>2</sup> է, բնակչությունը՝ 68 հազար: Նպատակն է ստեղծել անկախ պետություն կամ միանալ Սերբիային:

## **81. Սոմալի**

**81.1. Հարավ-Արևմտյան Սոմալի** - այս պետությունը գոյություն է ունեցել 2002-06քք.:

**81.2. Մաախիր** - պաշտոնապես Մաախիր Սոմալի պետությունը գոյություն է ունեցել 2007-09 թթ.՝ Սոմալիինող և Պունտլենող տարածքում, հետո մտել է Պունտլենողի կազմի մեջ:

## **81.3. Պունտլենդ** - տես 64.2. Գ, կետ 28:

## **81.4. Ջուբալենդ** - տես 64.2. Գ, կետ 29:

## **81.5. Սոմալիլենդ** - տես 64.2. Գ, կետ 34:

## **82. Սուլամ**

**82.1. Բեչա** - հիմնականում Սուլամի հյուսիս-արևելքում ապրող քոչվոր անասնապահ ժողովուրդը երկրի անջատական ուժերից մեկն է հանդիսանում:

**82.2. Գարֆուր** - Սուլամի արևմուտքում գտնվող մարզը զբաղեցնում է 503 180 կմ<sup>2</sup> տարածք և ունի 7,5 մլն բնակիչ: Այստեղ ժամանակին գոյություն է ունեցել Դարֆուրի սուլթանությունը:

**82.3. Կորդոֆան** - Սուլանի հարավային մասում մինչև 1994 թ. գոյություն է ունեցել Կորդոֆան պատմական պրովինցիան, որն այդ ժամանակ բաժանվել է 3 մասի՝ հյուսիսային, հարավային և արևմտյան: Անշատական երրորդ պայքարում են վերամիավորման և ինքնավարության համար (Հարավային Կորդոֆանում՝ Հարավային Սուլանին միանալու համար):

**82.4. Նորիա** - տե՛ս 66, 17.2. կետը:

### **83. Վանուագու**

**83.1. Էսպիրիտու Սանու և հյուսիսային այլ կղզիներ** - Վանուատուի ամենամեծ կղզին է 3 955,5 կմ<sup>2</sup> մակերեսով: Ունի 40 000 բնակիչ: Ցանկանում են ստեղծել Վեմերանա պետությունը:

**83.2. Մալեկուլա** - Նոր Հերբիլյան կղզախմբի կազմում մեծությամբ 2-րդ կղզին է՝ 2041,3 կմ<sup>2</sup> մակերեսով: Ունի 23 000 բնակիչ: Պայքարում է Մալեկուլա պետության ստեղծման համար:

**83.3. Տանիա** - Տանիա Թագավորության անկախությունը հռչակվել է 1973թ., որը գոյատևել է մինչև 1974 թ. կեսերը: Կղզու արորիգենները շարունակում են իրենց պայքարն անկախության համար:

**83.4. Տաֆեա** - 1980 թ. կղզին հռչակել է անկախություն, որից հետո զինված հարձակման է ենթարկվել Վանուատուի իշխանությունների կողմից՝ բրիտանական զորքերի օգնությամբ: Կղզու բնակիչների մոտ պահպանվում են անկախական տրամադրությունները:

### **84. Վենեսուելա**

**84.1. Սոլիա** - Երկրի արևմուտքում գտնվող նահանգի որոշ քաղաքական ուժեր և խմբեր պայքարում են Սոլիա և Մարակայո Ազատ պետության ստեղծման համար: Տարածքը 631 000 կմ<sup>2</sup> է, բնակչությունը 3,7 մլն:

### **85. Վրասպան**

**85.1. Արխազիա** - տե՛ս 64.2. Ա, կետ 1:

**85.2. Աջարիա** - ինքնավար տարածք Երկրի ծայր հարավ-արևմուտքում: Տարածքի նկատմամբ իր հավակնություններն է հայտնում Թուրքիան, Աջարիան էլ լին չէ միանալ Երան կամ լինել անկախ պետություն: Զքաղեցնում է 2 899 կմ<sup>2</sup> տարածք և ունի 385 հազար բնակիչ: Տարածքի նկատմամբ հավակնություններ ունի նաև Ռուսաստանը:

**85.3. Գուրիա** - Վրաստանի արևմուտքում ապրող ավելի քան 300 000 գուրիացիները ապրում են Երկրի 3 շրջաններում և չունեն ինքնավարություն:

**85.4. Իմերեթիա** - իմերեթներն ապրում են Երկրի կենտրոնում, հիմնականում Քուրայիսում և չունեն ինքնավարություն:

**85.5. Կվեմո-Քարթի, Բորչալո** - հարավ-արևելյան շրջանները բնակեցված են մոտ 650 000 աղբբեջանցիներով, որոնք կազմում են մեծամասնություն: Նրանք պահանջում են տարածքը միացնել Աղբբեջանին:

**85.6. Հարավային Օսիա** - տե՛ս 64.2. Ա, կետ 3:

**85.7. Մեգրելիա -** հին և խիստ ավանդապաշտ ժողովուրդն ապրում է պարփակ տարածքում, չունի ինքնավարություն: Երբեմն-երբեմն բարձրածայնում են ինքնավարության կամ անկախության մասին:

**85.8. Ո-աչա -** հյուսիսային պատմական մարզում ապրող համանուն ժողովուրդը բնակվում է իհմնականում Ռիոնի գետի վերնագավառում՝ Ամբրոլաուրի կենտրոնով: Պայքարում են ինքնավարության համար:

**85.9. Սամցիս - Զավախը -** հայկական ուժերը ձգտում են ինքնավարության և ցանկանում են ստեղծել Զավախը ինքնավար շրջան: Տարածաշրջանն ունի 6 413 կմ<sup>2</sup> տարածք և մոտ 210 հազար բնակիչ, որից 55 % -ը հայեր են:

**85.10. Սվանեթիա -** պահները ապրում են Ինգորի գետի վերին հոսանքի շրջաններում՝ 3 154 կմ<sup>2</sup> ընդհանուր մակերեսով տարածքում: Պայքարում են ինքնավարության համար:

## **86. Տանգանիս**

**86.1. Զանգիբար -** կղզիներ են Հնդկական օվկիանոսում, աֆրիկյան ափերին մոտ: Ունի 2 654 կմ<sup>2</sup> տարածք և 1,3 մլն բնակչություն: Նախկինում եղել է սուլթանություն, մինչև որ միավորվել է Տանգանիկա պետության հետ ու կազմավորվել Տանգանիան: Այժմ կիսահնքնավար վարչական միավոր է, ձգտում են ավելի մեծ ինքնավարության:

**86.2. Մասաի -** Տանգանիայի հյուսիսում և Քենիայի հարավում ապրում են համապատասխանաբար 500-550 հազար և 400-450 հազար աֆրիկյան բնիկ մասաի կիսաքոչվոր ժողովուրդը: Պայքարում են ազգային ինքնուրույնությունը պահպանելու համար:

## **87. Տաջիկստան**

**87.1. Լեռնային Բաղախշանի ինքնավար մարզ -** պարբերաբար մարտական գործողություններ են տեղի ունենում Տաջիկստանի ամենամեծ վարչական միավորում, որոնց նպատակը անկախությունն է: Զբաղեցնում է 64 200 կմ<sup>2</sup>, բնակչությունը՝ 213 հազար մարդ:

**87.2. Ուզբեկներ և ղողգներ -** Տաջիկստանում ապրող այս ազգերի ներկայացուցիչները ցանկանում են իրենց բնակեցման արեալներում ձեռք բերել ինքնավարություն կամ միանալ իրենց մայր երկրին:

## **88. Տունիք**

**88.1. Միներվա -** 1972թ. հունվարի 19-ին Ֆիջիից հարավ գտնվող Սիներվա կորալյան խուրում հոչակվել է Միներվայի Հանրապետություն շճանաշված անկախ միկրոպետությունը: Նոյն թվականի վետրվարին Տոնգան հայտարարել է խուրը և նրան հարակից տարածները՝ որպես իր սեփականություն: Հետագայում փորձեր արվել են պետությունը վերստեղծելու ուղղությամբ, սակայն մինչ օրս փախուստի մեջ գտնվող «կառավարության» կողմից այդ պայքարը արդյունք չի տվել:

## **89. Տրինիդադ և Տոռագոն**

**89.1. Տոռագոն** - կղզին ունի 303 կմ<sup>2</sup> մակերես և մոտ 60 հազար բնակիչ: Պարբերաբար բարձրացվում է կղզու անկախանալու հարցը:

## **90. Ուզբեկստան**

**86.1. Կարակալպակստան** - դեռևս խորհրդային տարիներին Ուզբեկստանի արևմուտքում ապրող ժողովրդի համար առանձնացված էր ինքնավար հանրապետություն: 1990 թ. կարակալպակները հայտարարել են իրենց ինքնավարության մասին, սակայն ներկայումս որպես ինքնուրույն հանրապետություն մտնում են Ուզբեկստանի կազմի մեջ՝ Կարակալպակստանի Հանրապետություն անվամբ:

**86.2. Տաջիկներ և ղրղզներ** - Ուզբեկստանում ապրող այս ազգերի ներկայացուցիչները ցանկանում են իրենց բնակեցման արեալներում ձեռք բերել ինքնավարություն կամ միանալ իրենց մայր երկրին:

## **91. Ուկրաինա**

**91.1. Անդրկարպատներ** - այս տարածաշրջանում ապրող հունգարները Դոնբասում ընթացող իրադարձություններով ոգևորված բարձրաձայնեցին իրենց մայր հայրենիքին վերամիավորվելու կամ ինքնավարություն ձեռք բերելու մասին:

**91.2. Գոնքաս** - փաստացի գոյություն ունի Դոնեցկի Ժողովրդական Հանրապետությունը (տե՛ս 64.2. Բ, կետ 2):

**91.3. Լուգանշինա** - փաստացի գոյություն ունի Լուգանսկի Ժողովրդական Հանրապետությունը (տե՛ս 64.2. Բ, կետ 3):

**91.4. Ղրիմ** - փաստացի Ղրիմը ներկայումս մտնում է Ուկրաինայի Դաշնության կազմի մեջ:

## **92. Ֆիլիպիններ**

**92.1. Կենտրոնական Կորողիլիերա** - Լուսոն կղզու այս խոշոր լեռնային համակարգի տարածքում ապրում են մի քանի ազգություններ, որոնք պայքարում են իրենց լեզվական և մշակութային ինքնավարության համար:

**92.2. Մորո** - ավելի քան 40 տարի ազգային ազատարական պայքար մղող մորո ժողովուրդը ցանկանում է անկախ իսլամական պետություն ստեղծել՝ Ֆիլիպինների հարավում: Նրանք մոտ 3 մլն են:

## **93. Ֆինլանդիա**

**93.1. Օլանդներ** - առաջարկվող պետությունն է Օլանդյան կղզիները (տե՛ս 64.3. Ա, կետ 3):

**93.2. Լավլանդիա** - տե՛ս 66, 64.1 կետը:

## **94. Ֆիզի**

**94.1. Ո-ոտումա** - իրաբիսային ծագման կղզու մելանեզիական ռոտումա ժողովուրդը պայքարում է ինքնորշման համար: Կղզին ունի 43 կմ<sup>2</sup> մակերես և 2002 բնակիչ:

## **95. Ֆրանսիա**

**95.1. Բասկերի Երկիր - տե՛ս 66, 25.4. կետը:**

**95.2. Բրետան -** Կելտական լիգան քաղաքական և ռազմական այլ խմբավորումների հետ պայքարում է անկախ պետության ստեղծման համար: Բրետանը գտնվում է Ֆրանսիայի հյուսիս-արևմուտքում, զբաղեցնում է մոտ 30 հազար կմ<sup>2</sup> տարածք, որտեղ բնակչությունը է 4,5 մլն մարդ:

**95.3. Գվիանա -** «Ապագաղութացման և սոցիալական ազատության համար շարժում» կուսակցությունը ցանկանում է ստեղծել Անդրծովյան Անկախ Հանրապետությունը:

**95.4. Էլզաս -** Ֆրանսիայի հյուսիս-արևելքում գտնվող ռեգիոնն իր մեջ ընդգրկում է 2 դեպարտամենտ՝ ընդհանուր 828 կմ<sup>2</sup> մակերեսով և 1,9 մլն բնակչությամբ: Գլխավոր քաղաքը Ստրասբուրգն է: Հիմնական բնակչությունը էրնիկ էլզասցիներն են, որոնց շրջանում 1990-ականներից հետո ֆրանսերնից և գերմաններնից բացի ավելի մեծ տարածում է ստանում էլզասերենը: Երբեմն-երբեմն բարձրաձայնվում է այս ռեգիոնի՝ միասնական Էլզասի առավել մեծ ինքնավարության կամ անկախության մասին:

**95.5. Կորսիկա -** Միջերկրական ծովի մեծությամբ 4-րդ կղզու տարածքը 8 680 կմ<sup>2</sup> է, բնակչությունը 315 հազար մարդ: Այն Ֆրանսիայի հատուկ կարգավիճակ ունեցող տարածքներից մեկն է և կոչվում է Կորսիկայի տարածքային համայնք: Վարչականորեն բաժանվում է 2 դեպարտամենտի: Կորսիկացիները վաղուց պայքարում են առավել մեծ ինքնավարության կամ անկախության համար: Մայրաքաղաքն է Այաչչոն:

**95.6. Մայոր -** տե՛ս 64.3.Պ, կետ 5:

**95.7. Մարտինիկ -** կղզու անջատականները պայքարում են անկախության համար: Տես 62.3.Պ, կետ 6:

**95.8. Նիցցա -** Ֆրանսիական Ռիվերյայի կամ Լազուր Ափին գտնվող 71,92 կմ<sup>2</sup> մակերես և 360 հազար բնակչություն ունեցող խոշոր նավահանգստային քաղաքի նկատմամբ հավակնություններ ունի Իտալիան, պատճառաբանելով, որ այն նախկինում եղել է Իտալիայի կազմում: Նիցցայի ազգայնականները դեմ չեն Իտալիայի հետ վերամիավորման գաղափարին:

**95.9. Նոր Կալենդիա -** «Ազգային ազատագրության կանակյան սոցիալիստական ճակատ» քաղաքական կուսակցությունը և այլ ուժեր պայքարում են Նոր Կալենդիայի անկախության համար: Տե՛ս 64.3.Բ, կետ 35:

**95.10. Նորմանդիա -** Ֆրանսիայի հյուսիս-արևմուտքում գտնվող պատմական մարզը ներկայումս բաժանված է 2 մասի՝ Վերին և Ստորին Նորմանդիայի: Նորմանդացիները պայքարում են երկու մասերը միավորելու համար և ցանկանում են ձեռք բերել ավելի մեծ ինքնավարություն: Տարածաշրջանում ապրում է 3,2 մլն մարդ: Խոշոր քաղաքներն են Կանլ, Շերբուր, Ռուանը, Հավրը:

**95.11. Ռեյումիոն -** տե՛ս 64.3.Պ, կետ 7:

**95.12. Սավոյա -** Ֆրանսիայի հարավ-արևելքում, Ալյերի ստորոտներում գտնվող պատմական մարզը նույնպես բաժանված է 2 դեպարտամենտների միջև՝ Սավոյա և Վերին Սավոյա: Նախկինում եղել է ինքնուրույն հերցոգություն, որի մեջ են մտել Նիցցան, Ջենովան, Ժնևը, Պյենոնտը: Սավոյայի որոշ ուժեր ցանկանում են վերամիավորել բոլոր հողերը:

**95.13. Օքսիտանիա -** Ֆրանսիայի ամբողջ հարավային մերձծովյան շրջանը, ինչպես նաև Խտալիայի և Խսանիայի փոքր հատվածները միավորող տարածքը ժամանակին եղել է պատմական մարզ: Խտալական և խսանական հատվածներում օքսիտերենը դարձել է պաշտոնական լեզու: Օքսիտակտիվիստները ցանկանում են վերամիավորվել մեկ պետության կազմում:

**95.14. Ֆրանսիական Պոլինեզիա -** պոլինեզիացիները պայքարում են ինքնորոշման համար: Տես 64.3. Բ, կետ 34:

## 67. Խոշորագույն միջազգային կազմակերպությունները

**1) Ազատ առևտրի եվրոպական ասոցիացիա (ԱԱԵԱ, EACT, AELE) -** ստեղծվել է 1960 թ.: ազատ առևտրի գոտի ստեղծելու նպատակով: Ակզրնապես կազմակերպության անդամ են եղել Միացյալ Թագավորությունը, Դանիան, Նորվեգիան, Ավստրիան, Շվեյցարիան, Պորտուգալիան, հետո միացել են Ֆինլանդիան, Իսլանդիան և Լիխտենշտայնը: Ներկայումս կազմակերպության անդամ են միայն Իսլանդիան, Նորվեգիան, Շվեյցարիան և Լիխտենշտայնը: Կազմակերպության շտաբ-բնակարանը գտնվում է Շվեյցարիայի Ժնև քաղաքում:

**2) Ազատ առևտրի կյուսիսամերիկյան գոտի (ԱՀԳ, ԽԱՓՏԱ, NAFTA) -** կազմակերպությունը ստեղծվել է 1992 թ., գործողության մեջ է 1994 թ.: Անդամներն են ԱՄՆ-ն, Կանադան, Մեքսիկան: Կազմակերպության նպատակներից են այս երկրների միջև առևտրի և ինվեստիցիայի ոլորտների արգելքների վերացումը, անձնագրային և մաքսային արգելքների հաղթահարումը, միասնական մայրցամաքային շուկայի ստեղծումը և այլն:

**3) Ամերիկյան պետությունների կազմակերպություն (ԱՄԿ, OAS) -** միջկառավարական տարածաշրջանային կազմակերպություն է, որի անդամներն են Արևմտյան կիսագնդի պետությունների մեծագույն մասը: Ստեղծվել է 1948 թ.: Կենտրոնակայանը ԱՄՆ մայրաքաղաք Վաշինգտոնում է: Կազմակերպության անդամ է 35 պետություն: Հիմնական նպատակներն են՝ ամերիկյան մայրցամաքում խաղաղության և անվտանգության ապահովումը, անդամ-պետությունների միջև վեճերի խաղաղ կարգավորումը, ազբեսիայի դեմ համատեղ պայքարը, քաղաքական, տնտեսական և իրավական հիմնախնդիրների լուծմանն աջակցելը և այլն: Բարձրագույն մարմինը Գլխավոր վեհաժողովն է:

**4) Անկախ Պետությունների Համագործակցություն (ԱՊՀ, CHG) -** միջազգային կազմակերպություն, որն ստեղծվել է նախկին ԽՍՀՄ-ի երկրների՝

Ուուսաստանի, Ուկրաինայի և Բելառուսի կողմից: Ներկայում կազմակերպությունն ունի 9 անդամ՝ **Աղբքեջան, Բելառուս, Հայաստան, Ղազախստան, Ղրղզստան, Մոլդովա, Ռուսաստան, Տաջիկստան, Ուզբեկստան:** ԱՊՀ կանոնադրության մեջ նշված են պետությունների համատեղ գործունեության ոլորտները՝ մարդու իրավունքների և ազատության ապահովում, արտաքին քաղաքական գործունեության համադրում, համագործակցության ընդհանուր տնտեսական տարածքի ձևավորում, տրանսպորտի և կապի զարգացում, սոցիալական և միգրացիայի խնդիրների կարգավորում և այլն: ԱՊՀ մշտական գործող մարմնի՝ համակարգող խորհրդատվական կոմիտեի նստավայրը **Մինսկում** է:

**5) Առևտրի համաշխարհային կազմակերպություն (ԱՀԿ, WTO, WTO)** - ստեղծվել է 1995 թ., որի նպատակն է միջազգային առևտրի ազատականացումը և անդամ-պետությունների առևտրաքաղաքական հարաբերությունների կարգավորումը: Այն պատասխանատու է նոր առևտրային համաձայնագրերի մշակման և ներդրման համար, ինչպես նաև հետևում է, որ անդամները հետևեն այդ համաձայնագրերին: **Ներկայում ունի 159 անդամ-պետություն:** Կենտրոնակայանը գտնվում է Ծվեյցարիայի **Ժնև** քաղաքում:

**6) Ատոմային Էներգիայի միջազգային գործակալություն (ԱԷՄԳ, MAGAT, IAEA)** - միջազգային միջկառավարական կազմակերպություն է՝ ատոմային էներգիայի խաղաղ օգտագործման բնագավառում միջազգային համագործակցության համար: Ստեղծվել է 1956 թ., գործողության մեջ է 1957 թ.: ՀՀ-ն ԱԷՄԳ-ին անդամակցել է 1993 թ.: Ներկայում կազմակերպությունն ունի 168 երկիր: Ծովաք բնակարանը գտնվում է Ավստրիայի մայրաքաղաք **Վիեննայում:**

**7) Արարական Մաղրիբի միություն (ԱՄՄ, CAM, UMA)** - ստեղծվել է 1989 թ.: **Ալժիրի, Թունիսի, Լիբիայի, Մարոկկոյի և Մավրիտանիայի** տնտեսական ու քաղաքական միավորման նպատակով: Միության անդամ երկրների միջև հակասությունների հետևանքով կազմակերպության գործունեությունն ըստ էության սառեցված է:

**8) Արարական պետությունների լիգա - (ԱՊԼ, LAG, LEA)** - ստեղծվել է 1945 թ.: Միավորում է 22 արարական երկիր՝ **Ալժիր, ԱՄԷ, Բահրեյն, Եգիպտոս, Եմեն, Թունիս, Իրաք, Լիբանան, Լիբիա, Կոմորեր, Հորդանան, Մավրիտանիա, Մարոկկո, Պաղեստին, Ջիբութի, Սաուդյան Արաբիա, Սոմալի, Սուդան, Քարար, Քուվեյթ, Օման:** Միջիայի անդամակցությունը կասեցված է: Կազմակերպության բարձրագույն մարմինը լիգայի խորհուրդն է: Կենտրոնակայանը գտնվում է Եգիպտոսի մայրաքաղաք **Կահիրեյում:** Կազմակերպության գլխավոր նպատակներն են մասնակից պետությունների միջև կապերի ամրապնդումը, միացյալ քաղաքական ուղղությունների միջև կապերի ամրապնդումը, միացյալ քաղաքական ուղղությունների միջև համագործակցությունը, անկախությունը և գերիշխանությունը պաշտպանելու և արարական երկրների գործերը և շահերը քննարկելու հա-

մար: Այն ներառում է նաև այնպիսի հարցեր, ինչպիսիք են քաղաքացիությունը, անձնագրերը, վիզաները, հանգադրծների հանձնումը և այլն:

**9) Արժույթի միջազգային հիմնադրամ (ԱՄՀ, ՄԲՓ, IMF)** - հիմնադրվել է 1944 թ., որին անդամակցում է 188 երկիր: ԱՄԿ-ի մասնագիտացված հաստատություններից է: Կենտրոնական գրասենյակը գտնվում է **Վաշինգտոն** քաղաքում: Ստեղծման հիմնական նպատակն է եղել կայունացնել փոխարժեները և Երկրորդ համաշխարհային պատերազմից հետո աջակցել միջազգային վճարման համակարգի վերակառուցմանը:

**10) Աֆրիկյան միություն (ԱՄ, AC, AU)** - այս միությանը նախորդել են աֆրիկյան պետությունների միասնությունը, որը հիմնադրվել է 1963 թ. և աֆրիկյան տնտեսական միությունը, որը ստեղծվել է 1991 թ.: Աֆրիկյան միությունը ստեղծվել է 2002 թ., որի հիմնական նպատակներն են աֆրիկյան պետությունների համերաշխության, պաշտպանության, ինքնիշխանության, տարածքային ամբողջականության և անկախության ամրապնդումը, մայրցամաքում քաղաքական և սոցիալ-տնտեսական ինտեգրման արագացումը, մարդու իրավունքների պաշտպանությունը և այլն: Կազմակերպությունն ունեցել է **52** անդամ, որից մեկի՝ Մարոկկոյի անդամակցությունը դադարեցվել է, իսկ Կենտրոնաաֆրիկյան Հանրապետության, Եգիպտոսի և Գվինեա-Քիսասուինը՝ ժամանակավոր կասեցվել: Նստավայրը գտնվում է Եթովպիայի մայրաքաղաք **Ադիս-Աբերայում**:

**11) Բալթիկ ծովի պետությունների խորհուրդ (ԲԾՊԽ, СГБМ, CBSS)** - այն ստեղծվել է 1992 թ., որն ունի 12 անդամ՝ **Գերմանիա, Դանիա, Էստոնիա, Խոլանդիա, Լատվիա, Լեհաստան, Լիտվա, Նորվեգիա, Շվեդիա, Ա-ուսատան, Եվրոպական հանձնաժողով, Ֆինլանդիա**: Ստեղծված են աշխատանքներին խմբեր, որտեղ քննարկվում են տնտեսական համագործակցության, ժողովրդավարական ինստիտուտների, ճառագայքային և միջուկային անվտանգության, երիտասարդներին ուղղված քաղաքականության հարցերը:

**12) Բոլիվարյան ալյանս Ամերիկաների համար (ԲԱՎՀ, ALBA, ALBA)** - տարածաշրջանային սոցիալստական, քաղաքական, տնտեսական, գաղափարական կազմակերպությունը ստեղծվել է 2004 թ.: Գործունեության հիմնական նպատակը անդամ-պետությունների միջև առևտրի ոլորտում համագործակցությունն է, տնտեսական ինտեգրացիան, անկախության կողեկտիվ պահպանումը և զարգացումը սոցիալիզմի գաղափարների հիման վրա: Կազմակերպության անդամ են **11** երկիր՝ **Անտիգուա և Բարբուդա, Բոլիվիա, Գրենադա, Դոմինիկա, Էկվադոր, Կուրա, Նիկարագուա, Սենթ Լուիսա, Սենթ Վինսենթ և Գրենադիներ, Սենթ Քիս և Նևիս, Վենեսուելա**: Կենտրոնականը գտնվում է Վենեսուելայի մայրաքաղաք **Կարակասում**:

**13) ԲԲԻԿՍ (BRICS, BRICS)** - հինգ երկրների խումբ է, միջազգային առևտրա-տնտեսական կազմակերպություն, որի մեջ մինչև 2011 թ. մտնում էին Բրազիլիան, Ռուսաստանը, Հնդկաստանը և Չինաստանը և կոչվում էր

**ԲՐԻԿ:** 2011 թ.-ին կազմակերպությանը միացել է Հարավաաֆրիկյան Հանրապետությունը և ստացել է ներկայիս անվանումը (**B, R, I, C, S**) Brazil, Russia, India, China, South Africa երկրների առաջին տառերի անվանումով): ԲՐԻԿ-ի անդամները բնութագրվում են որպես արագ զարգացող հզոր երկրներ: Այս երկրների բարենպաստ դիրքը ապահովում է համաշխարհային տնտեսության մեջ նրանց կարևոր դերը:

**14) ԳՈՒԱՄ - Կազմակերպություն ժողովրդավարության և տնտեսական զարգացման համար (ՂՅԱՄ, GUAM) -տարածաշրջանային կազմակերպություն է, որն ստեղծվել է 1997 թ.: Ներկայում այն ունի 4 անդամ՝ **Վրաստան, Ուկրաինա, Ադրբեյչան, Մոլդովա:** Նրանց անվան սկզբնատարերով էլ կոչվում է ԳՈՒԱՄ: Նատավայրը գտնվում է Ուկրաինայի մայրաքաղաք **Կիևում:** Կազմակերպության անդամները ԱՊՀ-ի հետ կապերը խզած կամ սառեցրած պետություններն են, որոնք իրենց համագործակցությունը պատկերացնում են այլ կերպ:**

**15) Եվրոպական Միություն (ԵՄ, EC, EU)** - հիմնվել է 1992 թ.՝ Եվրոպական Միության մասին պայմանագրով՝ Մասստիճանական պայմանագրով: Միության անդամ դառնալու համար անհրաժեշտ պայմաններն են՝

-պետությունը պետք է լինի «Եվրոպական», որը պայմանավորված է ոչ այնքան աշխարհագրական դիրքով, որքան երկրի մշակույթով՝ ներառյալ նրա քաղաքական և իրավական ավանդույթները,

-Միության անդամ դառնալ ցանկացող պետությունը պարտավոր է հարգել Եվրոպական Միության պայմանագրում ամրագված սահմանադրական՝ «ազատության, ժողովրդավարության, մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների, ինչպես նաև իրավական պետության սկզբունքները»:

Եվրոպական հիմնական մարմիններն են՝ Եվրոպական խորհուրդը, Եվրոպական խորհրդարանը, Եվրոպական Միության խորհուրդը, Եվրոպական դատարանը: Կազմակերպության քաղաքական կենտրոններն են՝ **Քրյուսելը, Ստրասբուրգը և Լյուքսեմբուրգը:** Միության կազմի մեջ մտնում է 28 պետություն՝ **Ավստրիա, Բելգիա, Բուլղարիա, Գերմանիա, Դանիա, Էստոնիա, Իռլանդիա, Իսպանիա, Բուլղարիա, Լատվիա, Լեհաստան, Լիտվա, Լյուքսեմբուրգ, Խորվաթիա, Կիպրոս, Հունաստան, Հունգարիա, Մալթա, Միացյալ Թագավորություն, Նիդերլանդներ, Շվեյցարիա, Զեխիա, Պորտուգալիա, Ռումինիա, Սլովակիա, Սլովենիա, Ֆինլանդիա, Ֆրանսիա:** Ընդհանուր տարածքը 4 324 782 կմ<sup>2</sup> է, բնակչությունը՝ մոտ 510 մլն:

**16) Եվրոպայի խորհուրդ (ԵԽ, CE, CE)** - ստեղծվել է 1949 թ.: Անդամակցում է 47 երկիր: Այն նպաստում է մարդու իրավունքների հիմնական սկզբունքների առաջխաղացմանը: Կազմակերպությունը ձգտում է խթանել այդ ոլորտում անդամ-երկրների օրենսդրությունների նույնականացումը: Իրավասու է մարդու իրավունքների պաշտպանության մակարդակի փորձա-

քննություն անցկացնել կոնկրետ երկրում, ինչպես օրենսդրության, այնպես էլ գործնականում օրենքների կիրառման առումով։ Կենտրոնակայանը գտնվում է Ֆրանսիայի **Ստրասբուրգ** քաղաքում։

**17) Եվրոպայում անվտանգության և համագործակցության կազմակերպություն (ԵԱՀԿ, OSCE, ՕԲԸ) - հիմնվել է 1973 թ.։ Իր մեջ ներառում է 57 երկիր Եվրոպայից, Կենտրոնական Ասիայից և Հյուսիսային Ամերիկայից։ Կազմակերպությունը կոչված է կանխելու տարածաշրջանում ծագող հակամարտությունները։ Հիմնական մարմիններն են՝ Պետությունների դեկավարների և կառավարությունների հանդիպում, Նախարարների խորհուրդ, Մշտական խորհուրդ (նիստերը՝ **Վիեննայում**), խորհրդարանական ասամբլեա (քարտուղարությունը՝ **Կոպենհագենում**), Տնտեսական ֆորում, Անվտանգության ոլորտում համագործակցության ֆորում (**Պրահա**), Մարդու իրավունքների և ժողովրդավարության ինստիտուտ (**Լարշավա**), քարտուղարություն (**Վիեննա**)։**

**18) Զարգացման և վերականգնման համաշխարհային բանկ (ՂՎՀԲ, MBRP, IBRD) - սա 1944 թ.-ին ստեղծված Համաշխարհային բանկի հաստատություններից է։ ՂՎՀԲ-ի նախատակն է աղքատության նվազեցումը, ոփսկային կառավարման, ապրանքների, վերլուծական ծառայությունների մատուցումը միջին եկամուտ ունեցող և վարկառու երկրներին։ Այն ունի 189 անդամ երկիր։ Նախավայրը ԱՄՆ մայրաքաղաք **Վաշինգտոն** է։**

**19) Թյուրքական խորհուրդ (ԹԽ, TC, TC) - թյուրքալեզու պետությունները միավորող միջազգային կազմակերպությունը ստեղծվել է 2009 թ.՝ Նախիջևանում։ Կազմակերպության գլխավոր նախատակն է անդամ-պետությունների համակողմանի համագործակցության զարգացումը։ Այն ունի 4 անդամ՝ **Ազրբեջան**, **Թուրքիա**, **Ղազախստան**, **Լրդաստան**։ Քարտուղարության շտաբ-բնակարանը գտնվում է Թուրքիայի **Ստամբուլ** քաղաքում, խորհրդարանական ասամբլեան՝ **Բարվում**, Թյուրքական խորհրդի ակադեմիան՝ **Ղազախստանի մայրաքաղաք Աստանայում**։**

**20) Թյուրքական մշակույթի միջազգային կազմակերպություն (ԹՄՄԿ, TİYORKSOY, TURKSOY) - թյուրքալեզու երկրները միավորող միջազգային մշակութային կազմակերպությունը ստեղծվել է 1993 թ.։ Հիմնական նախատակն է թյուրքական ժողովուրդների միջև համագործակցությունը՝ թյուրքական ժողովուրդների ընդհանուր նյութական և մշակութային հուշարձանների պահպանման, զարգացման և ապագա սերնդին փոխանցման համար։ Շտաբ-բնակարանը գտնվում է Թուրքիայի մայրաքաղաք **Անկարայում**։ Կազմակերպությունն ունի 16 անդամ, որոնց թվում են ինչպես անկախ պետություններ, այնպես էլ երրորդ երկրի դաշնային սուբյեկտներ կամ ինքնավար տարածաշրջաններ՝ **Ազրբեջան**, **Ալբայի Հանրապետություն**, **Բաշկորտոստան**, **Գագաուզիա**, **Թաքարստան**, **Թուրքիա**, **Թուրքմենստան**, **Խակասիա**, **Կարակալպակստան**, **Հյուսիսային Կիպրոսի Թուրքական Հանրապե-****

**տուրյուն, Ղազախստան, Ղրղզստան, Սախայի Հանրապետություն, Տիվա, Ուզբեկստան:**

**21) Ինտեգրման լատինամերիկյան ասոցիացիա (ԼԱՎ, ԼԱԻ, ALADI)** - ստեղծվել է 1980 թ., որ միավորում է Լատինական Ամերիկայի 13 պետություն՝ Արգենտինա, Բոլիվիա, Բրազիլիա, Էկվադոր, Կոլումբիա, Կուրսա, Մեքսիկա, Չիլի, Պանամա, Պարագվայ, Պերու, Վենեսուելա, Ուրուգվայ: Հիմնական նպատակը տարածաշրջանային տնտեսական համագործակցության և առևտրի զարգացումն է:

**22) Իսլամական համագործակցություն կազմակերպություն (ԻՀԿ, OIC, OIC)** - կրոնաքաղաքական կազմակերպությունը ստեղծվել է 1969 թ.: Ընդգրկում է 57 իսլամական պետություն: Բարձրագույն մարմիններն են՝ անդամ պետությունների խորհրդարանների խոսնակների գագաթաժողովը, խորհուրդը, գործադիր կոմիտեն և քարտուղարությունը: Կազմակերպության նպատակն է ամրապնդել անդամ պետությունների միջև իսլամական համեմատչյալ սոցիալ-տնտեսական, մշակութային, գիտական և այլ բնագավառներում համագործակցությունը, վերացնել ռասսայական խտրականությունը, աջակցել Պաղեստինի ժողովրդի պայքարին և այլն: Կենտրոնակայանը գտնվում է Սաումյան Արարիայի Ջիդդա քաղաքում:

**23) Լատինամերիկյան տնտեսական համակարգ (ԼԱՏՀ, ԼԱԷС, SELA)** - տարածաշրջանային տնտեսական կազմակերպությունը ստեղծվել է 1975 թ., որի կազմի մեջ մտնում է 26 երկիր՝ Արգենտինա, Բարբադոս, Բոլիվիա, Բրազիլիա, Գայանա, Գվատեմալա, Գրեենադա, Գոմինիկյան Հանրապետություն, Էլ Սալվադոր, Էկվադոր, Կոլումբիա, Կոստա Ռիկա, Կուրսա, Հայիքի, Հոնդուրաս, Մեքսիկա, Նիկարագուա, Չիլի, Պանամա, Պարագվայ, Պերու, Չամայկա, Սուրինամ, Վենեսուելա, Տրինիդադ և Տոբրագո, Ուրուգվայ: Կազմակերպության հիմնական նպատակներն են՝ տարածաշրջանի երկրների տնտեսության ցանկացած ոլորտում համագործակցության ամրապնդումը, միջազգային համաժողովներում իրենց գործողությունների կողրդինացումը՝ այլ խմբավորումների և պետությունների նկատմամբ: Կենտրոնակայանը գտնվում է Վենեսուելայի մայրաքաղաք Կարակասում:

**24) Խաղաղօվկիանոսյան անվտանգության դաշնագիր (ԽԱԴ, AHZIOC, ANZUS)** - ազգեսիլ ռազմաքաղաքական միավումը ստեղծվել է 1978 թ., որի մեջ մտնում են Ավստրալիան, Նոր Զելանդիան և ԱՄՆ-ը: Ստեղծվել է վերջինիս նախաձեռնությամբ՝ կողեկտիվ պաշտպանության ամրապնդման համարասման նպատակով: Կազմակերպությունը մասնակցել է մի շարք պատերազմական գործողությունների, ինչպիսիք են կորեականը և վիետնամականը, ինչպես նաև ներգրավվել են Կամբոջայի և Լաոսի ներքին գործերի մեջ:

**25) Կարիբյան համագործակցություն (ԿՀ, ԿԱՐԻԿՈՄ, CARICOM)** - առևտրա-տնտեսական միությունը ստեղծվել է 1973 թ., որի

կազմի մեջ մտնում է **15 երկիր՝ Անտիգուա և Բարբուդա, Բահամներ, Բարբա-դոս, Բելիզ, Դոմինիկա, Գայանա, Գրենադա, Հայիթի, Մոնսեռոատ, Զամայ-կա, Սենք Քիբս և Նևիս, Սենք Լյուիսիա, Սենք Վինսենթ և Գրենադիների, Սուրինամ, Տրինիդադ և Տոբակո:** Նպատակը անդամ-պետությունների տնտեսության մերձեցումն ու մաքսային պարտականությունների վերացումն է, ընդհանուր մաքսային ռեժիմի սահմանումը, միասնական առևտրային քա-ղաքականության և գյուղատնտեսության ոլորտում ընդհանուր քաղաքակա-նության վարումը ենթակառուցվածքների, գրոսաշրջության, կապի և տրանս-պորտի ոլորտներում համագործակցությունը և այլն:

**26) Կարմիր խաչի միջազգային կոմիտե (ԿԽՄԿ, MKK, ICRC)** - հիմնվել է 1863 թ.: Այն անկողնակալ, չեզոք և անկախ կազմակերպություն է, որի առաքելությունը պատերազմից և ներքին ընդհարումներից տուժածներին օգնելը և նրանց կյանքի ու արժանապատվության պաշտպանությունն է: Կենտրոնական գրասենյակը գտնվում է շվեյցարական **Ժնև** քաղաքում:

**27) Կենտրոնաամերիկյան պետությունների կազմակերպություն (ԿՎՊԿ, OCAГ, OCAS)** - ստեղծվել է 1951 թ., որը միավորում է 6 երկիր՝ **Գվա-տեմալա, Էլ Սալվադոր, Կոստա Ռիկա, Հնդկուրաս, Նիկարագու, Պանամա:** Կենտրոնակայանը գտնվում է Էլ Սալվադորի մայրաքաղաք Սալվադոր քա-ղաքում: Կազմակերպության նպատակը մշակութային, տնտեսական և քա-ղաքական համագործակցությունն է:

**28) Համագործակցություն (մինչև 1947 թ.՝ Ազգերի Բրիտանական Հա-մագործակցություն) - հիմնվել է 1931 թ.-ին: Միջկառավարական կազմակեր-պություն է՝ **52 անդամ անկախ պետությունների** համագործակցություն: Բո-լոր անդամները, բացառությամբ Ռուսանդայի և Մոզամբիկի Բրիտանական կայսրության մաս են կազմել: Բրիտանական կայսրությունից է զարգացել ազգերի համագործակցությունը: Անդամ-երկրները համագործակցում են ընդ-հանուր արժեքների և նպատակների շրջանակներում:**

**29) Համագործակցության շանհայան կազմակերպություն (ՀՇԿ, SCO, SCO)** - կազմակերպությունը ստեղծվել է 2001 թ. Չինաստանի Չան-հայ քաղաքում: Այն մշտապես գործող միջկառավարական կազմակերպութ-յուն է, որի անդամներն են **Չինաստանը, Ռուսաստանը, Ղազախստանը, Ղրղզստանը, Տաջիկստանը, Ուզբեկստանը, Հնդկաստանը և Պակիստանը:** Կազմակերպությունը ստեղծված է անդամ-պետությունների միջև համագոր-ծակցության ամրապնդման, տարածաշրջանում խաղաղության պահպան-ման և ապահովման, անվտանգության և կայունության ապահովման հա-մար: Հիմնական մարմիններն են՝ անդամ-երկրների դեկավարների խոր-հուրդ, կառավարությունների դեկավարների խորհուրդ, քարտուղարություն (**Պեկին**), Տարածաշրջանային հակասահարեկչական կառուցվածքի գործա-դիր կոմիտե (**Տոշքենդ**):

**30) Համաշխարհային բանկ (ՀԲ, ВБ, WB)** - միջազգային ֆինանսական կազմակերպությունը ստեղծվել է 1945 թ., որն այսօր ունի **189** անդամապետություն: Կազմակերպության նպատակն է զարգացող երկրներին ֆինանսական և տեխնիկական աջակցության ցուցաբերումը: Ունի գործունեության մոտ 35 ոլորտ, որոնցից են՝ աղքատության, պարենի, գյուղատնտեսության, անտառային տնտեսության, կրթության, վարակային հիվանդությունների, ֆինանսական ճգնաժամերի, կոռուպցիայի, գլոբալիզացիայի և այլ խնդիրները: Ծուար բնակարանը գտնվում է **Վաշինգտոնում**:

**31) Հավաքական անվտանգության պայմանագրի կազմակերպությունը (ՀԱՊԿ, ОДКБ, CSTO)** - կազմակերպությունը հիմնադրվել է 1992 թ.՝ հավաքական անվտանգության մասին պայմանագրի (ՀԱՊ) ստորագրմամբ: 2002 թ. որոշվել է ՀԱՊ-ը վերածել լիարժեք միջազգային կազմակերպության: ՀԱՊԿ-ի խնդիրներն են՝ պաշտպանել անդամ երկրների տարածքային տնտեսական տարածությունը բնակչության և օժանդակ ստորաբաժանումների համատեղ ջանքերով՝ ցանկացած արտաքին ռազմաքաղաքական ազրեւորներից, միջազգային ահարեւկիշներից, ինչպես նաև խոշոր չափերի բնական աղետներից: Ներկայումս ունի **6** անդամ՝ **Բելառուս, Հայաստան, Ղազախստան, Ղրղզստան, Առևաստան, Տաջիկստան:** Ծուար բնակարանը գտնվում է **Մուսկվայում:** Ընդհանուր տարածքը 20 428 032 կմ<sup>2</sup> է, բնակչությունը՝ մոտ 190 մլն:

**32) Հարավամերիկյան ազգերի միություն (ՀԱՄ կամ ՅՈՒՆԱՍՈՒՐ, ՅՈՒՆԱՍՈՒՐ, UNASUR) –** տարածաշրջանային քաղաքական և տնտեսական կազմակերպությունը միավորում է Հարավային Ամերիկայի երկրներին, որը ստեղծվել է 2004 թ.: Անդամ-պետություններն են՝ **Արգենտինա, Բոլիվիա, Բրազիլիա, Գայանա, Էկվադոր, Կոլումբիա, Չիլի, Պարագվայ, Պերու, Սուրինամ, Վենեսուելա, Ուրուգվայ:** Քաղաքական կենտրոններն են Էկվադորի մայրաքաղաք **Կիտոն** (Սան Ֆրանցիսկո դե Կիտո) և Բոլիվիայի **Կոչարամբա** քաղաքը:

**33) Հարավ-Արևելյան Ասիայի պետությունների ասոցիացիա (ՀԱԱՊԱ կամ ԱՍԵԱՆ, ACEAN, ASEAN) –** տարածաշրջանային կազմակերպություն է, որի կազմի մեջ մտնում են **10** երկիր՝ **Բրունեյ, Թայլանդ, Ինդոնեզիա, Լաոս, Կամբոջա, Մալայզիա, Մյանմա, Սինգապոր, Վիետնամ, Ֆիլիպիններ:** Կենտրոնակայանը գտնվում է Ինդոնեզիայի մայրաքաղաք **Ջակարտայում:** Կազմակերպությունը կոչված է մասնակից երկրների տնտեսական, սոցիալական, մշակութային համագործակցության զարգացմանը, տարածաշրջանում խաղաղության և կայունության հաստատմանը: Ղեկավար մարմիններն են՝ արտաքին գործերի նախարարների խորհրդի ամենամյա նստաշրջանը, նստաշրջանների միջև՝ Մշտական կոմիտե:

**34) Հյուսիսային խորհուրդ (ՀԽ, CC, NC)** - 1952 թ. ստեղծված կազմակերպության նպատակն է Հյուսիսային Եվրոպայի երկրների խորհրդարան-

ների միջև համագործակցության համադաստմբ: Կազմակերպությունն ունի 8 անդամ-պետություն և տարածք՝ **Դանիա, Իսլանդիա, Նորվեգիա, Շվեդիա, Ֆինլանդիա, Օլանդներ (Ֆինլանդիա), Գրենլանդիա, Ֆարերներ (Երկուսն է՝ Դանիա):** Կենտրոնակայանը գտնվում է Դանիայի մայրաքաղաք **Կոպենհագենում:**

**35) Հյուսիսատլանտյան համաձայնագրի կազմակերպություն, Հյուսիսատլանտյան դաշինք (ՆԱՏՕ, NATO, NATO)** - ստեղծվել է 1949 թ.: Երկրորդ աշխարհամարտի ավարտից և սառը պատերազմի մեկնարկից հետո Արևմտյան Եվրոպայի և Կանադայի ու ԱՄՆ-ի միջև ստեղծվել է հյուսիսատլանտյան դաշինքը, որի նպատակն էր անվտանգության երաշխիքներ ապահովել Խորհրդային Սիուրյունից եկող սպառնալիքների դեմ: Սառը պատերազմի ավարտից հետո զարկ տրվեց ՆԱՏՕ-ի ընդլայնմանը: Ներկայումս ՆԱՏՕ-ի գլխավոր մարտահրավեր է սահմանված ահարեւկչությունը: Այժմ ունի 28 անդամ պետություն՝ **Ալբանիա, ԱՄՆ, Բելգիա, Բուլղարիա, Գերմանիա, Դանիա, Էստոնիա, Թուրքիա, Իսլանդիա, Իսպանիա, Իտալիա, Լատվիա, Լեհաստան, Լիտվա, Լյուքսեմբուրգ, Խորվաթիա, Կանադա, Հունաստան, Հունգարիա, Միացյալ Թագավորություն, Նիդերլանդներ, Նորվեգիա, Չեխիա, Պորտուգալիա, Ռումինիա, Սլովակիա, Սլովենիա, Ֆրանսիա: Գլխավոր գրասենյակը գտնվում է Բելգիայի մայրաքաղաք **Բրյուսելում:****

**36) Մաքսային միուրյուն Եվրափական տնտեսական ընկերակցության շրջանակներում կամ Բելառուսի, Ղազախստանի և Ռուսաստանի Մաքսային Միուրյուն (ՄՄ, TC)** - միջազգային տնտեսական կազմակերպությունն ունի ընդհանուր արտաքին մաքսային սահմանների ձևավորման, միասնական արտաքին տնտեսական քաղաքականության, սակագների, գների և ընդհանուր շուկայի գործառնության այլ քաղկացուցիչների մշակման նշանակություն: Կազմակերպությունը ստեղծվել է 2010 թ., որի անդամներն են **Բելառուսը, Ղազախստանը, Ռուսաստանը և Հայաստանը (2014 թ. հոկտեմբերի 10-ից):**

**37) Մեծ յոթնյակ կամ Մեծ ութնյակ (G7 կամ G8)** - միջազգային ակումբ է, որը սկզբնապես միավորում էր **ԱՄՆ-ն, Գերմանիան, Իտալիան, Կանադան, Միացյալ Թագավորությունը, ճապոնիան և Ֆրանսիան**, որոնց 1996 թ. միացել է **Ռուսաստանը:** Միջազգային կազմակերպության կարգավիճակ չունի: Այն տնտեսապես առավել զարգացած **7 կամ 8 երկրների** դեկավարների հանդիպում է, որի շրջանակներում քննարկվում և իրականացվում են միջազգային արդիական խնդիրների նկատմամբ մոտեցումների համաձայնեցումը:

**38) Մեծ քսանյակ (G20 կամ G-20)** - առավել զարգացած տնտեսություն ունեցող երկրների կառավարությունների և կենտրոնական բանկերի նախագահների միջազգային խորհրդաժողովի ձևաչափ է: Ընդհանուր առմամբ G20-ն իրենից ներկայացնում է համաշխարհային համախառն ներքին արդ-

յունիքի 85 %-ը, համաշխարհային առևտրի 75 %-ը և Երկրի բնակչության 2/3-ը ընդգրկող տարածքը: Կազմակերպության անդամ են 19 պետություն և մեկ Միություն՝ ԱՄՆ, Ավստրալիա, Արգենտինա, Բրազիլիա, Գերմանիա, Թուրքիա, Ինդոնեզիա, Իտալիա, Կանադա, ՀԱՀ, Հարավային Կորեա, Հնդկաստան, Ճապոնիա, Մեքսիկա, Միացյալ Թագավորություն, Չինաստան, Ռուսաստան, Սաուդիա Արաբիա, Ֆրանսիա, Եվրոպիություն:

**39) Միավորված Ազգերի Կազմակերպություն (ՄԱԿ, ՕՕԻ, ՄԿ)** - միջազգային կազմակերպություն, որն ստեղծվել է միջազգային անվտանգության և խաղաղության պահպանման համար, Երկրների միջև համագործակցության զարգացման համար: Միացյալ ազգեր անվանումն առաջին անգամ օգտագործվել է 1942 թ. հունվարի 1-ին: Որպես կազմակերպություն ստեղծվել է 1945 թ. հոկտեմբերի 24-ին՝ 51 երկրի կողմից: **Ներկայումս անդամակցում է 193 երկիր:** Գլխավոր կենտրոնակայանը ԱՄՆ Նյու Յորք քաղաքում է: Հայաստանի Հանրապետությունը ՄԱԿ-ի անդամ է 1992 թ. մարտի 2-ից:

**40) Միավորված Ազգերի Կրթության, Գիտության և Մշակույթի Կազմակերպություն (ՅՈՒՆԵՍԿՕ, ՅՈНЕԿՏՈ, ՄԿԵՍԿՕ)** - հատուկ գործակալություն է, որն հիմնվել է 1945 թ.: Նրա նպատակն է համերաշխության և անվտանգության օժանդակությունը՝ կրթության, գիտության և մշակույթի ոլորտներում համագործակցության խրախուսման միջոցով՝ համընդհանուր հարգանքի և արդարության տարածման համար: Կազմակերպության գլխավոր վարչությունը գտնվում է **Փարիզում է 195 երկիր:**

**41) 77-ի խումբ (G77)** - հիմնվել է 1964 թ. զարգացող երկրների տնտեսական շահերն առաջ մղելու համար: Ակզրնապես ուներ 77 անդամ-պետություն, ներկայումս այն ունի **130** անդամ: Ներկայումս այն զարգացող երկրների խոշորագույն միջազնական կազմակերպությունն է, որը գործում է ՄԱԿ-ի ու նրա մարմինների շրջանակներում:

**42) Նավթ արտահանող երկրների կազմակերպություն (ՆԱԵԿ կամ ՕՊԵԿ, ՕՊԵԿ, OPEC)** - նավթի գների կայունացման նպատակով նավթարդյունահանող երկրների կողմից 1960 թ. ստեղծված կազմակերպությունը միավորում է 13 երկիր՝ Ալժիր, ԱՄԷ, Անգոլա, Էկվադոր, Ինդոնեզիա, Իրան, Իրաք, Լիբիա, Նիգերիա, Սաուդիա Արաբիա, Վենեսուելա, Քարար, Քուվեյթ: Կենտրոնակայանը գտնվում է **Վիեննայում:** Կազմակերպության նպատակն է նավթ արդյունահանող և արտահանող անդամ-երկրների շահերի պաշտպանությունը, նավթի վաճառքի միասնական գների սահմանումը և այլն:

**43) Ներկայացուցչություն չունեցող ազգերի կազմակերպություն (ՆՉԱԿ, ՕՀԻ, ՄԿՊՕ)** - կազմակերպությունը ստեղծվել է 1991 թ.: Նախաձեռնողները հիմնականում եղել են Չինական տիրապետության տակ գտնվող ժողովուրդների՝ տիբեթցիների և ույղուրների առաջնորդները: Միջազգային ոչ կառավարական կազմակերպության հիմնական նպատակը սե-

փական պետություն չունեցող բնիկ ժողովուրդների կամ վիճելի և օկուպացված տարածքներում ապրող ժողովուրդների շահերի պաշտպանությունն է: Կազմակերպությունն ունի 52 անդամ՝ Արխագիա, Աշեհ, Ամազիգ (Քերքերիա), Արևելյան (պակաստանյան) Բելուջիստան, Արևմտյան (իրանյան) Բելուջիստան, Արևմտյան Բենգալիա, Արևմտյան Պապուա, Ասորեստան, Արաբստան (Խուզխատան), Աֆրիկաներներ, Բատվակենդ, Բարոտսելենդ, Բրետան, Գիլգիտ-Բալտիստան (Բալավարիստան), Դեզար (Shirazib), Զանգիբար, Տայվան, Իրանյան Թալիչստան, Թուրքմենելի, Իրանյան Քրդստան, Իրաքյան Քրդստան, Լեզգիներ, Կիմեր-կրոմ, Կոստվո, Կորդիլիերա, Հարավային Աղրբեջան, Հարավային Կամերուն, Հարավային Մոլուքյան կղզիներ, Հարատին, Հմննգներ, Ղրիմի բարաներ, Մապուչե, Մասաի, Մորո, Նագալենդ, Ներքին Մոնղոլիա, Չերքեզիա, Չին, Չիտագոնգի լեռնային շրջան, Ռեհորոս, Ռումինիայի հունգարներ (Տրանսիլվանիա), Սավոյա, Սինդ, Սոմալի-լենդ, Սուլու, Վենդա, Ույղուրստան (Արև. Թուրքեստան), Տիբեր, Տրիեստ, Օգանեն, Օգոնի, Օրոմիա: Ծուար-քնակարանը գտնվում է հոլանդական Հաագա քաղաքում: Լրացուցիչ գրասենյակները գտնվում են Բելգիայի մայրաքաղաք Բրյուսելում և շվեյցարական Ժնևում:

44) Զմիացման շարժում (ԶՃ, ՃՀ, ՆԱՄ) - 120 երկրներ (1 եվրոպական, 37 ասիական, 53 աֆրիկյան, 26 ամերիկյան, 3 օվկիանյան) միավորող կազմակերպությունը ստեղծվել է 1961 թ., որը ձևավորվել է ռազմական դաշինքներին մասնակցելուց զերծ մնալու սկզբունքի հիման վրա (շարժման հիմնադրման պահին այդպիսի դաշինքներ էին հանդիսանում ՆԱՏՕ-ն և Վարշավայի պայմանագրի կազմակերպությունը, Բաղդադի պակտը և այլն):

45) Պաշտպանության տարածաշրջանային համակարգ (ՊՏՀ, PCO, RSS) - կազմակերպությունը ստեղծվել է 1982 թ., որի նպատակն է ապահովել անդամ-պետությունների կողեւկտիվ անվտանգությունը, տարերային աղետների հետևանքների վերացումը, թմրանյութերի մաքսանենգության դեմ պայքարը և այլն: Ունի 7 անդամ՝ Անտիպուա և Բարբուդա, Բարբադոս, Գրենադա, Գումինիկա, Սենթ Լյուսիա, Սենթ Վինսենթ և Գրենադիներ, Սենթ Քիրս և Նևիս:

46) Պարսից ծոցի արաբական պետությունների համագործակցության խորհուրդ (ՊԾՎՊՀԽ, CCAGP3, CCASG) - տարածաշրջանային փակ կազմակերպությունը ստեղծվել է 1981 թ.: Պաշտոնական անվանման «Պարսից» բառը բացակայում է, քանի որ արաբական երկրները նախընտրում են այդ ծոցն անվանել Արաբական: Հիմնական կանոնակարգվող և քննարկվող հարցերն են՝ տնտեսական, սոցիալական, ֆինանսական, ձեռնարկատիրության, մշակույթի և կրթության, առողջապահության հետ կապված թեմաները: Կենտրոնակայանը գտնվում է Սաույան Արարիայի մայրաքաղաք Ար Ռիադում: Կազմակերպությունն ունի անդամ 6 անդամ՝ ԱՄԷ, Բահրեյն, Սաույան Արարիա, Բարար, Քուվեյթ, Օման:

**47) Պլան Կողմքը (ՊԿ, PC)** - սոցիալ տնտեսական զարգացման համար համախմբված միջազգային կազմակերպությունը ստեղծվել է 1950 թ.: Այն ունի 27 անդամ-պետություն՝ ԱՄՆ, Ավստրալիա, Աֆղանստան, Բանգլադեշ, Բհուտան, Բրունեյ, Թայլանդ, Ինդոնեզիա, Իրան, Լաոս, Կորեայի Հանրապետություն, Հնդկաստան, ճապոնիա, Մալայզիա, Մալթիվներ, Մյանմա, Մոնղոլիա, Նեպալ, Նոր Զելանդիա, Շրի Լանկա, Պակիստան, Պապուա Նոր Գվինեա, Սաուդյան Արաբիա, Սինգապոր, Վիետնամ, Ֆիլիպիններ, Ֆիջի:

**48) Պորտուգալակեզու երկրների համագործակցություն (ՊԵՀ, CPLC, CPLP)** - ստեղծվել է 1996 թ.-ին, որը միավորում է այն երկրներին, որտեղ պորտուգալերենը համարվում է պաշտոնական պետական լեզու: Անդամներն են Պորտուգալիան և իր նախկին գաղութները՝ Անգոլան, Բրազիլիան, Գվինեա-Բիսասուն, Կարու Վերդեն, Մոզամբիկը, Սան Թոմե և Պրինսիպին, Թիմոր Լեշտին: Ծոտար-քնակարանը գտնվում է Պորտուգալիայի մայրաքաղաք Լիսաբոնում:

**49) ՈՒԻ խումբ (ՈԽ, GR, CPLP)** - ստեղծվել է 1986 թ.՝ տարածաշրջանային և միջազգային հիմնախնդիրների վերաբերյալ միասնական լատինաամերիկյան դիրքորոշում ձևավորելու նպատակով: Կազմակերպությունն ունի 25 անդամ՝ 24 պետություն և 1 կազմակերպություն՝ Արգենտինա, Բելիզ, Բոլիվիա, Բրազիլիա, Գայանա, Գվատեմալա, Դոմինիկյան Հանրապետություն, Էլ Սալվադոր, Էկվադոր, Կոլումբիա, Կոստա Ռիկա, Կուրսա, Հաիթի, Հոնդուրաս, Մեքսիկա, Նիկարագուա, Չիլի, Պանամա, Պարագվայ, Պերու, Չամայկա, Սուրինամ, Վենեսուելա, Ուրուգվայ, ինչպես նաև Կարիբյան համագործակցությունն՝ իր 15 անդամ-պետություններով:

**50) Սևծովյան տնտեսական համագործակցություն (ՍԾՏՀ, OCEC, BSEC)** - միջկառավարական կազմակերպությունը ստեղծվել է 1999 թ., որը միավորում է մերձսև ծովվյան և Հարավյային Բալկանների երկրները: Կազմակերպությունն ունի 12 անդամ՝ Ադրբեյջան, Ալբանիա, Բուլղարիա, Թուրքիա, Հայաստան, Հունաստան, Մոլդովա, Ռումինիա, Ռուսաստան, Սերբիա, Վրաստան, Ուկրաինա: Ծոտար-քնակարանը գտնվում է Թուրքիայի Ստամբուլ քաղաքում: Կազմակերպության հիմնական նպատակն է սևծովյան տարածաշրջանում ապահովել կայունություն, տնտեսական զարգացում, բարգավաճում և խաղաղություն:

**51) Տնտեսական համագործակցության և զարգացման կազմակերպություն (ՏՀԶԿ, OECR, OECD)** - ստեղծվել է 1947 թ., որպես մի շարք եվրոպական երկրների տնտեսական հարթակ և այն ժամանակ կոչվում էր «Տնտեսական համագործակցության եվրոպական կազմակերպություն»: Ներկայումս այն սոցիալ-տնտեսական համագործակցությունը խթանելու համար է, որին անդամակցում է 35 պետություն: Կենտրոնակայանը գտնվում է Փարիզում:

**52) Եվրասիական տնտեսական միություն (ԵՏՄ, ԵԱՅ, ԵԵՍ) - միջազգային ինտեգրացիոն տնտեսական միավորումը, որը ստեղծվել է Եվրասիական տնտեսական միության մաքսային միության հիման վրա, ստեղծվել է 2014 թ.-ի մայիսի 29-ին և ուժի մեջ է մտել 2015 թ. հունվարի 1-ից: Հիմնական նպատակը անդամ-պետությունների տնտեսության ամրապնդումն է և մերձեցումը՝ համաշխարհային շուկայում մրցակցությանը դիմագրավելու համար: Կազմակերպությունն ունի **5** անդամ՝ **Բելառուս, Հայաստան, Ղազխատան, Ղրղզստան, Առողջապահություն**: Կենտրոնական գրասենյակը գտնվում է ՌԴ մայրաքաղաք **Մոսկվայում**:**

**53) Ֆրանկոֆոնիա (La Francophonie) - ֆրանսախոս երկրների միջազգային կազմակերպությունը ստեղծվել է 1970 թ.: Կազմակերպության անդամ դառնալու գլխավոր չափանիշը ոչ թե այս կամ այն երկրում բնակչության ֆրանսերեն լեզվին տիրապետելու աստիճանն է, այլ մշակութային կապը Ֆրանսիայի հետ: Կազմակերպությունն ունի **54 անդամ-պետություն**, այդ թվում՝ **Հայաստանը**: Կենտրոնական գրասենյակը գտնվում է **Փարիզում**:**

**68. Անկախ պետությունների պետական դրոշները և զինանշանները**



ԱՃԽԱՐՀԵՔ ԹՎԵՐՈՎ ՈՒ ՓԱՍՏԵՐՈՎ



Գվատեմալա



Գվինեա



Գվինեա-Բիսաու



Գրենադա



Դանիա



Դոմինիկական  
Հանրապետություն



Դոմինիկանական  
Հանրապետություն



Եգիպտոս



Եթովպիա



Եման



Զամբիա



Զիմբաբվե



Էլ-Սալվադօր



Էկվադօր



Էստոնիա



Էրիթրեա



Թագավորություն  
արևելյան Տիմոր



Թունիս



Թուրքիա



Թուրքմենստան



Ինդոնեզիա



Իռլանդիա



Իսլանդիա



Իսպանիա



Իսրայել



Իտալիա



Իրան



Իրաք



Լաոս



Լառավագաց



Լեհաստան



Լեսոտո



Լեբանոն



Լիբերիա




ԱՃԽԱՌՀԲ ԹՎԵՐՈՎԸ ՈՒ ՓԱՍՏԵՐՈՎԸ



ՄԱԼԱՎԻ



ՄԱԼԵՎ



ՄԱԼՏԱ



ՄԱԼԻ



ՄԱԿԵԴՈՆԻԱ



ՄԱՐԻՒ



ՄԱՐԻԱՆԻ



ՄԱՐՈՒՅԱՆ ԿՊՀՆԵՐ



ՄԱՐՈԿՈ



ՄԱՍԱՅԱ ԹՎԱԿԱՐՈՒԹՅՈՒՆ



ՄԵՔՍԻԿԱ



ՄԵԿՐՈՆԵԶԻԱ



ՄՅԱՆՄԱՐ



ՄՈԶԱՄԵԲ



ՄՈԼԴՈՎԱ



ՄՈՆԱԿՈ



ՄՈՆԳՈԼԻԱ



ՆԱՄԻԵՐԱ



ՆԵՊԱԼ



ՆԻԳԵՐ



ՆԻԳԵՐԻԱ



ՆԻՒՐԼԱՆԴՆԵՐ



ՆԻԿԱՐԱԳՈՒ



ՆՈՐ ԶԵԼԱՆԴԻԱ



ՆՈՐՎԵԳԻԱ



ՇՎԵԴԻԱ



ՇՎԵՅՑԱՐԻԱ



ԾՐԻ ԼԱՏՎԱ



ՌԱԴ



ՉԵՍՆԻ



ՉԵՇՆՈԳՈՐԻԱ



ՉԻԼԻ



ՉԻՆԱՍՏԱՆ



ՊԱԼԱ



ԱՃԽԱՐՀԵՔ ԹՎԵՐՈՎԸ ՈՒ ՓԱՍՏԵՐՈՎԸ



ՎԻԵΤՆԱՄ



ՎՐԱՍՏԱՆ



ՏԱՆZԱՆԻԱ



ՏԱՋԻԿԻՍՏԱՆ



ՏՈԳՈ



ՏՈՆԳԱ



ՏՐԻՆԻԴԱԴ ԵՎ ՏՈԲAGO



ՏՈՒՆՎԱԼՈՒ



ՈՒԳՈՎԱՐԱ



ՈՒԳՐԵԿՈՍՏԱՆ



ՈՒԿՐԱԻՆԱ



ՈՒՐՈՒԳՎԱՅ



ՔԱՊԻՐ



ՔԵՆԵՏԻ



ՔՈՒՊԵՑԹ



ՕՄԱՆ



ՖԻԼԻՊԻՆՆԵՐ



ՖԻՆԼԱՆԴԻԱ



ՖԻՋԻ



ՖՐԱՆՍԻԱ

## ՄԱՍ 6. ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ

**69. Հայաստանի Հանրապետության և Արցախի Հանրապետության ամենաբարձր լեռնազագարները (3300 մ և ավելի բարձրություն ունեցող)**

| <i>Հ/h</i> | <i>Lեռնազագարը</i>   | <i>Lեռնային համակարգը</i> | <i>Բարձրությունը, մ</i>  |
|------------|----------------------|---------------------------|--|
